

2491

638

~~XIII. P 034~~

Hgt

1632

1566

1 1/2



161

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ

ԳՊՐՈՅՑԱՅ ԳԱՍԵՐ

1879 ՏԱՐԻՈՅՆ ՀԱՅՈՒ

6491



ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՈՒՆԻՒ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ԶԱԿՈՒ ՊՈՅԱՃԵԱՆ

1878

ՅՈՒՂՈՅԻՄԴԱ

ՎՃՄՔ ՑԺՑՈՎՈՔ

ՀՅԱՆԻՆԻ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱՄԱՊՐԵԿԱ ԽՐԵՆ-ՇԵՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Այս գիրքը որ 1879 ի համար Կիրակնօրեայ դըպոցի դասերու հարցումները կը պարունակէ՝ ընծայելով Աւետարանական եկեղեցեաց, հարկաւոր կը համարինք դարձեալ այն դիտողութիւններն ընել դոր անցեալ տարուան դասերուն յառաջաբանին մէջ ըրինք, եւ որ համառոտիւ հետեւեալներն են:

1. Դասերը խնամով սորվուին թէ հանապազօրեայ եւ թէ Կիրակնօրեայ դպրոցաց մէջ :

2. Բերնուց սորվելու համար նշանակուած համարներն աղէկ միտք առնուին, քանզի լաւ է պատանեկաց միտքերը լեցունել առատապէս Աստուծոյ խօսքին պատգամներովը :

3. Ասկեղին համարը զրուի սեւ տախտակի կամ մեծկակ թուղթի մը վրայ խոչոր գիրերով եւ զրուի դպրոցին մէջ յայտնի տեղ մը, եւ դպրոցին վերակացուն կամ քարոզիչը համառոտիւ մեկնէ աշակերտաց այն խօսքին իմաստը եւ յորդորէ զանոնք պահել անոր պատուէրը :

4. Մէկ կամ քանի մը աշակերտաց առաջարկուի ամէն շարթուան դասը համառոտիւ զրել ըստ օրինակին որ տրուած է 1878 ի դասագիրքին մէջ, որպէս զի այն զրուածը յաջորդ շարթուն մէջ կարդացուի, երբ կը բացուի դպրոցը :

Այս տարուան հարցումներն աւելի շատ են քան

անցեալ տարուանները , եւ անոնց շատը թողուած
է անպատասխանի , որպէս զի վարժապետք եւ
աշակերտք ստիպուին անձամբ խորհիլ . Նաեւ զի-
տողութիւններ աւելցուած են , իւրաքանչիւր գասի
մէջ գտնուած գործնական իմաստներէն ումանց վրայ
աշակերտաց ուշադրութիւնը ձգելու համար :

Դարձեալ կ'ազօթենք որ այս գրքոյկը տարածուի
Սուրբ Հոգիէն օրհնուած , եւ ըլլայ միջոց , Առու-
ծով , շատ հոգիներ առաջնորդելու ի փրկութիւն :

Ովհապահաց մասնար մատուց յանցու զար
և մարդուածանմ մասնանմ որ ու քիչը չի
բաժարաբանմա՞ Ձի միշտիցու խոնանի զարար . 1

Չի մասնաւ բաժարաբանմի Ձի ու
առ համագումար զանա աշխարհու ըշամքու . Չ
այս չ առ հրանց , միաւու զանի վերա մինչդա
շամքու աշխարհու ըշամքու զարար զարման

: Շիրդմանաբար միջան
նախ զարարաւ ու զարդ զարար միջմաս . Ե

կառը ու խորհուրդներն ակրոն բաժեն
աղջկէ միջոցք ու ու զան վանակ Ձի միջոցքը
առ նման արտօնուած զարարաւ նախ ճաշաք
զարմաք նշարդու ու զարար միջան մը շատութիւն

: Շիրդմանաբար զան վեհար
կաթարաբառ զարարմաք զի վեհար նախ թէն . Ե
այս ուու յեց միջուունու զար մատակաց միջա
: Ձի միջրիբառար կ 8731 չ նաւու որ միջան
Ձի մասնաւ բարիու զարար մը զի սկզբու

: զարդու վարպադ ով ուզ , վարպադուի
մաց ու ուու զարար միջմանաբար մատուց ու ու

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ

ԴՊՐՈՑԱՅ ԴԱՍԵՐ

1879 ՏԱՐԻՈՅՆ ՀԱՄԱՅՆ

ԱՌԱՋԻՆ ԵՐԱՄՄԵԱՅ ԴԱՍԵՐ

Ա. ԴԱՍ, ՅՈՒՆՈՒՄ 5

ԵՐԿՐՈՐԴ Մաճարը

Եղբ. գ. 1—13

ԲԵՐԵԿԵ- Առքվէ 10—13 համարները:

Ուկեղին համար : «Ու բոլոր ժողովուրդը մեծացայն աղաղակելով Տէրը օրհնեցին՝ Տէրոջը տանը հիմը զբուելուն համար : » Համար 11 :

1. Ո՞վ շինեց առաջին տաճարը : Գ. Թագ. Զ. 14 :

2. Ո՞րչափ ժամանակի մէջ շինեց Սողոմոն առաջին տաճարը : Գ. Թագ. Զ. 38 :

3. Առաջին անգամ ե՞րբ կողոպուեցաւ այս տաճարը : Գ. Թագ. ԺԴ. 25, 26 :

4. Այս տաճարը ե՞րբ եւ որո՞ւ ձեռքով իսպառաւերեցաւ : Բ. Մնաց. 1, 2, 7, 18, 19 :

5. Ժողովուրդը ո՞ւր տարուեցաւ գերի : Գլ. Բ. 1 :
6. Քանի՞ տարի աւերակ մնաց Յուդայի երկիրը :
- Բ Մնաց . 1.2. 21 :
7. Ասուած ի՞նչ ըստ առաջուց թէ պիտի ընէր եօթանասուն տարիներուն վերջը հաբելոնի թագաւորութեան : Երեմ . Ի. 42 :
8. Բաքելոնի թագաւորութիւնը որո՞ւ ձեռք անցաւ : Բ Մնաց . 1.2. 20 :
9. Ո՞վ նախ հրաման ըրաւ նորէն շինել տաճարը : Գլ. Ա. 1, 2 :
10. Ի՞նչ ընել հրամայեց Հրէից : Գլ. Ա. 3 :
11. Ո՞վ հնազանդեցաւ կիւրոսի հրամանին : Գլ. Ա. 5 :
12. Երուսաղէմ դարձողներուն դլխաւորն ո՞վ էր : Գլ. Բ. 2: Անդ. Բ. 24 :
13. Ո՞րչափ մարդ զնաց Զօրաբարելի հետ : Գլ. Բ. 64, 65 :
14. Ի՞նչ պիտի ընէին անոնք որ չդարձան Երուսաղէմ : Գլ. Ա. 4 :
15. Երուսաղէմ դարձողները բան մը չտուի՞ն : Գլ. Բ. 68, 69 :
16. Փողովուրդը ո՞ւր բնակեցաւ : Գլ. Բ. 70 :
17. Նախ Ե՞րբ ժողովուեցան Երուսաղէմ : Հմր. 1 :
18. Նախ տաճարին որ մասը շինեցին Զօրաբարէլ եւ անոր ընկերները : Հմր. 2 :
19. Ի՞նչ կրօնական պաշտօն կատարել սկսան : Հմր. 3 :
20. Նախ ի՞նչ տօն կատարեցին : Հմր. 4 :
21. Այնուհետեւ ի՞նչ տօներ կատարուեցան միշտ, եւ ի՞նչ զոհեր կը մատուցուէին ամէն օր : Հմր. 5, 6 :

22. Տաճարին հիմը դրուած էր այն ատեն : Հմր. 6 :
23. Տաճարին շինութեանը համար ի՞նչ պատրաստութիւններ եղած էին : Հմր. 7 :
24. Երկրորդ տարին ի՞նչ դործուեցաւ : Հմր. 8, 9 :
25. Ի՞նչ արարողութիւններով դրուեցաւ տաճարին հիմը : Հմր. 10, 11 :
26. Բաց ուրախութեան ձայներէն ուրիշ ի՞նչ ձայներ կը լսուէին : Հմր. 12, 13 :
27. Ծերերն ի՞նչներ համար կու լային : Անդ. Բ. 3 :
28. Ի՞նչ աւերեալ տաճար շինեց Քրիստոս : Յով. Բ. 21 :
29. Ասով Քրիստոս ի՞նչ բան կատարեց : Ա. Թես. Դ. 13 :

Այս դասին պատմութիւնը համառօտիւ
կրնա՞ն կրնել :

Մանէն-Եւ-Ն-

- (3) Սողոմոնի տաճարը Երեսուն եւ Երեք տարի միայն պահեց իր նախկին փառքը : Տես Գ. Թագ. ԺԴ. 25, 26 :
- (4) Այն տաճարը տեւեց իբր 424 տարի :
- (6) Եօթանասուն տարին կը հաշուուի Յովակիմայ գերութենէն, Բ Մնաց . 1.2. 5, 6 : Տաճարին աւերումէն, Բ Մնաց . 1.2. 19, մինչեւ Զօրաբարելի դարձը յիսուն եւ երկու տարի միայն էր :
- (12) Զօրաբարէլ երրայական բառ է, եւ կը նշանակէ «Բարելոն ծնած» : Անոր քաղղէարէն մնունն էր Սասրասար : Տես Գլ. Ա. 8, 14. Դաւթի սերունդէն էր եւ Քրիստոսի նախնիներէն : Մատթ . Ա.

42. Վուկ. գ. 27. Խնչպէս որ առաջին տաճարը «Սողոմոնեան» կոչուեցաւ, նոյնպէս երկրորդը՝ «Զօրաբարելեան» :

(13) Տան հաղարիւ չափ աւելի է քան այս գլխոյն ուրիշ համարներուն մէջ տրուած թուոյն գումարը։ Հոս համրուածները թերեւս կը վերաբերէին Յուղայի եւ Յենիամինի ցեղերուն։ Եւ միւս ցեղերէն ալ բաւական մարդիկ յարեցան ասոնց, եւ այնպէս այս թիւը լեցաւ։

(17) Դարձան Նրուսաղէմ գարնան, եւ քանի մը ամիս անցուցին իրենց արտերը ցանելով եւ իրենց համար բնակութեան տեղեր պատրաստելով։

(18) Կը փափաքէին որչափ հսար էր կանուխ սկսիլ Աստուծոյ պաշտօնը։

(19) Առ ահի թշնամեաց շտապով շինեցին սեղանը ուր որ հնոյն հիմը դեռ կը մնար։

(20) Այս տօնը կը կատարուէր յետ հնձոց, ուստի եւ կը կոչուէր «Հնձելու տօն»։ Ել. ԻԳ. 16։

(27) Այս տաճարը քան զՍողոմոնին տաճարը մնձ էր, բայց մեծագործութեան եւ շքեղութեան կողմանէ, քան զայն շատ ստորին։

Դիրուս-Ռէնտ

Նրբ Աստուած կը խնդրէ մենէ մեր կեանքը տալ անոր գործին, ուրախութեամբ տալու ենք։ — Մեր կեանքը տալէն ետքը՝ պատրաստ ըլլալու ենք տալ նաեւ մեր գոյքը։ — Եկեղեցի շինելէն առաջ սկըսելու ենք Քրիստոսի պաշտօնը։ Բնակարան շինելէն առաջ սկսելու ենք ընտանիկան աղօթք կատարել։ — Լաւ է բործել եւ կատարուած բարի գործի մը

համար ուրախանալ, քան նստիլ եւ լալոր անցեալ օրերու փառքը նորիէն պիտի չդառնայ մեղի։

Բ. ԴԱՍ, ՅՈՒՆՈՒԱՐ 42

Նաւակատիքը

Եղբ. Զ. 14—22

Բէրնուց սոբէ 19—22 համարներ։

Ունչէն համար. «Զէ՞ք զիտեր որ Աստուծոյ տաճար էք դուք, եւ Աստուծոյ Հոգին ձեր մէջը բնակած է։» Ա. Կորնթ. Գ. 16։

1. Ի՞նչ առաջարկութիւն ըրին սմանք Զօրաբարելի։ Գլ. Դ. 1, 2։

2. Զօրաբարէլինչ պատասխան տուաւ. Գլ. Դ. 3։

3. Անատեն ի՞նչ ըրաւ երկրին ժողովուրդը. Գլ. Դ. 4, 5։

4. Ի՞նչ նամակ դրկեցին Պարսից Արտաշէս թագաւորին։ Գլ. Դ. 11—23։

5. Եշնքը ո՞րչափ ատեն արդելուեցաւ. Գլ. Դ. 24։

6. Ի՞նչ մարդարէներ ելան այն ատեն. Գլ. Ե. 1։

7. Աստուած ի՞նչ ընել հրամայեց անոնց։ Անգ. Ա. 7, 8։

8. Մեղադրեց Աստուած ժողովուրդը որ այնչափ ուշացուցին շինել Տէրոջը տունը։ Անգ. Ա. 2—6։

9. Ընդդիմութիւն տեսան երբ երկրորդ անգամ շինելու փորձ ըրին։ Գլ. Ե. 3։

40. Անոնց հակառակորդներն ի՞նչ նամակ գրեցին
Պարսից թագաւորին : Գլ. Ա . 6—47 :
41. Այս նամակին ի՞նչ պատասխան տուաւ թա-
գաւորը : Հմր. 6, 7 :
42. Եինութեան գործին մէջ անոնց ի՞նչ օգնու-
թիւն պիտի մատուցուէր : Հմր. 8—10 :
43. Եթէ մէկը թագաւորին այս հրամանին դէմ
կենար, ի՞նչ պատիժ պիտի կրէր : Հմր. 11 :
44. Եթէ թագաւոր մը այս տաճարը կործանելու
յանդզնէր, ի՞նչ անէծք պիտի գար անոր վրայ :
Հմր. 12 :
45. Ի՞նչ օգնութեամբ յաջողեցաւ ժողովուրդը եւ
շնչքը զլուխ հանեց : Հմր. 14 :
46. Գործը ե՞րբ աւարտեցաւ : Հմր. 15 :
47. Նաւակատիքն ի՞նչպէս կատարուեցաւ : Հմր. 16 :
48. Այս առթիւ ո՞րչափ անասուն զոհուեցաւ :
Հմր. 17 :
49. Քահանայից համար ի՞նչ կարգ սահմանուած
էր : Հմր. 18 :
50. Սուաջին ամսուան մէջ ի՞նչ տօն կատարուե-
ցաւ : Հմր. 19 :
51. Ո՞վ սրբուեցաւ այս առթիւ : Հմր. 20, 21 :
52. Տօնը ո՞րչափ տեւեց : Հմր. 22 :
53. Ի՞նչո՞ւ համար ուրախ էին :
54. Ի՞նչ բանով զօրացնելու ենք միշտ մեր հա-
ւատըը : Առակ. ԻԱ. 1 :
55. Մենէ ամէն մէկուն համար Աստուած ի՞նչ
տաճար շինեց, եւ ի՞նչպէս դործածելու ենք այս
տաճարը : Ա. Կորնթ. Զ . 19, 20 :

Այս դասին պատմութիւնը լինա՞ս համա-
ռութիւն կրկնել :

Ծանօթութեան +

(1) Այս մարդիկ կռապաշտ էին : Ասոնք Ասորես-
տանի թագաւորին հրամանաւ եկած էին Սամարիոյ
քաղաքները, եւ յետոյ քահանաներէն սորվելով
ընդունեցան ճշմարիտ կրօնքը, բայց իրենց կռա-
պաշտական սովորութիւններէն ոմանք դեռ կը
պահէին Տես Դ. Թագ. Ճէ. 24—41 : Զօրաբարելի
հետ եղած այս վէճէն սկսաւ Հրէից եւ Սամարա-
ցւոց մէջտեղ ատելութիւնը, որ ակնարկուած է
Յովի. Դ . 9 համարին մէջ :

(2) Զօրաբարէլ տեսաւ որ այսպիսի զեղծ կռա-
պաշտից հետ հաղորդակցութիւն ընելն աւելի գէշ
պիտի ընէր ժողովուրդը քան բարի :

(3) Իրը վեշտասան ամ :

(8) Թագաւորին հրամանաւ սպիակեալ էին դադ-
րեցնել շինութիւնը, բայց անոնց հոգեւոր ցրտու-
թիւնն էր որ ետ բռնեց զանոնք գործը նորէն
սկսելէ :


(11) Անատեն կը տիրէր նոր եւ բարեկամ թագաւոր
մը, որ կիւրոսի ոգւովլ քննեց խնդիրը եւ նպաս-
տաւոր պատասխան մը տուաւ :

(16) Հիմը դրուելէն իրը քսանումէկ տարի ետքը :

Դէպութեան +

Զարերու հետ ընկերակցութիւնը տկարութիւն
կու տայ մահաւանդ քան զօրութիւն : — Բարի գործ
2

մը զանց առնելու չենք , սա պատճառաւ որ անդամ
մը ստիպուեցանք թողուլ զայս : Արութիւն եւ յա-
րատեւութիւն յաջողութեամբ կը պսակուին :



Գ. ԴԱՍ , ՅՈՒՆՈՒԱՐ 49

ՆԵԿԻՄԻԱՅԻ պաշտօնը

Նէկմ . Բ. 1—8

Բէրնուց սորչէ 4—8 համարները :

Ուկելոն համար . « Քու բարեսիրութեամբդ Ախօ-
նին բարիք ըրէ , Երուսաղեմին պարիսպները շինէ : »
Սաղմ . ԾԱ . 18 :

1. Նէկմիա մէր էր , եւ ի՞նչ էր անոր պաշտօնը,
ԳԼ . Ա . 11 :
2. Երուսաղեմի վրայ ի՞նչ լսեց : ԳԼ . Ա . 2, 3 :
3. Երբ այս լսեց , ի՞նչ ըրաւ : ԳԼ . Ա . 4 :
4. Որո՞ւ համար աղօթեց : ԳԼ . Ա . 6 :
5. Ի՞նչ խոստովանութիւն ըրաւ : ԳԼ . Ա . 7 :
6. Ի՞նչ խոստում յիշեց : ԳԼ . Ա . 8, 9 :
7. Անոր աղօթքին գլխաւոր նպատակն ի՞նչ էր :
ԳԼ . Ա . 11 :

8. Թագաւորին ուշադրութիւնն ի՞նչպէս դրա-
ւուեցաւ : Հմր . 4, 2 :

9. Նէկմիա ինչու համար կը վախնար :

10. Եր տրամութիւնն ի՞նչպէս հասկցուց թագա-
ւորին : Հմր . 3 :

11. Թագաւորին ի՞նչ պատասխան տուաւ : Հմր .
4, առաջին մասը :
12. Նէկմիա նորէն թագաւորին խօսելէն առաջ
ի՞նչ ըրաւ : Հմր . 4, վերջին մասը :
13. Ի՞նչ բան խնդրեց :
14. Թագաւորին ի՞նչպէս ընդունեց անոր խնդրը :
Հմր . 6 :
15. Այն ատեն թագաւորին քով ո՞վ նստած էր :
16. Ուրիշ ի՞նչ բան խնդրեց Նէկմիա : Հմր . 7, 8 :
17. Թագաւորը չնորհեց ի՞նչ որ խնդրեց Նէկմիա :
18. Որո՞ւ օրհնութեամբ յաջողեցաւ Նէկմիա :
19. Թագաւորին ի՞նչ պաշտօնի կարգեց զնէկմիա :
ԳԼ . Ե . 14 :

20. Ճամբուն համար ի՞նչ պատրաստութեամբ
զրկեց թագաւորին զնէկմիա Երուսաղէմ : Հմր . 9 :
21. Նէկմիա նախ ի՞նչ ըրաւ Երուսաղէմ : Հմր .
12—16 :
22. Ի՞նչ ընել առաջարկեց ժողովրդեան : Հմր . 17 :
23. Ի՞նչպէս քաջալերեց զանոնք : Հմր . 18 :
24. Ի՞նչ բանի համար աշխատելու եւ աղօթելու
ենք : Սաղմ . ԾԱ . 18 :

Այս դասին պատմութիւնը կրնա՞ն համա-
ռոտիւ կրկնել :

Ծանօթութիւն +

- (1) Շուշան անսատեն մայրաքաղաք էր Պարսից :
- (2) Զօրաբարելի ձեռօք տաճարին շինուելէն ի
վեր իբր եօթանասուն տարի անցած էր , տակաւին
Երուսաղեմի պարիսպները շինուած չէին :

(7) Նէեմիա կը յուսար թագաւորին հրամանաւ դրուխ հանել իր նպատակը :

(9) Կը վախնար թագաւորին բարկութենէն , բայց քաջութեամբ որոշեց պատեհ ժամանակ մը ձեռք առնել . այս պատեհութիւնը յանկարծ զտաւ , եւ իր խնդիրքը յայտնեց թագաւորին :

(15) Ոմանք կը կարծեն թէ այս թագուհին Եսթեր էր , որ թերեւս Արտաշիսի մայրն էր :

Դէրութ-Եւան

Մեր բոլոր նպատակներուն մէջ խնդրելու ենք նախ Աստուծոյ օդնութիւնը եւ առաջնորդութիւնը : — Թէեւ կորսուելու վտանգ ըլլայ , համարձակութեամբ մատուցանելու ենք մեր աղերսը թագաւորաց որոնց օգնութեանը կարօտ ենք : — Հաւատով եղած անկեղծ ջանքը չի կրնար ի դերեւ ելլեւ :

Դ. Դ. Ս. , ՅՈՒՆՈՒԱՐ 26

Եվնութեան ընդհատումը

Նէեմ. Դ. 7—18

Բէ՛նուց սուլլէ 15—18 հայտնելը :

Ուիւլն հայոք . «Բայց մենք մեր Աստուծոյն աղօթք ըրինք , ու մեզ անոնցմէ պաշտպանելու համար ցորեկ ու զիշեր պնոնց դէմ պահապաներ դրինք ։» Հմբ. 9 :

4. Պարոպին նորոգութեանը համար նէեմիա ի՞նչ կարգադրութիւն ըրաւ : Գլ. Գ. 23 :

5. Հրեայք ի՞նչ ընդդիմութեանց հանդիսեցան : Հմբ. 4—3 :

3. Եկնութիւնը դադրեցուցի՞ն : Հմբ. 6 :

4. Անատեն նէեմիայի թշնամիներն ի՞նչ ըրին : Հմբ. 7, 8 :

5. Սանաբաղատ ի՞նչ նենդաւոր հրաւէր դրկեց առ նէեմիա : Գլ. Զ. 2 :

6. Նէեմիա ի՞նչ պատասխան տուաւ : Գլ. Զ. 3 :

7. Սանաբաղատ ի՞նչ ամբաստանութեամբ ջանաց վախցնել զնէեմիա : Գլ. Զ. 5—7 :

8. Սանաբաղատ յետոյ ի՞նչ որոդայիթ լարեց : Գլ. Զ. 10, 12 :

9. Սանաբաղատայ նենդութիւնը յաջողեցաւ : Գլ. Զ. 8, 11 :

10. Նէեմիայի թշնամիներն ՅՌԵԴԱՅԻ նշանաւոր մարդոց հետ ի՞նչ դաւաճանութիւն նիւթեցին : Գլ. Զ. 17—19 :

11. Ի՞նչ հնարք խորհեցան զնէեմիա յանկարծ բռնելու : Հմբ. 11 :

12. Հրեայք ի՞նչ դժուարութիւններ ցուցուցին դորձին դէմ : Հմբ. 10, 12 :

13. Անատեն նէեմիա ի՞նչ ըրաւ : Հմբ. 9 :

14. Ծողովուրզը վտանգէն պահելու համար ի՞նչ կարգադրութիւն ըրաւ : Հմբ. 13 :

15. Ի՞նչպէս քաջալերեց զանոնք : Հմբ. 14 :

16. Ի՞նչ բան մանաւանդ քաջալերեց զանոնք դորձ յառաջ տանելու : Հմբ. 15 :

17. Ո՞րչափ մարդ կը գործէր , եւ ո՞րչափ մարդ ողանականութիւն կ'ընէր : Հմբ. 16 :

18. Գործաւորք ի՞նչպէս պատրաստ պահուեցան
կռուելու : Հմբ. 17, 18 :
19. Փողահարն ո՞ւր էր : Հմբ. 18 :
20. Փողինչու համար կը գարնուէր : Հմբ. 19, 20 :
21. Ի՞նչ ջանքով կը դործէր ժողովուրդը : Հմբ.
21—23 :
22. Պարիսպը քանի՞ օրուան մէջ աւարտեցաւ :
Դլ. Զ. 15 :
23. Այս մեծ յաջողութիւնն ի՞նչ ազդեցութիւն
ըրաւ անոնց թշնամիներուն : Դլ. Զ. 16 :

Այս դասին պատմութիւնը կլինա՞ն համա-
ռօտիւ կրկնել :

Ծանօթա-Շնէնա+

(1) Իւրաքանչիւր ընտանեաց յանձնուեցաւ պարս-
պին մէկ մասը շինել, եւ ընդհանրապէս իւրաքան-
չիւր ընտանեաց մասն իր տան առջեւն էր :

(2) Սանաբաղատ հաւանականապէս զլիսաւոր պաշ-
տօնեայ էր «Սամարիոյ զօրքին» մէջ, եւ թէ՛ ինք,
թէ անոր ընկերները կը նախանձէին նէեմիայի
զօրութեան եւ յաջողութեան վրայ :

(3) Նէեմիա հաւանականապէս պիտի սպանուէր,
եթէ այն հրաւէրին անսար :

(7, 8) Եթէ Սանաբաղատ յաջողած ըլլար վախ-
ցընել զնէեմիա, դիւրաւ դադրեցուցած կ'ըլլար
դործը :

Դիրո՞ղ-Շնէնա+

Խմաստուն կարգադրութեամբ մեծ գործ մը կրնայ
քիչ մարդով եւ չատ կարճ ժամանակի մէջ դլուխ

հանուիլ : — Սատանայի սկաշտօնեաներն ամէն միջոց
կը գործածեն արգելել բարի գործ մը : — Անկեղծ
աղօթք, անխոնչ արթնութիւն, անդադար աշխա-
տութիւն, այս բաներն են որովք կրնանք խայտա-
ռակել մեր թշնամիները եւ շինել դոգեւող Սիոն :

— ◊◊◊ ◊

Ե. ԴԱՍ, ՓԵՏՐՈՒԱՐ 2

Օրինաց ընթերցումը

Նէեմ. Ը. 1—8

Բէքնուց սորչէ 1—3 համարները :

Ուէլուն համար . Ճիու խօսքերուդ յայտնութիւը լոյս
կու տայ, ու միամիտները իմաստուն կ'ընէ : » Սղմ.
Ճգթ. 130 :

1. Ժողովուրդն ո՞ւր ժողվուեցաւ . Հմբ. 1 :
2. Ի՞նչ ինդիեցին Եղբաս դպրէն :
3. Եղբաս ո՞վ էր : Եզ. 6, 11 :
4. Ե՞րբ ելաւ Երուսաղէմ, եւ ի՞նչ նպատակաւ :
Եզր. Ե. 8—10 :

5. Թագաւորն ի՞նչ արտօնութիւն տուած էր Եղ-
բասայ : Եզր. Ե. 25, 26 :

6. Եղբաս օրէնքը ե՞րբ անոնց առջեւ բերաւ :
Հմբ. 2 :

7. Եօթներորդ ամիաը տարւոյն ո՞ր ամիսն էր :
Պտ. Դրեթէ հոկտեմբեր :

8. Այն օրուան համար ի՞նչ սահմանուած էր
Մոլսիսի օրէնքին մէջ : Դեւտ. Կդ. 23—25 :

9. Այս ժողովը որոնցմէ՞ կը բաղկանար : Հմր. 2:
10. Միթէ ասկէ կը հասկցուի՞ թէ տղայք որ հաս կընալու կարողութիւն չունին , հեռու պահուելու են կրօնական պաշտօններէ :
11. Եղրաս ո՞րչափ ատեն կարգաց : Հմր. 3 :
12. Ժողովուրդն ի՞նչպէս լսեց : Հմր. 3 :
13. Եղրաս ո՞ւր կայնեցաւ : Հմր. 4 :
14. Անոր քով որո՞նք կայնեցան իբրև օգնական : Հմր. 4:
15. Երբ Եղրաս օրինաց դիրքը բացաւ , ժողովուրդն ի՞նչ նշան ցուցուց յարգութեան : Հմր. 5:
16. Եղրաս ի՞նչ աղօթք մատոյց , եւ ժողովուրդն ի՞նչ պատասխան տուաւ : Հմր. 6:
17. Ո՞վ կը հասկցնէր օրէնքը ժողովրդեան : Հմր. 7:
18. Օրէնքը կարդալու ատեն ի՞նչ բանի հոգ կը տանէին : Հմր. 8:
19. Անհասկնալի կերպով խօսելու վրայ Պօղոս ի՞նչ կ'ըսէ : Ա. Կոր. ԺԴ. 8, 9:
20. Սուրբ Գիրքը քննելու մատին ի՞նչ պատուէր տրուած է մեզի Յովին : Ե. 39:
21. Աստուծոյ խօսքն ի՞նչ կը կոչուի Եփես. Զ. 17:
22. Աստուծոյ խօսքն ի՞նչ զօրութիւն ունի : Երբ. Դ. 12:

Այս դասին պատմութիւնը կընա՞ն համառօտիւ կրկնել :

Նաև Եղրաս կ'ըսէ :

(4) Եղրաս 13 տարի յառաջ քան դնէեմիա ելաւ նրուսաղէմ : Բաղդատէ Եղր. Է. 7 Նէեմ. Բ. 1 հա-

մարին հետ : Թէ Եղրաս այնչափ տարի մնաց Եղրուսաղէմ թէ դարձաւ Բարիլոն եւ ապա միւսանգամ ելաւ , չի գիտցուիր :

(5) Կ'երեւի թէ Եղրաս այն ատեն ոչ միայն քահանայ եւ դպիր , այլեւ կառավարիչ էր :

(10) Այս ոչ եթէ հասարակ եւ կարճատեւ պաշտօն էր , այլ մասնաւոր եւ երկարատեւ , եւ շատ ձանձրալի եւ քիչ օգտակար պիտի ըլլար տղայոց : Տես ինչ որ Քրիստոս կը սորվեցնէ , Մատթ . ԻԱ. 15, 16:

(14) Հաւանական է թէ այս անձինք կը կարդային օգնելու համար Եղրասայ : Տես հմր . 8, «Կարդացին : »

Դէռապութիւն +

Քարոզիչք Աստուծոյ ճշմարտութիւնն այնպէս բացայաց քարոզելու են , որ ամէն մարդ հասկընայ : — Ժողովուրդն ունկնդիր ըլլալու է ուշադրութեամբ , եւ ըսուածը լաւ միտք պահելու է : — Եթէ խօսքն իր ազգեցութիւնը չ'ըներ , յանցանքը ոչ թէ խօսքին է , այլ կամ քարոզչին եւ կամ լսողներուն :



Զ. ԴԱՍ, ՓԵՏՐՈՒԱՐ 9

Շաբաթին պահպանութիւնը

Նէմի. ԺԳ. 15—22

Բէրեւոց սորէկ 19—22 համարելը :

Ունէշն համար . «Հանդստութեան օրը միտքդ քեր՝
անիկա սուրբ պահելու համար» Ել . Ի . 8 :

1. Ի՞նչ էր շաբաթին օրէնքը : Ել . Ի . 10 .
2. Շաբաթը պղծելուն դէմ ի՞նչ պատիժ կար :
Ել . ԼԱ . 14, 15 :

3. Աստուած ե՞րբ նորէն պատուիրեց իր ժողովուրդին սուրբ պահել շաբաթը : Երեմ . ԺԷ . 24, 22 :

4. Հրեայք պահեցի՞ն այս պատուէրը : Երեմ . ԺԷ . 23 :

5. Այս անհնաղանդութեան ետեւէն ի՞նչ չարիք
եկան . Հմր . 18: Երեմ . ԺԷ . 27 :

6. Նէմիա ի՞նչ գործեր տեսաւ որ ժողովուրդը
կ'ընէր շաբաթ օրը : Հմր . 15 :

7. Տիւրացիք ի՞նչ ընել սովոր էին . Հմր . 16:

8. Որո՞նց հետ վիճեցաւ Նէմիա այս բանին հա-
մար : Հմր . 17:

9. Յետոյ ի՞նչ ըրաւ : Հմր . 19 :

10. Նէմիա ինչու համար հրամայեց արեւը մըտ-
նելուն պէս դռները դոցել : Ղեւտ . ԻԳ . 32 :

11. Անատեն վաճառականներն ի՞նչ ըրին . Հմր . 20 :

12. Նէմիա անոնց ի՞նչ ընել սպառնացաւ : Հմր . 21 :

13. Նէմիայի սպառնալիքն ի՞նչ ազդեցութիւն
ըրաւ անոնց : Հմր . 21 :

14. Նէմիա ի՞նչ ընել հրամայեց Ղեւտացւոց :
Հմր . 22 :

15. Փարիսեցիք ի՞նչ կը սորվեցնէին թէ արժան
չէր ընել շաբաթ օրը : Մատթ . ԺԲ . 10 :

16. Քրիստոս ի՞նչպէս յանդիմանեց զանոնք : Մատթ .
ԺԲ . 11 :

17. Անատեն Քրիստոս ի՞նչ ընդհանուր օրէնք
դրաւ : Մատթ . ԺԲ . 12 :

18. Քրիստոնեայք կը պահե՞ն միեւնոյն օրը զոր կը
պահէին Հրեայք : Ել . Ի . 10 : Յով . Ի . 19, 26 :

19. Հրէից շաբաթն ի՞նչ բանի յիշատակ էր : Ել .
Ի . 11 :

20. Քրիստոնէից շաբաթն ի՞նչ բանի յիշատակ է,
Մարկ . ԺԶ . 9 :

21. Առաքեալք շաբթուն առաջին օրն ի՞նչպէս
պահեցին : Գործ . Բ . 1, Կւ Ի . 7 : Ա . Կոր . ԺԶ . 2 :

22. Շաբթուն առաջին օրուան ի՞նչ պատշաճ
անուն արուած է : Յայտ . Ա . 10 :

23. Տէրունական օրը պահելու ի՞նչ կանոն ունինք ,
եւ ի՞նչ խոստում կայ : Ես . ԽԸ . 13, 44 :

Այս դասին պատմութիւնը կինա՞ն համա-
լուսիւ կրկնել :

Մանաւութեան +

(7) Տիւրոս ծովեղիրեայ քաղաք էր , ուստի և
Տիւրացիք հարկաւ ձկնորս էին :

(8) Տէրունական օրուան այսպէս պղծուելուն
պատապիսանատու էին Յուդայի իշխանները , վասն

զի հարկաւոր միջոցները ձեռք չառին սրբապեղ-
ծութիւնն արգելելու :

(15) Փարիսեցիք քանի մը աւանդութեանց շատ
նախանձախնդիր էին, բայց վարուց սրբութեան
էական բաներուն համար բոլորովին անհոգ :

(21) Պենտեկոստէն միշտ շաբթուն առաջին օրուան
կը պատահէր : Ղեւտ. Ի. 45, 46 :

(22) Հայք լաւագոյն կ'ընեն «Տէրունական» կամ
«Տէրոջը օրը» անուանել միաշաբաթին, քան թէ
«Կիրակի», որ Յունարէն բառ է եւ ոչ Հայերէն :

(23) Ոչ միայն հոգեւոր այլեւ աշխարհային յա-
ջողութիւն կը գտնեն այն ազգերը եւ անհատները
որ կը պատուեն զԱստուած եօթնեկին մէկ օրը
նուիրելով հանգստեան եւ հոգեւոր կրթութեան :

Դէռուն-Եւ-Ն+.

Տէրունական օրն ըստ արժանւոյն սուրբ պահե-
լու համար պէտք է նախ սիրենք այն օրուան Տէրը :
—Աշխարհասէր մարդ մը տէրունական օրն ալ իւր
աշխարհային գործերովն զբաղի կը բաղձայ : —Հո-
գեւոր մարդը բերկութեամբ կը թողու աշխարհա-
կան հոգերը, եւ եօթնեկին ամբողջ մէկ օրը կը
նուիրէ Քրիստոսի ծառայութեանը :

—○♦♦—

Այս կամ Պատմ. ԴԱՍ, ՓԵՏՐՈՒԱՐ 16

Արդարներուն ճամբանելու ամենալավագութեան

Ամազմ. Ա. 4—6

Բէնուաց սորվէ 4—6 համարնելը :

Ունեցն համար : «Բայց արդարներուն ճամբան ծայ-
դող լոյսին պէս է, որ երթալով կը լուսաւորուի,
մինչեւ որ կատարեալ օր ըլլայ» Առակ. Գ. 48:

1. Ո՞ր մարդն է ճշմարտապէս օրհնեալ : Հմր .
1—3 :

2. Որո՞նց խորհուրդին մէջ չի քալեր :

3. Որո՞նց ճամբառն մէջ չի կենար :

4. Որո՞նց նստած տեղը չի նստիր :

5. Անոր հաճութիւնն ի՞նչ բանի մէջ է :

6. Ի՞նչ բանի վրայ կը մտածէ :

7. Ի՞նչ բանի պէս է :

8. Ե՞րբ պատուի կուտայ :

9. Արդար մարդն ի՞նչ պատուի կը բերէ : Ամազմ.
Լ. 24. Դադ. Ե. 22, 23 :

10. Ի՞նչ գեղեցկութիւն պիտի ունենայ միշտ :
Ա. Գեւտ. Գ. 4 :

11. Ի՞նչ բանի մէջ պիտի յաջողի :

12. Ամբարիշաներն ի՞նչպէս են : Հմր. 4—6 :

13. Ի՞նչ բանի պէս են :

14. Ո՞ր պիտի չկրնան կենար :

15. Որո՞նց ժողովքին մէջ պիտի չկրնան կենար :

16. Արդարներն ի՞նչո՞ւ համար այսպէս օրհնեալ
են : Հմր. 6 :

17. Արդարները նեղութիւն չե՞ն կրեր : Սաղմ.
Լ. 49 :
18. Խնչո՞ւ համար նեղութիւն կը կրեն : Երր. ԺԲ.
6—11 :
19. Ամբարիշաք երբէք յաջողութիւն չե՞ն գտներ :
Սաղմ. ՀԳ. 3—7, եւ ԼՅ. 35 :
20. Ամբարիշտներուն վախճանն ի՞նչ է : Հմր. 6 :
Սաղմ. ԼՅ. 38, եւ ՀԳ. 16—19 :
21. Խմաստուն մարդ մը այս ճամբաներուն ո՞րը
կ'ընտրէ :

Այս դասին մէջ ըսուածները կրնա՞ն համա-
ռօտիւ կրկնել :

Մասնաւունուն +

(15) Այսինքն դատաստանին օրը :

(18, 19) Նեղութիւնք օրհնութիւն են, վասն զի
նեղութիւնները կը տանին մեզ Քրիստոսի . յաջո-
ղութիւնը կու տայ հպարտութիւն, եւ մոռնալ կու
տայ մեղի զԱստուած : Ա. Տիմ. Զ. 9, 10, 17 :

Դիտունուն +

Զարմանալի է այն մարդուն կուրութիւնը որ
կենաց ճամբան չի տեսներ եւ չի քալեր անոր
մէջ : — Ամբարիշտ մարդիկ թէ եւ յաջողութեան
մէջ ըլլան, չեն կրնար երջանիկ ըլլալ, Արդարները,
եւ միայն արդարները, ճշմարտապէս երջանիկ են :

Ը. ԴԱՍ, ՓԵՏՐՈՒԱՐ 23

Սիոնի վրայ թագաւոր

Սաղմ. Բ. 1—12

Բէքնուց սորվէ 1—6 համարները :

Ուիւղն համար. «Աստուած զանիկա Տէր ալ ըրաւ՝
Օծեալ ալ, ան Ցիսուսը որ դուք խաչեցիք : » Կործ.
Բ. 36 :

1. Հեթանոսները եւ ժողովուրդներն ի՞նչ կ'ընեն :
Հմր. 1 :

2. Թագաւորները եւ իշխանները որո՞ւ դէմ խոր-
հուրդ կ'ընեն : Հմր. 2 :

3. Այս մարդարէութիւնը ե՞րբ կատարուեցաւ :
Կործ. Դ. 25—29 :

4. Հեթանոսներն ի՞նչ բանէ ազատ ըլլալ կ'ու-
ղեն : Հմր. 3 :

5. Ո՞րը զիւրադոյն է, Քրիստոսի՞ թէ սատանային
ծառայութիւնը : Հռովմ. Զ. 23 :

6. Աստուած ի՞նչպէս պիտի նայի անոնց ապօս-
տամը կատարութեանը վրայ : Հմր. 4 :

7. Ի՞նչ պիտի ընէ անոնց : Հմր. 5 :

8. Ո՞ւր օծեց Աստուած իր թագաւորը : Հմր. 6 :

9. Ո՞ւր էր Սիոն : Բ Թագ. Ե. 7 :

10. Հոս Սիոն ի՞նչ կը նշանակէ :

11. Ի՞նչ վկայութիւն տուաւ Տէրը : Հմր. 7 :

12. Որո՞ւ վրայ ըսուած է այս խօսքը : Երր. Ե. 5 :

13. Քրիստոս ի՞նչ պիտի խնդրէր Հօրմէն : Հմր. 8 :

14. Քրիստոսի թագաւորութիւնն ի՞նչ տեսակ
թագաւորութիւն է : Յով. Ժ. 36 :
15. Յիսուս ո՞րչափ ատեն պիտի թագաւորէ : Ա.
Կոռ. Ժ. 24—26 :
16. Քրիստոս ի՞նչ պիտի ընէ իր թշնամիներուն ,
Հմ. 9 :
17. Երբ պիտի ընէ դայս : Մատթ. Ի. 31—33 :
Ղուկ. Ժ. 25—28 :
18. Ի՞նչ խրատ կը տրուի թագաւորներուն : Հմ. 40 :
19. Տէրոջը ի՞նչ պաշտօն մատուցանելու կը խրա-
տուին : Հմ. 44 :
20. Թագաւորք ի՞նչո՞ւ համար ծառայելու են
Քրիստոսի : Յայտ. Ժ. 44, եւ Ժ. 46 :
21. Հպատակութեան ի՞նչ նշան ցուցնել կը պա-
հանջուի թագաւորներէն : Հմ. 42 :
22. Ի՞նչ վասնիք պիտի ազատէր զանոնք այս
բանը , եւ ի՞նչ օրհնութիւն պիտի բերէր անոնց :
23. Քրիստոսի թագաւորութեան հաստատութեանը
համար ի՞նչ ընելու ենք : Մարկ. Ժ. 43 :

Այս դասին մէջ ըստածները կրնա՞ն համա-
ռօտիւ կրկնելու :

Ծանօթական +

Հեթանոս թագաւորները եւ ազգերն ապստամբ են
Քրիստոսի թագաւորութենէն , բայց անոնց ապօ-
տամբութիւնն անօգտաւէ , Եթէ չեն ուղեր կամաւ
հնազանդիլ , չօր եւ Որդւոյ բարկութիւնը պիտի
փշրէ զանոնք ի վախճանի :
(10) Որովհետեւ Քրիստոսի թագաւորութիւնը հո-

գեւոր թագաւորութիւնէ , ապա Սիօն ալ հոգեւոր
Սիօն էր , «Նոր Երուսալէմ» : » Յայտ. Ի. 2 :

(21) Եւրոպայի թագաւորներն այս հպատակութիւնն
ի սկզբան ցուցուցին Հռոմի Պապին , Երրեւ վոլոսա-
նորդին Քրիստոսի երկրի վրայ : Հիմա այս սովորու-
թիւնը դադրեցաւ , ոչ թէ վասն զի Եւրոպայի
թագաւորներն այլեւս հպատակութիւն չեն մա-
տուցաներ Քրիստոսի , այլ վասն զի չեն հաւատար
թէ պապը Քրիստոսի միմիայն փոխանորդն է երկրի
վրայ :

Դիրքութակ +

Երրեւ զինուորք Քրիստոսի պատերազմելու ենք
հոգեւոր զէնքերով աշխարհք հնազանդեցնելու հա-
մար անոր : — Բանէ մը վախնալու չենք , ոչ ալ
վհատելու ենք Երրեք , քանզի Քրիստոս պիտի յաղ-
թէ խսպան , եւ բոլոր թագաւորութեանց եւ ազ-
գաց վրայ պիտի աիրէ :

Թ. Դ.Ա.Ս , ՄԱՐՏ 2

Ապաշխարողին աղօթքը

Սաղմ. Խ. 4—13

Բերնուց սորմէ 9—13 համարներ :

Ուկեղն համար . «Իմ անօրէնութենէս բոլորովնն
իս լուա , ու իմ մեղքէս իս սրբէ : » Հմ. 2 :

4. Ո՞վ զրեց ԾԱԿԵՐՈՐդ Սաղմոսը ,

2. Ի՞նչ երկու մեծ մեղք գործած էր Դաւիթ :
- Բ. Թագ. ԺԲ. 7—9:
3. Այս մեղքերուն համար Աստուած ի՞նչ չարիք սպառնացաւ Դաւիթի : Ա. Թագ. ԺԲ. 10—12:
4. Այս բանը Դաւիթի վրայ ի՞նչ աղդեցութիւն ըրաւ : Բ. Թագ. ԺԲ. 13:
5. Ի՞նչ բանի համեմատ խնդրեց Դաւիթ որ Աստուած ողորմէր անոր : Հմր. 1:
6. Ի՞նչպիսի մաքրութիւն խնդրեց Աստուածմէ : Հմր. 2, 7:
7. Ո՞վ միայն կրնայ Տէրոջը հետ բնակիլ : Սաղմ. ԻԴ. 3, 4:
8. Ի՞նչ բան միայն կը մաքրէ ամէն մեղքէ : Ա Յովին. Ա. 7:
9. Ի՞նչ բան կը ճանչնար , եւ ի՞նչ կը տեսնէր իր առջեւը : Հմր. 3:
10. Որո՞ւ դէմ մեղանչած էր : Հմր. 4:
11. Մարդու դէմ ալ մեղանչած չէ՞ր :
12. Ի՞նչ կը նշանակէ սա խօսքը , «Որ արդար ըլլաս խօսքերուդ մէջ» : Հոռվմ. Գ. 3—6:
13. Իր ծննդեանը համար ի՞նչ կ'ըսէ Դաւիթ : Հմր. 5:
14. Ի՞նչպէս կը մեկնես այս խօսքերը : Յով. ԺԴ. 4: Սաղմ. ՄԸ. 3:
15. Ի՞նչ կ'ուզէ Աստուած մարդուս ներսի դին : Հմր. 6:
16. Այս բանին համար Քրիստոս ի՞նչ կ'ըսէ : Մատթ. Ե. 8:
17. Ի՞նչ մասիթարութեան եւ ուրախութեան համար աղօթեց Դաւիթ : Հմր. 8, 12:

18. Ի՞նչ բանէ աղաչեց որ երեսը ծածկէր Աստուած : Հմր. 9:
 19. Ի՞նչ նոր ստեղծման համար աղօթեց : Հմր. 10:
 20. Ի՞նչ բան խնդրեց որ իրեն հետ մնար : Հմր. 11:
 21. Ի՞նչ հաճոյական զո՞ւ մատոյց Աստուածոյ : Հմր. 16, 17:
 22. Երբ նորէն Աստուածոյ բարեկամութեանը մէջ հաստատուէր , ի՞նչ ծառայութիւն պիտի մատուցանէր Տէրոջը : Հմր. 13, 15:
 23. Անկեղծ զղման նշանն ի՞նչ է : Մատթ. Գ. 8:
- Այս դասին մէջ ըստածները կրնա՞ն համառօտիւ կը կնել :

Ծանօթութեան

(2) Ծնութիւն եւ սպանութիւն : Դաւիթի յանցանքը շատ մեծ էր , եւ ասոր համար սոսկալի պատուհաս եկաւ անոր տանը վրայ , բայց այս Սաղմոսը կը ցուցնէ թէ Դաւիթ սրտանց զղաց դառնապէս , եւ ընդունելի եղաւ Աստուածոյ , ենու Մատթ. ԻԶ. 69—73:

(11) Անոր անիրաւութիւնն Ուրիխի դէմ շատ մեծ էր , բայց անոր մեղքն Աստուածոյ դէմ յանհունս մեծ էր : Տես Բ. Թագ. ԺԲ. 14:

(17) Նոյն իսկ Աստուած չէր կրնար Դաւիթի շնութեան եւ սպանութեան մեղք գործած ըլլալը ջնջել , բայց կրնար ընդունել զանի եւ անոր հետ վարուիլ այնպէս որպէս թէ բնաւ գործած չէր այն մեղքերը :

(21) Ճմարիտ ապաշխարողը կ'ուրախանայ որ կարող է հաւատարիմ ծառայութեամբ չափով մը դարմանել չարիքը զոր իր մեղքը պատճառած է :

Հայութ պատման ըստ Դիքոսիւս-Ելեւան +

Յարի մարդը երբեմն կը մեղանչէ , բայց յետոյ կը խոստովանի իր մեղքը եւ կը դառնայ անկէ : — Զար մարդը կը մեղանչէ եւ կը մնայ իր մեղքին մէջ :

Ժ. ԳԱՍ, ՄԱՐՏ 9.

Մեղաց թողութեան ուրախութիւնը

Սաղմ. ԱԲ . 4—11

ԲԵՐՆԱՌ սարկ 7—11 համարները :

Ուկեղեն համար . « Երանի անոր՝ որուն յանցանացը թողութիւն եղաւ , ու անոր մեղքերը ծածկուեցան » Համար . 4:

1. Ի՞նչ անձկութիւն կը կրէր Դաւիթի իր մեղքերուն համար : Հմր . 3 , 4 :

2. Տէրոջը ձեռքը որո՞ւ վրայ ծանր է : Սաղմ. ԱԲ . 20 :

3. Իր մեղքերը որո՞ւ խոստվանել որոշեց Դաւիթ : Հմր . 5 :

4. Տէրոջմէն ի՞նչ ընդունեցաւ :

5. Ի՞նչ երանութիւն վայելեց յետոյ : Հմր . 1, 2 :

6. Որո՞նք են որ մեղաց թողութեան համար կ'աղօթեն : Հմր . 6 :

7. Ե՞րբ կ'աղօթեն այսպէս :

8. Տէրը ե՞րբ կը զանուի : Բ Կոր . Զ . 2 :

9. Այսպիսիներուն ի՞նչ սկաշտապանութիւն խոստացուած է : Հմր . 6 :

10. Աստուած ի՞նչ է բարի մարդուն : Հմր . 7 :

11. Ի՞նչ բանով կը պատէ Աստուած այսպիսին :

12. Ի՞նչ կը խոստանայ անոր : Հմր . 8 :

13. Կը սորվեցնէ՞ Աստուած զանոնք որ սորվիլ չեն ուղեր : Յակ . Ա . Յ :

14. Կ'առաջնորդէ՞ անոնց որ առաջնորդուելու պէտքը չեն զգար :

15. Աստուծոյ հնաղանդիլ չուզող մարդն ի՞նչ բանի կը նմանի : Հմր . 9 :

16. Այսպիսի մարդու մը ի՞նչ բան կը վայէ : Առակ . ԻԶ . 3 :

17. Ամբարշամին վիճակն ի՞նչ է : Հմր . 10 :

18. Արդարներն ի՞նչ ընելու կը հրաւիրուին : Հմր .

14. Փիլիպ . Դ . 4 :

19. Մեղքը երբեմն ի՞նչ կը կոչուի : Մատթ . Զ . 12 :

20. Մեղաց թողութիւնը բացարելու համար Քրիստոս ի՞նչ օրինակ կը բերէ : Դուկ . ՖԸ . 23—27 :

21. Ուրեմն ի՞նչ բանի կը նմանի այն մարդուն ուրախութիւնը որուն մեղքերը ներուած են :

22. Ի՞նչ ոգւով վնասելու ենք այս ուրախութիւնը : Մատթ . Զ . 14 , 15 : Եփես . Դ . 32 :

Այս դասին մէջ ըստածները կրնա՞ս համառօտիւ կը կնել :

Ծանօթութիւն +

(6) « Աստուածապաշտը , » վասն զի աստուածապաշտն անկեղծ սրտով կը վինտոէ զԱստուած :

(11) Խնչպէս որ ծանր պարտքէ մը նոր ազատուած մարդը կ'երգէ ուրախութեան երգեր , նոյնպէս իր մեղքերուն բեռէն նոր թեթեւցած մեղաւորը կը գգայ մեծ ուրախութիւն :

Դէրականութեան +

Մեղքը լի է դառնութեամբ : — Մեղքը կորուստ կը բերէ անապաշխար մարդուն , իսկ զղջացողին՝ ապաշխարութեան տիսրութիւն , որուն ետեւէն պիտի գայ սակայն թողութեան ուրախութիւնը :



ԺԱ. ԴԱՍ , ՄԱՐՏ 16

Աստուծոյ տաներ վրայ բերկրութիւն

Սաղմ. ԶԴ . 4—12

Բերանուց սուբլ 6—12 համարները :

Ուկեղն համար . «Երանի անոնց որ քու տանդ մէջ կը բնակին . անոնք անդադար քեզ պիտի օրհնեն : » Հմր . 4 :

1. Աստուծոյ բնակարաններուն համար ի՞նչ ըստուած է : Հմր . 1 :

2. Ի՞նչ բանի կը փափաքէր Սաղմոսերգուին հոգին : Հմր . 2 :

3. Որու կ'աղաղակէր անոր սիրտն ու մարմինը :

4. Ճնճղուկը եւ ծիծեռնիկն ի՞նչ գտան իրենց համար , եւ ո՞ւր : Հմր . 3 :

5. Ի՞նչ է ասոր նշանակութիւնը :

6. Որո՞նք երանելի են : Հմր . 4 :
7. Անոնք ի՞նչ կ'ընեն Աստուծոյ տանը մէջ :
8. Աստուծոյ տանը մէջ «բնակիլ» ըսելէն ի՞նչ կը հասկցուի :
9. Ո՞ր զօրութիւնը լաւագոյն է : Հմր . 5 :
10. Երբ Տէրոջմով զօրացած մարդ մը արտասուաց հովտէն կ'անցնի , ի՞նչ կ'ընէ այն հովիտը : Հմր . 6 :
11. Արտասուաց հովիտն ի՞նչ է :
12. Բարի մարդն այն հովիտը ի՞նչպէս աղբիւր կ'ընէ :
13. Ի՞նչ կը նշանակէ նաեւ սա խօսքը . «Անձրեւն ալ պիտի ծածկէ անիկա : »
14. Աստուծով զօրացած մարդն ի՞նչ յառաջադիմութիւն կ'ընէ : Հմր . 7 :
15. Մինչ ե՞րբ կ'աւելնայ այնպիսւոյն զօրութիւնը :
16. Սաղմոսերգուն ի՞նչ կը խնդրէ որ Աստուծ լսէ : Հմր . 8 :
17. Անոր բուն եւ գլխաւոր խնդրուածն ի՞նչ էր : Հմր . 9 :
18. Ի չնորհս որո՞յ կ'աղաջէ որ իր աղերսն ընդունուի : Հմր . 9 :
19. Ո՞վ էր Աստուծոյ Օծեալը :
20. Ի՞նչ բան լաւագոյն է քան հազար օրը : Հմր . 10 :
21. Քան ամբարշտաց վրաններուն մէջ բնակիլն ի՞նչ բան լաւագոյն է :
22. Աստուծած ի՞նչ է իրեն ապաւինողներուն : Հմր . 11, 12 :
23. Ի՞նչ կու տայ անոնց :

24. Բարի մարդն ինչո՞ւ համար կը սիրէ Աստու-
ծոյ տունը :

25. Եթէ մարդ մը հոս Աստուծոյ տունը չի սիրեր,
կրնա՞յ երջանիկ ըլլալ երկինքը :

Այս դասին մէջ ըստածները կրնա՞ն համա-
ռութիւն կրկնել :

Ծանօթական

(5) Թռչունք շատ անդամ աղօթատեղիներու մէջ
կը շինեն իրենց բոյնը . որչափ եւս առաւել մար-
դուս հողին կը զանէ իրեն տուն եւ դադար Աս-
տուծոյ տանը մէջ : Տես Մատթ . Զ . 26 :

(8) Շարունակ աստուծային պաշտօնի երթալ
սրբարանը , մինչեւ որ բնակարանի պէս ըլլայ :

(11) Չոր տեղ մը որ տաժանելի է ճամբորդներուն
համար , վասն զի անջրդի է :

(13) Խնչպէս որ անձրեւը սփոփանք եւ ուրախու-
թիւն կը բերէ ճանապարհորդաց այնպիսի անջուր
տեղեր , նոյնպէս բարի մարդը միսլիթարութիւն եւ
օդնութիւն կու տայ բոլոր տրտմած սիրտերու :

Գլուխութեան

Ամէն մարդ ու բախտոթեամբ կ'երթայ իր բարե-
կամին տունը . եթէ Աստուած մեր բարեկամն է ,
պէտք է որ միշտ ուրախութեամբ երթանք անոր
տունը ; — Եթէ մէկը կ'ըսէ թէ իր տունն ալ կրնայ
պաշտել զԱստուած , եւ ետ կը կենայ Աստուծոյ
տունէն , զիտցիր որ այնպիսին գեռ բարեկամ չէ

Քրիստոսի : — Ամէն մարդ կ'ուզէ ունենալ ունան ճը
ուր կարող ըլլայ հանգչիլ աշխարհիս հոգերէն եւ
նեղութիւններէն . Աստուծոյ տունը Քրիստոնէին
հոգեւոր տունն է :

—————♦—————

ՃԲ. ԴԱՍ , ՄԱՐՏ 23

Ամենատեսն Աստուած

Սաղմ . ՃԱՅ . 1—12

Բէրնակ սուրէ 1—6 համարները :

Ոսէնքն համար . «Վասն զի մարդուն ճամբաները
Տէրովը աչքերուն առջեւն են , ու անոր ամէն քայ-
լերը ինքը կը կռէ : Առակ . Ե . 24 :

1. Դաւիթ ի՞նչ կ'ըսէ թէ Տէրը ըրաւ անոր :
Հմր . 1 :

2. Տէրը ըրա՞ծ է նաև մենէ ամէն մէկուն հա-
մար ինչ որ ըրաւ Դաւիթի :

3. Բնական է որ Աստուած հսկէ թագաւորաց եւ
իշխանութեան տէր անձանց ընթացքին վրայ , բայց
կը հաւատա՞ք նաեւ թէ Աստուած տղէտ եւ ումիկ
մարդոց ալ ամէն մէկուն ճամբաները զիտէ եւ կը
քննէ : Երբ . Դ . 13 : Յայտ . Ի . 12, 13 :

4. Աստուած կը դիտէ՝ զմեզ երբ առաւօտուն
տունէն կ'ելլենք , եւ իրիկուան տուն կը դառնանք :
Հմր . 2 :

5. Կը հսկէ՝ մեր վրայ մինչ կը գործենք կամ մինչ
կը քննանանք : Հմր . 3 :

6. Կը դիտէ՞ մեր խօսքերը եւ մեր խորհուրդներն անդամ։ Հմր. 4, 2։
7. Ի՞նչ կը դանուի շարունակ մեր առջեւը, մեր ետեւը եւ մեր վրայ։ Հմր. 5։
8. Ի՞նչ տեսակ գիտութիւն է այս։ Հմր. 6։
9. Մարդ կրնա՞յ փախչիլ Աստուծոյ երեսէն։ Հմր. 7։
10. Մարդ մը չի՞ կրնար պահուիլ Աստուծոյ երեսէն ամպերուն մէջ բնակելով, կամ երկրիս տակն իրեն տուն շինելով։ Հմր. 8։ Ամովս Թ. 2, 3։
11. Աստուծոյ դէմ այս տեսակ ապստամբութիւն մը ընել ո՞վ ջանաց։ Ծննդ. ԺԱ. 4։
12. Ի՞նչ վախճան ունեցաւ այս փորձը։ Ծննդ. ԺԱ. 5—8։
13. Եթէ մարդ մը շուտով հեռաւոր եւ անքնակ երկիր մը երթայ, չի՞ կրնար Աստուծոյ երեսէն փախչիլ։ Հմր. 9, 10։
14. Ո՞վ ջանաց այս կերպով փախչիլ Աստուծոյ երեսէն, եւ կրցա՞ւ յաջողիլ։ Յովն. Ա. 3, 4, 10, 15։
15. Ի՞նչ երկու շատ տարրեր բաներ հաւասար են Աստուծոյ։ Հմր. 12։
16. Խաւարը կրնա՞յ ծածկել մեզ Աստուծմէ։ Հմր. 14։
17. Ինչո՞ւ համար Աստուծ չարերը կը փնտոէ եւ կը համածէ։ Ամովս Թ. 3, 4։
18. Աստուծ երբէք բարիք չի՞ չնորհեր չարերուն։ Մատթ. Ե. 45։
19. Չարերն ինչո՞ւ համար կը վախճան Աստուծոյ ներկայութենէն։ Յովն. Գ. 20։
20. Ի՞նչ է ուրիմն մեղաց պատիմը. ուղղակի Աստուծոյ ձեռքովը տրուած պատուհա՞ս է, թէ ամօթ

- եւ անյօյս զղջում զոր ամբարիշարը կը զգայ երբ անոր մեղքերն ի լոյս կը հանուին Աստուծոյ սուրբ երեսաց առջեւը։
21. Ինչո՞ւ համար Աստուծ միշտ արդարոց հետ է։ Հմր. 10։ Մատթ. Ժ. 20։ Ի. 19, 20։
22. Աստուծոյ ներկայութիւնը կը սիրէ՞ք թէ ոչ։ Այս դասին պատմութիւնը կը նախա՞ն համառ ուստիւ կը կնել։

Ծանօթական

(10) Դժոխոց վրայ հին դաղափարն այս էր թէ դժոխը խաւարի եւ տանջանաց տեղ է երկրին մէջտեղը։ Տես Թու. Ժ. 30—32։ Բ Օր. Լ. 22։

(20) Դատաստանին օրը մեղաւորը պիտի աեսնէ իր վճռոյն արդարութիւնը, եւ իր կամօքը պիտի հածի «իր տեղը երթալու» (Գործ. Ա. 25), դժոխը ին խաւարն ու թշուառութիւնը լաւ համարելով քան արքայութեան լոյսը։

Դիտական

Եթէ չարիք կը նիւթես քու եղբօրդ, գիտցիր որ Աստուծ գիտէ եւ իրեն դէմ մեղք կը համարի դայն։ — Եթէ բարիք մը ընել կը խորհիս, թերեւս աշխարհք ամենեւին չիմանայ, բայց Աստուծ կը յիշէ այն բարիքն յօդուտ քո, եւ պիտի վարձատրէ գքեղ (Մատթ. Զ. 3, 4. Երր. Զ. 10). — Խիդաք ձայն Աստուծոյ է որ միշտ ներկայ է հոգւոյն մէջ, եւ բարեկամաբար կը զդուշացնէ մեզ վտանգէ. եթէ

մաիկ չենք ըներ անոր ազդարարութիւնը , յաւ փտենականութեան անվախճան դարերուն մէջ պիտի խայթէ մեր հոգին ամօթոյ եւ անյոյս զգժան խայթոցով :



ԺԴ . ԴԱՍ , ՄԱՐՏ 30

ՀԱՆԴԵՍ

1. Հըէից դերութեան մէկ մասը երուսաղէմ ո՞վ բերաւ , եւ որո՞ւ հրամանաւ եւ ինչո՞ւ համար եւ ի՞նչ արարողութեամբ դրուեցաւ տաճարին հիմք : Եզր . ս . 4—5: Բ . 4: 2: Գ . 4—13: (Դաս Ա:)

2. Ի՞նչպէս ետ մնաց գործը , ու ե՞րբ եւ ի՞նչպէս եղաւ նաւակատեաց արարողութիւնը : Եզր . Դ . 4—24: Է . 4—17: Զ . 4—22: (Դաս Բ:)

3. Երուսաղէմին ի՞նչ լուր եկաւ նէեմիայի , ի՞նչ ընել որոշեց նէեմիա , եւ ի՞նչպէս հասաւ իր նպատակին : Նէեմ . Ս . 4—14: Բ . 4—20: (Դաս Գ:)

4. Ի՞նչ արդելքներու պատահեցաւ նէեմիա , եւ ի՞նչ միջոցով յաղթեց բոլոր ընդդիմութեանց եւ կատարեց իր գործը : Նէեմ . Դ . 4—23: Զ . 4—19: (Դաս Դ:)

5. Ի՞նչ արարողութեամբ կարդացուեցաւ օրէնքը : Նէեմ . Ը . 4—18: (Դաս Ե:)

6. Նէեմիա ի՞նչ կերպով պղծուած տեսաւ շարաթը , եւ այն օրուան կատարեալ պահպանութեանը համար ի՞նչ միջոց ձեռք առաւ : Քրիստոս ի՞նչ օրէնք տուած է շարաթին պահպանութեանը համար ,

եւ մենք ինչո՞ւ համար եօթնեկին առաջին օրը կը պահենք հիմա փոխանակ եօթներորդին : Նէեմ . ԺԳ . 15—22: (Դաս Զ:)

7. Բարի մարդն ի՞նչ երանութիւն ունի , ի՞նչ բանի նման է , եւ անոր վիճակն ի՞նչպէս կը տարբերի ամբարշտին վիճակէն : Սաղմ . Ս . 4—6: (Դաս Է:)

8. Ո՞վ է Ախոնի թագաւորը , ո՞րչափ ընդարձակ է անոր թագաւորութիւնը , եւ ի՞նչ պիտի ընէ անոնց որ յամառութեամբ կ'ապստամբին անոր գէմ : Սաղմ . Բ . 4—12: (Դաս Ը:)

9. Ի՞նչ աղօթք կ'ընէ եւ ի՞նչ հոգւով աղօթք կ'ընէ ապաշխարողը : Սաղմ . ԾՍ . 4—19: (Դաս Թ:)

10. Մեղաց թողութեան ուրախութիւնն ի՞նչ է , եւ ի՞նչ կերպով կը ստացուի այն ուրախութիւնը : Սաղմ . Լ. 4—14: (Դաս Ժ:)

11. Ի՞նչ է Աստուծոյ տանը բերկութիւնն անոնց որ զԱստուած կը սիրեն : Սաղմ . ՁԴ . 4—12: (Դաս ԺԱ:)

12. Կրնանք տեղ մը երթալով փախչիլ Աստուծոյ երեսէն , կամ կրնա՞նք աղատիլ հաշիւ տալէ անոր մեր բարի կամ չար գործերուն համար : Սաղմ . ՃԼԹ . 4—12: (Դաս ԺԲ:)



Ժ.Դ. ԴԱՍ, ԱՊՐԻԼ 6

Արքարար տրտմութիւն

Յոր լ. 44—30

ԲԵՐՆՈՒՄ ԱՐՔ 23—26 հայաբները :

Ոսկելն հայաբ . ԱՌՈՂԵԱԼ իմ, ՏԵՐՈՂԸ խրատը մի անարդեր, ու անկէ յանդիմանուելով՝ մի թունար . Երբ . Ժ.Բ . 5:

1. Ո՞ր երկրէն էր Յոր և ինչպիսի՞ մարդ էր : Գլ . Ա . 1 :

2. Ի՞նչ յաջողութեան մէջ էր : Գլ . Ա . 2 , 3 :

3. Ըստ կարծեաց Սատանայի Յոր ի՞նչ նպատակաւ հաւատարիմ էր Աստուծոյ : Գլ . Ա . 9—10 :

4. Աստուած ի՞նչ թոյլ տուաւ Սատանային որ ընէր Յորայ : Գլ . Ա . 12—19 :

5. Յոր ի՞նչպէս ընդունեց բոլոր այս աղքաները : Գլ . Ա . 20—22 :

6. Ուրիշ ի՞նչ չարիք բերաւ Սատանան Յորայ դւխուն : Գլ . Բ . 7 , 8 :

7. Յորայ կինն ի՞նչ ընել խրատ տուաւ Յորայ : Գլ . Բ . 9 :

8. Յոր ի՞նչ պատասխան տուաւ անոր : Գլ . Բ . 10 :

9. Ո՞վ եկաւ միսիթարելու դՅօր : Գլ . Բ . 11 :

10. Յորայ բարեկամներն իրենց խօսքը լմացնելէն ետքը ո՞վ խօսեցաւ : Գլ . ԱԲ . 1 , 2 :

11. Եղիուս ինչո՞ւ համար առաջ չխօսեցաւ : Գլ . ԱԲ . 4 :

12. Ամենէն ետքը խօսելուն համար ի՞նչպէս արդարացուց զինք : Գլ . ԱԲ . 5—10 :

13. Եղիուս Յորայ ո՞ր խօսքը դատապարտեց : Հմր . 9—11 :

14. Ո՞րչափ անգամ Աստուած կը խօսի եւ մարդ մորիկ չըներ : Հմր . 14 :

15. Ի՞նչպէս եւ ե՞րբ կը խրատէ Աստուած զմարդիկ : Հմր . 15 , 16 :

16. Ի՞նչ բարերար նպատակ ունի Աստուած այսպէս խօսելով մարդոց հետ : Հմր . 17 , 18 :

17. Աստուած ի՞նչ նեղութիւններ կը դրկէ մարդոց : Հմր . 19—22 :

18. Ի՞նչ պէտք է ցուցնելու համար թէ Աստուած արդար է այսպէս վարուելով : Հմր . 23 :

19. Ի՞նչ մեկնչի համար կ'ըսէր Եղիուս : Հմր . 6 , 33 :

20. Ո՞վ է մեծ քրիստոնեայ մեկնիչը : Յովհ . ԺԶ . 13 :

21. Անասեն ի՞նչ պիտի ըսէ Աստուած : Հմր . 24 :

22. Ի՞նչ առողջութիւն պիտի տրուի անոր : Հմր . 25 :

23. Այսուհետեւ ի՞նչ չնորհք պիտի գտնէ մարդն Աստուծումէ : Հմր . 26 :

24. Աստուած ի՞նչ պայմանաւ կ'աղատէ զմարդ : Հմր . 27 , 28 :

25. Քանի՞ անգամ կը կրկնէ Աստուած իր պատուհանը, եւ ինչո՞ւ համար : Հմր . 29 , 30 :

26. Ուրեմն պիտի հասկնանք թէ ապաշխարովը որ Փրկչին կը հետեւի՝ երբէք նեղութիւն կամ վիշտ չի՞ կրեր :

27. Ոչ, կը կրէ : Յայտ . Գ . 19 :

28. Ի՞նչ է նեղութիւնը կամ վիշտը : Գլ . Ե . 17:
Սաղմ . Դ.Դ . 12 :

29. Ի՞նչպէս ընդունելու ենք նեղութիւնը եւ վիշտն
Աստուծմէ : Երբ . ՃԲ . 5—11 :

Այս դասին պատմութիւնը կրնա՞ն համա-
ռօտիւ կրկնել :

Ծանօթութեան +

(4) Կը կարծուի թէ չուս Արարիոյ հիւսիսային
մասն էր : «Յոր» բառը կը նշանակէ «հալածեալ» :
Չի գիտցուիր թէ երբ ապրեցաւ Յոր , բայց հաւա-
նական է թէ Արահամու եւ Սովորիսի ժամանակ-
ներուն մէջտեղ : Գիտցուած չէ նաեւ թէ ով զրեց
Յորայ գիրքը :

(4) Սատանան կը նեղէ բարի մարդը , յուսալով
թէ կրնայ զրգուել զանի Աստուծոյ գէմ ապստամ-
բելու : Աստուած թոյլ կու տայ սատանային նեղել
բարիները , որպէս զի բարեգոյն ըլլան : Յակ . Ա .
12—14 :

(9) Կը թուի թէ Եղիվազ Եսաւայ սերունդէն էր
(Ծնդ . 1.Զ . 15) , եւ Բաղդատ՝ Արահամու սերուն-
դէն , անոր կնոջմէն Քետուրայէ (Ծնդ . ԻԵ . 2) :

(10) Եղիուս Արահամու եղբօրը Նաքովրայ սե-
րունդէն էր , (Ծնդ . ԻԲ . 24) :

(15) Այն օրերը Աստուած կը յայտնէր զինք մար-
դարէներով : Տես Թու . ՃԲ . 6 :

(28) Օրհնութիւն :

Դէմուլտէն +

Նեղութիւններով Աստուած կ'ուղէ մեղաւորը
կենաց ճամբան բերել , իսկ բարի մարդը եւս աւելի
մօտ ձգել իրեն : — Նեղութիւնք նշան են Աստու-
ծոյ սիրոյն : — Ինչպէս որ ոսկին եւ արծաթը կը
զալին բովի մէջ , նոյնպէս բարի մարդը կը մաքրուի
նեղութեամբ , եւ կ'ըլլայ պատրաստ երկնից համար :
Առակ . Ճէ . 3 : Ես . Ա . 25 : Զաք . ՃԳ . 9 : Մաղ .

Գ . 2 , 3 :

—○❖○—
ԺԵ . ԴԱՍ , ԱՊՐԻԼ 43

Յաջողութիւնը նորէն կը տրուի

Յոր ԽԲ . 4—10

Բէնուց սուլէ 4—6 , 10 հայտնելը :

Ուիշուն հայոք . «Ահա համբերողներուն երանի
կու տանք : » Յակ . Ե . 11 :

1. Երբ Եղիուս խօսքը լմացուց , ո՞վ խօսեցաւ եւ
ի՞նչպէս : Գլ . 1.Զ . 1 :

2. Ի՞նչ յանդիմանութիւն տուաւ Աստուած Յո-
րայ : Գլ . 1.Զ . 2—4 :

3. Յոր ի՞նչ պատասխան տուաւ : Գլ . Խ . 3—5 :

4. Դարձեալ ի՞նչ ըստ Աստուած Յորայ : Գլ .
Խ . 6—9 :

5. Յոր պատասխանին մէջ ի՞նչ վկայեց : Հմբ . 2 :

6. Յոր ի՞նչպէս մեղաղրեց զի՞նք իր տղիտութեաւ-
նը համար : Հմր . 3 :
7. Ի՞նչ խնդրեց Աստուծմէ : Հմր . 4 :
8. Աստուծոյ վրայ ի՞նչ յայտնութիւն եղաւ Յո-
րայ : Հմր . 5 :
9. Յոր ի՞նչպէս գտաւ ինքզի՞նք : Հմր . 6 :
10. Աստուծած Յորին երեք բարեկամներուն ի՞նչ
բառաւ : Հմր . 7 :
11. Աստուծոյ Յորայ ո՞ր խօսքերը դովեց :
12. Ի՞նչ զո՞ն մատուցանել հրամայեց Յորայ բա-
րեկամներուն : Հմր . 8 :
13. Ո՞վ պիտի ըլլար անոնց քահանայ եւ բարե-
խօս : Հմր . 8 :
14. Ի՞նչ տեսակ մարդիկ կրնան աղօթքով բարե-
խօսել ուրիշներուն համար : Ծննդ . 1 . 7, 17, Յակ .
Ե . 14—16 :
15. Այս համարները սրբոց բարեխօսութեան վար-
դապետութիւնը չե՞ն հաստատեր :
16. Յորայ բարեկամները հնաղանդեցա՞ն Աստուծոյ
հրամանին : Հմր . 9 :
17. Աստուծած ի՞նչ բանէ ազատեց զՅոր : Հմր . 10 :
18. Ի՞նչպէս օրհնեց զանի : Հմր . 12, 13 :
19. Անոր բարեկամներն ի՞նչ կերպով ուրախակից
եղան անոր : Հմր . 14 :
20. Նոյն բարեկամներն ի՞նչ ըրին Յորայ անոր
ձախորդութեան ատենը : Գլ . ԺԹ . 13—19 :
21. Այս բաներէն եաքը Յոր ո՞րչափ ապրեցաւ :
Հմր . 16, 17 :
22. Ուզգութիւնը եւ հաւատարմութիւնը միշտ նոր
յաջողութեամբ կը վարձատրուի՞ն :

23. Յորայ պատմութենէն ի՞նչ կը սորվի՞նք : Յակ .
Ե . 10, 11 :

Այս դասին պատմութիւնը կրնա՞ն համա-
ռօտիւ կրկնել :

Ծանօթութեան +

(9) Աստուծոյ սուրբ ներկայութեան լուսոյն մէջ
մարդս անհնարին անարդ է :

(10) Եղիուս ազատեցաւ այս յանդիմանութենէն :

(11) Սնտարակոյս այս վերջին խօսքերն ուր Յոր
խորին խոնարհութեամբ եւ իրեն դէմ զգուանօք
կը խօսի :

(12) Այս, վասն զի այս աշխարհիս վրայ սուրբերը
կարեւոր գործ մը ունին ընելու իբրեւ միջնորդ եւ
բարեխօս անոնց համար որ բարկացուցած են զԱս-
տուծած անոր դէմ մեղանչելով, բայց ապացոյց
չկայ ըսելու թէ սուրբերն այս պաշտօնը պիտի
վարեն նաեւ հանդերձեալ կենաց մէջ :

(13) Եր տառապանաց գերութենէն :


(14) Յորայ ամբողջ տարիքը եղած ըլլալու է դոնէ
200 տարի :

(15) Ոչ միշտ եւ ի հարկէ՝ այս կենաց մէջ :

Գիտութեան +

«Ուզգութիւնը լաւագոյն միջոց է : — Բարի է
Աստուծոյ ծառայել վասն զի այս ծառայութիւնը
կը բերէ յաջողութիւն . բայց լաւագոյն է Աստուծոյ
ծառայել անոր ծառայութեան սիրոյն համար : — Զա-

խորդութեան մէջ հաւատարմութիւն առ Քրիստոս
ձշմարիտ Քրիստոնէի լաւագոյն նշանն է :— Զախոր-
դութեան ատեն մեղ լքանող բարեկամք՝ ամենեւին
բարեկամք չեն :



ԺԶ. ԴԱՍ, ԱՊՐԻԼ 20

Թագուհին Եսթեր

Եսթեր Ա. 40—47

Բէդուց առողջ 43—46 համարները :

Ոսկեպն համար . «Տէրոջը յանձնէ քու ճամբագ ,
ու անոր յուսա , եւ անիկա պիտի կատարէ , » Սաղմ.
1.5 :

1. Ի՞նչ կոչունք ըրաւ Ասուերոս թագաւորը ,
Գլ. Ա. 2—5 :

2. Թագաւորն ի՞նչ ընել հրամայեց : Գլ. Ա. 10, 11.

3. Վաշթի թագուհին հնազանդեցա՞ւ : Գլ. Ա. 12:

4. Ասոր համար ի՞նչ պատիժ հրամայուեցաւ :
Գլ. Ա. 19 :

5. Վաշթիին տեղ տիկին ըլլալու զո՞վ ընարեց
թագաւորը : Գլ. Ա. 17 :

6. Եսթեր ո՞վ էր , եւ ուրիշ ի՞նչ անուն ունէր :
Գլ. Ա. 5—7 :

7. Թագաւորը զո՞վ իշխանապետ ըրաւ : Գլ. Ա. 1:

8. Համան ինչո՞ւ համար հակառակ էր Մութ-
քէի : Գլ. Ա. 5 :

9. Ի՞նչ ընել խորհեցաւ : Գլ. Ա. 6 :
10. Թագաւորէն ի՞նչ խնդրեց : Գլ. Ա. 8, 9 :
11. Թագաւորն ի՞նչ պատասխան առւաւ : Գլ. Ա. 10, 11 :
12. Ի՞նչ հրաման ելաւ : Գլ. Ա. 12, 13 :
13. Մութքէ ի՞նչ ըրաւ անատեն : Հմր. 1—3 :
14. Ի՞նչ պատգամ զրկեց Խոթերայ : Հմր. 7, 8 :
15. Թագաւորին մօտենալու համար ի՞նչ զժուա-
րութիւն կար Եսթերայ : Հմր. 11 :
16. Մութքէ ինչո՞ւ համար ստիպեց զեսպեր ը-
սելով թէ պարտական էր երթալ թագաւորին : Հմր.
12—14 :
17. Եսթեր իրեն համար ի՞նչ ընել խնդրեց Հրեա-
ներէն , եւ ինք ի՞նչ ընել հաճեցաւ : Հմր. 16 :
18. Եսթեր ի՞նչ հնարք խորհեցաւ թագաւորին սիր-
ութ շահելու համար : Գլ. Ե. 1—8 :
19. Եսթեր հրաւիրելն զշաման՝ ի՞նչ ազդեցու-
թիւն ըրաւ այս վերջնոյն վրայ : Գլ. Ե. 9—12 :
20. Համան ինչո՞ւ համար բարկացած էր , եւ կինն
ի՞նչ իրատ տուաւ անոր : Գլ. Ե. 13, 14 :
21. Թագաւորը Մութքէի ի՞նչ պատիւ ըրաւ , եւ
ինչո՞ւ համար : Գլ. Ե. 1—11 :
22. Ի՞նչ աղերս մատոյց Եսթեր թագաւորին երկ-
րորդ կոչունքին ատենը : Գլ. Ե. 1—6 :
23. Թագաւորն ի՞նչ ընել հրաման ըրաւ Համանայ
համար : Գլ. Ե. 9, 10 :
24. Համանայ պաշտօնը որո՞ւ արուեցաւ : Գլ. Ա. 2 :
25. Եսթեր ուրիշ ի՞նչ ըան խնդրեց թագաւորէն :
Գլ. Ա. 3—6 :
26. Ի՞նչ հրամայեց թագաւորը : Գլ. Ա. 7—14 :

27. Այս հրամանն ի՞նչպէս կատարուեցաւ : Գլ . Թ . 1—6 :
28. Ի՞նչ էր Մուրթքէի մեծութիւնը եւ Հրէից ուրախութիւնը : Գլ . Ը . 15—17 :
29. Այս դէպքին համար ի՞նչ տօն հաստատուեցաւ : Գլ . Թ . 20—26 :
30. Այս զարմանալի փրկութիւնը ո՞վքերաւ Հրէից Սաղմ . Լէ . 5 :

Այս դասին պատմութիւնը կրնա՞ս համառօտիւ կրկնել :

Ծանօթնութիւններ

- (1) Կը կարծուի թէ Ասուերոս էր Քսերքսէս, Արտաշիսի հայրը : Եզր . է . 1: Նէեմ . Բ . 1 :
- (6) Աղասսա Նաթերայ Երբայեցերէն անունն էր : Նաթեր , կամ «Աստղ», » անունը հաւանականապէս Հրեայ ըլլալը ծածկելու համար տրուեցաւ անոր Երբ Նաթեր մտաւ թագաւորին կանանցը :
- (8) Մուրթքէ թերեւս այն անձն է որ Եղբասայ Բ . 2, եւ Նէեմնայ է . 7 համարներուն մէջ յիշուած է :
- (10) Սպանուելու Հրէից աւարէն կը յուսար Համան հատուցանել այս գումարը գանձին , եւ անկէ նաեւ շահիլ :
- (16) Նաթեր պիտի մեռցուէր , եթէ թագաւորին վճիռը գործադրուէր , լաւ էր որ կորսուէր իր ժողովուրդն աղատելու ջանալով : Մուրթքէի վստահութիւնն Աստուծոյ զարմանալի նախախնամութեանը վրայ յայտնի կը տեսնուի այս խօսքերէն :
- (17) Թէպէտ այս զիրքին մէջ Աստուծոյ անունը


բնաւ յիշուած չէ , յայտնի է թէ Նոթեր թագուհին այս առաջարկութիւնն ընելով Աստուծոյ օգնութիւնը կը փնտոէր :

(22) Նոթեր մեծ իմաստութեամբ յաջողեցաւ թագաւորին բարկութիւնը բերել անզգամ Համանին գլուխը :

(29) Համան վիճակով որոշած էր Հրէից կոտրածին օրը , ուստի եւ տօնը կոչուեցաւ բուռէմ որ վէճակ ըսել է :

Դէտուշներ

Աստուծոյ անունը եւ անոր արտաքին պաշտօնը կրնայ չգտնուիլ , բայց եթէ անոր ձեռքը եւ հողին ներկայ են , ամէն բան աղէկ կ'ըլլայ : — Զարերը շատ անգամ կ'իյնան որոգայթին մէջ զոր ուրիշներուն կը լարեն : — Աննշան աղջիկ մը միջոց եղաւ Աստուծոյ ժողովրդեան փրկութեանն ի մահուանէ : Այսպէս Աստուծած կը փրկէ ոչ միայն հզօրներու , այլեւ տկարներու ձեռքով :



Ժէ . ԴԱՍ , ԱՊՐԻԼ 27

Գալու Փրկիչը

Ես . ԽԲ . 1—10

Բէրնուց սորվէ 1—4 համարները :

Ուիւշէն համար . «Ատիկա է իմ սիրելի որդիս որուն հաւաներ եմ : » Մատթ . Գ . 17 :

1. Եսայի ե՞րբ էր, եւ ե՞րբ մարդարէացաւ: Գլ. Ա. 1:
 2. Այս դասին խօսքերը զո՞վ կ'ակնարկեն:
 3. Ի՞նչպէս պիտես: Մատթ. ԺԲ. 17—20, Ղուկ. Դ. 17—24:
 4. Քրիստոսի վրայ ի՞նչ ըսուած է: Հմր. 4:
 5. Ինչո՞ւ համար ծառայ կը կոչուի: Փիլիպ. Բ. 5—8:
 6. «Ընտրած» բառն ի՞նչ կը նշանակէ: Մատթ. ԺԲ. 18:
 7. Հայրն ի՞նչ հոգի պիտի տայ անոր: Գլ. ԺԱ. 2:
 8. Ինչո՞ւ համար: Գլ. ԺԱ. 3, 4:
 9. Ի՞նչ պիտի չընէ: Հմր. 2, 3:
 10. Այս խօսքերն ի՞նչպէս կը մեկնես:
 11. Ի՞նչ բան դլուխ հանելու պիտի յարատեւէ: Հմր. 4:
 12. Կողմաներն ինչո՞ւ համար յատկապէս յիշուած են:
 13. Ի՞նչ բանի մէջ յայտնի է Եհովայի զօրութիւնը: Հմր. 5:
 14. Ի՞նչ բանով կանչեց Տէրը զՓրկիչ: Հմր. 6:
 15. Ի՞նչ օգնութիւն կը խստանայ անոր:
 16. Քրիստոս ի՞նչ պիտի ընէ կոյրերուն համար: Հմր. 7:
 17. Քրիստոս ի՞նչ տեսակ կուրութիւն կը վերցնէ:
 18. Բանափի մէջ եղողներուն ամար ի՞նչ պիտի ընէր: Հմր. 7, Գլ. ԿԱ. 1:
 19. Հոս խօսքն ի՞նչ տեսակ բանտարկելոց համար է: Բ. Տիմ. Ա. 8:
 20. Ասուուած ի՞նչ բանի նախանձաւոր է: Հմր. 8:
- Ել. 1. 3—5:

21. Որո՞ւ չի տար իր վառքը:
22. Ո՞վ իրաւամք մասնակից է Հօրը վառաց: Յովի:
- Ա. 14: Երբ. Ա. 3:
23. Ի՞նչ նոր անտեսութեան աւետիս տրուած է: Հմր. 9:
24. Ի՞նչ ուրախութեան կը հրաւիրուին ամէնքը:
- Հմր. 10:
25. Ինչո՞ւ համար:

Այս դասին պատմութիւնը կրնան համառութիւնը կրկնել:

Ծանօթութիւն+

(1) Եսայի ոչ միայն մարդարէ, այլև պատմիչ էր: Բ. Մնաց. ԿԶ. 22: ԼԲ. 32: Աւանդութիւն կայ թէ Եսայի Մանասէի հրամանաւ սղոցուեցաւ մէջը պարապ ծառի մը կոճղին մէջ: Տես Երբ. ԺԱ. 37:

(9) Այս խօսքերէն կը սորվինք Քրիստոսի հեղութիւնը: Բարձրաձայն պիտի չաղաղակէ փողոցներուն մէջ: Պիտի չգրմէ այն մարդը որ եղէզի պէս արգէն կոտրած է ըստ մասին, ոչ ալ պիտի մարէ վերջին նուազ յոյսը որ կանթեղի մը պլացող պատրուգին պէս մօտ է սպառելու տիսուր եւ տառապեալ մարդուն սրտին մէջ:

(11) Եթէ կը հաւատանք Աստուծոյ խօսքին, չենք կրնար տարակուսիլ թէ Քրիստոս ի վախճանի պիտի յաջողի արդարութիւն հաստատել բոլոր երկրի վրայ:

(12) Երկրիս հեռաւորագոյն կողմերը:

(13) Կ'ակնարկէ ստեղծադործութիւնն իբրեւ ա-

պացոյց աստուածային կարողութեան :

(14) Իր արդարութիւնը , միանգամայն իր Որդւոյն արդարութիւնը :

(19) Բոլոր յանիրաւի բանտարկեալները կամ հարբատահարեալները , մանաւանդ անոնք որ Քրիստոսի համար հալածուած են :

Դիրութիւններ

Արդար դատաւոր մը բարեկամ է աղքատաց եւ հարբատահարելոց : — Քրիստոս քաղցր եւ զթած բարեկամ է խոնարհաց եւ զլացելոց , բայց մաշող կրակ է անոնց որ անոր դէմ ապստամիութեան մէջ կը տեսն :



Ժ. ԴԱՍ , ՄԱՅԻՍ 4

Զարչարեալ Փրկիչը

Ես . ԱԳ . 1—12

Բէքնուց սորվէ 1—6 համարելու:

Ոսէղն համար . «Որ մեր մեղքերը իր մարմինովը խաչափայտին վրայ վերցուց : » Ա. Պետ . Բ . 24 :

1. Ի՞նչ գանգատ ըրաւ մարդարէն : Հմր . 1 :

2. Պօղոս ի՞նչպէս կը մեկնէ այս խօսքը : Հռովմ . Ժ . 16 :

3. Մարդարէն ի՞նչ գուշակութիւն կ'ընէ : Հմր . 2 :

4. Որո՞ւ համար ըսուած են այս խօսքերը : Գլ . ԺԱ . 1: Գործ . ՃԳ . 22 , 23 :

5. Ի՞նչ տեսակ տունկ պիտի ըլլար Քրիստոս , եւ ի՞նչ երեւոյթ պիտի ունենար : Հմր . 2 : Գլ . ԾԲ . 14 :

6. Մարդոցէ ի՞նչ տեսաւ : Հմր . 3 :

7. Մէն + ի՞նչ ըրինք անոր : Հմր . 3 :

8. Քրիստոս ի՞նչ ըրաւ մեղի համար : Հմր . 4 :

9. Որո՞ւ համար վիրաւորուեցաւ եւ ծեծուեցաւ : Հմր . 5 :

10. Ի՞նչ պատիժ եղաւ անոր վրայ , եւ մենք ի՞նչ-պէս բժշկուեցանք : Հմր . 5 :

11. Որո՞նց պէս մոլորեցանք , եւ Տէրը որո՞ւ վրայ դրաւ մեր անօրէնութիւնը : Հմր . 6 :

12. Քրիստոս իր բոլոր չարչարանքն ի՞նչպէս կրեց : Հմր . 7: Ա. Պետ . Բ . 23 :

13. Անոր աղդատոհմին համար ի՞նչ ըսուած է , եւ ի՞նչո՞ւ համար : Հմր . 8 :

14. Ուր զրուեցաւ անոր գերեզմանը : Հմր . 9 :

15. Ոյս մարդարէութիւնն ի՞նչպէս կատարուեցաւ : Մատթ . Խէ . 57—60 :

16. Իր մարմինը զոհ ընելէն ետքն ի՞նչ պիտի տեսնէ : Հմր . 10 :

17. Ի՞նչ մոօք կրնայ ըսուիլ թէ Տէրը մատնեց զբրիստոս ծեծի եւ ցաւերու :

18. Ի՞նչ յաջողութիւն պիտի ստանայ , եւ ի՞նչ մեծ դորձ պիտի կատարէ : Հմր . 11 :

19. Ի՞նչ յանցաւորներու կարգը դասուեցաւ : Մարկ . ԺԵ . 27 , 28 :

20. Խաչին վրայ որո՞ւ համար բարեխօսութիւն ը-րաւ : Դուկ . ԻԳ . 34 :

21. Աստուած ի՞նչ յաղթութիւն խոստացաւ
Փրկչին ի վախճանի, եւ ինչո՞ւ համար: Հմր. 42:
22. Քրիստոս ի՞նչ էր, եւ ի՞նչպէս վերցուց աշ-
խարհի մեղքը: Յով: . Ա. . 29: Եբբ. Թ. . 28:
23. Քրիստոսի մահը հարկաւո՞ր էր մեր փրկու-
թեանը համար: Հոռովմ: Ե. Յ. 6: Ա. Պետ. Բ. . 24:

**Այս դասին պատմութիւնը կրնա՞ն համա-
ռութիւն կրնել:**

Ծանօթութեան:

(5) Քրիստոս անջուր երկրէ եւած տունկի պէս
մատազ եւ փափուկ պիտի ըլլար:

(15) Քրիստոս հարուստ մարդու մը գերեզմանը
դրուեցաւ, եւ չարերուն գերեզմաններն անոր բո-
ւրստիքն էին:

(16) Հոգեւոր սերունդ:

(17) Տէրը թոյլ տուաւ որ չարչարուէր, որպէս զի-
քաւութիւնը ըլլար աշխարհի մեղաց:

Դէմութեան:

Մարդ չարչարուելով Քրիստոսի նման կ'ըլլայ, .
սա տարբերութեամբ որ մարդու չարչարանքը
խրատու կամ ուղղութեան համար է, մինչ Քրիստո-
սինը՝ քաւութեան համար էր: — Լաւ է չարչա-
րուելով Քրիստոսէ սիրուիլ, քան յաշողութիւն վա-
յելել առանց չարչարուելու: — Ո՞վ կրնայ այսպէս
խստասիրտ ըլլալ մինչեւ մերեկ Քրիչ մը որ մեզ
այնպիսի գնով փրկեց:

Ճ.Թ. . Գ.Ա.Ս., Մ.0.ՅԻ.0 14

Փրկչին հրաւելու

Ես . ԾԵ. 4 — 11

Բէլնուց առվէ 1, 6—8 համարները:

Ուկելն համար. « Թէ որ մէկը ծարաւ է՝ թող
ինձի զայ ու խմէ»: Յով: . է. . 37:

1. Ի՞նչ հրաւել տրուած է եւ որո՞ւ: Հմր. 1:
2. Հոս ի՞նչ տեսակ ծարաւի վրայ է իսուքը:
Մատթ. Ե. . 6:

3. Այս ջուրն ո՞վ կու տայ մեղի խմելու, եւ ո՞ր-
չափ անդամ պիտի կարօտինք խմել անկէ: Յով: .
է. . 37, 38:

4. Ջուրէն զատ ուրիշ ի՞նչ կը խոստացուի, եւ
ի՞նչպէս կը ստացուի: Հմր. 1:

5. Մարդիկ ընդհանրապէս ի՞նչ բանի համար
կ'աշխատին եւ ստակ կու տան: Հմր. 2:

6. Ինչո՞ւ համար հարուստները չեն յագիր Ղուկ.
ԺԲ. . 19, . 20:

7. Ի՞նչ է ճշմարիտ հացը, եւ ի՞նչ է այն որ
ստուգիւ կը յագեցնէ: Յով: . Զ. . 32—33:

8. Ի՞նչ խոստումներ կը ստիպէն զմնդ ընդունիլ
տրուած փրկութիւնը: Հմր. 3:

9. Ո՞վ վկայ պիտի ըլլայ ժողովրդեան: Յով: .
Ժ.Բ. . 37:

10. Աստուած զՔրիստոս ուրիշ ի՞նչ բան ըլլալու
տուաւ: Հմր. . 4:

11. Ո՞վ պիտի անսայ Աստուծոյ հրաւելին Հմր. 5:

12. Ի՞նչ ընել կը յորդորուինք : Հմր . 6 :
13. Ե՞րբ կը գանուի Տէրը , եւ Ե՞րբ չի գանուիր : Մատթ . ԽԵ . 4—13 :
14. Տէրը Ե՞րբ մօտ է , եւ Ե՞րբ հեռու : ԳԼ . ԿԳ . 10 : Յակ . Դ . 8 :
15. Ամբարիշտն ի՞նչ պայմանաւ կրնայ ողորմութիւն դանել Աստուծմէ : Հմր . 7 :
16. Աստուծոյ խորհուրդները եւ ճամբաներն ի՞նչ-պէս կը տարբերին մերիններէն : Հմր . 8 , 9 :
17. Եթէ Աստուած մարդոց պէս ըլլար , այնչափ զթութեամբ կը վարուէ՞ր չարերուն հետ որչափ կը վարուի հիմա : ԳԼ . ԽԹ . 15 : Սադմ . ԽԵ . 10 : ՃԳ . 14 :
18. Ո՞վ կը զրկէ անձրեւն ու ձիւնը երկինքէն , եւ ինչո՞ւ համար : Հմր . 10 : Մատթ . Ե . 45 :
19. Ի՞նչ բանի նման է Աստուծոյ խօսքը , եւ ի՞նչ պիտի կատարէ : Հմր . 11 :
20. Աստուծոյ խօսքին տարածուելէն ի՞նչ ուրախութիւն եւ օրհնութիւն յառաջ պիտի դայ : Հմր . 12 , 13 :
21. Ինչո՞ւ համար երանի կը տրուի ծարաւիներուն : Մատթ . Ե . 6 :
22. Ի՞նչ օրհնութիւն պիտի վայելեն անոնք որ խմելու համար հոս տրուած հրաւէրը կ'ընդունին : Յովլ . Դ . 14 :

**Այս դասին պատմութիւնը կրնա՞ն համա-
ռոտիւ կրկնել:**

Մանօնութիւն+

(4) Գինին եւ կաթը կը յիշուին իբրեւ ուրախութիւն եւ զօրութիւն տուող նիւթեր :

(7)Քրիստոսի ապաւինելը կու տայ այն գոհութիւ-
նը եւ խաղաղութիւնը յորս կը կայանայ ճշմարիտ
երշանկութիւնը :

(11) Ասրայելացիք թերեւս պիտի մերժէին Փրկչը ,
բայց հեթանոս ազգերը պիտի ընդունէին զանի :
Տես Մատթ . Ը . 11 , 12 :

(12 , 13) Այս խօսքն ուղղուած է մանաւանդ
Ասրայելացւոց . կը յօրդորէ զանոնք ապաշխարել եւ
վրկութիւն ընդունիլ Աստուծոյ առջեւ , որ չըլլայ
թէ թողու զանոնք եւ դառնայ հեթանոսներուն :

Դէքու-Եկան+

Աստուած հեռու է անոնցմէ միայն որ կ'ուզեն
հեռանալ անկէ : Աստուծոյ խօսքը հաւատարմու-
թեամբ քարոզելը չի կրնար բոլորովին անպատող
ըլլալ :

Ի . ԴԱՍ , ՄԱՅԻՍ 18

Փրկչին թագաւորութիւնը

Մէք . Դ . 1—8

Բէքնուց սորվէ 1—4 համարները :

Ոսէչէն համար . « Եկէք՝ Եհովային լեռը՝ Յակո-
բին Աստուծոյն տունը ելլենք : » Հմր . 2 :

1. Սիրիա Ե՞րբ էր , եւ Ե՞րբ մարդարէ ացաւ : ԳԼ .
Ա . 4 :

2. Ի՞նչ կը մարդ արէանայ թէ պիտի պատահէր
վերջին օրերը : Հմր . 1—3 :
3. Նոյն խօսքն ուրիշ ո՞ւր կը գտնուի : Ես . Բ .
2—4 :
4. Տէրոջը տանը լեռն ի՞նչ էր : Սաղմ . Բ . 6 :
5. Ի՞նչ կը նշանակէ սա խօսքը , « Լեռներուն
դլխուն վրայ պիտի հաստատուի , » եւայլն :
6. Ազգերն ի՞նչ ընել պիտի առաջարկեն :
7. Ի՞նչո՞ւ համար :
8. Պատերազմի զէնքերն ի՞նչ պիտի ըլլան :
9. Ժողովարդն ի՞նչ յաջողութիւն եւ ապահո-
վութիւն պիտի վայելէ : Հմր . 4 :
10. Այս օրերը սուստ աստուածներ պաշտողներ պի-
տի ըլլա՞ն : Հմր . 5 :
11. Բայց եւ այնպէս կուապաշտներ պիտի մոլորե-
ցընե՞ն Աստուծոյ ժողովուրդը :
12. Աստուած ի՞նչ պիտի ընէ ցաւադարները եւ
աքսորեալները : Հմր . 6 :
13. Ո՞վ պիտի թագաւորէ անոնց վրայ , եւ Ե՞րբ ,
Հմր . 7 :
14. Թագաւորութիւնը որո՞ւ պիտի դայ : Հմր . 8 :
15. Սիոնի աղջիկն ո՞վ է :
16. Այս վերջին օրերը Ե՞րբ պիտի ըլլային : Գործ .
Բ . 17 :
17. Պատերազմները դադրեցա՞ն : Գողերէ եւ սպա-
նողներէ բոլորովին աղա՞տ ենք : Կրօնական աղա-
տութիւնն ամէն տեղ կը տիրէ :
18. Ուրեմն այն վերջին օրերը եկա՞ծ են թէ դեռ
պիտի դան :
19. Այս մարդարէ ութիւնը Ե՞րբ պիտի կատարուի ,
Յայտ . ԺԱ . 15 :

20. Պատերազմի երթալ օրէ՞ն է Քրիստոնէից :
Այս դասին մէջ ըսուածները կրնա՞ն համա-
ռօտիւ կրկնել :

Ծառայութեան +

(3) Միքէ իր միտքն աղէկ բացատրելու համար՝
Խսայեայ խօսքը կ'առնէ :

(10, 11) Այս խօսքերը թերեւս կը վերաբերին
զերութենէ դարձի ժամանակին , երբ , թէպէս կուա-
պաշտ ազգերէ պաշարեալ էր Աստուծոյ ժողովուր-
դը , չմոլորեցաւ , ինչպէս մոլորած էր առաջ :

(15) Եկեղեցին :

(16) Այս վերջին օրերն ընդհանրապէս Քրիստոսի
թագաւորութեան օրերն են :

(20) Ամէն մարդ իրաւունք ունի պաշտպանել իր
անձը եւ ընտանիքը , նաև իր քաղաքական եւ կրօ-
նական աղատութիւնը չար մարդոց յարձակումնե-
րուն դէմ : Այսպիսի պաշտպանութիւն մը շատ ան-
դամ պատերազմի կը տանի , եւ անատեն օրինաւ-
որ է պատերազմը :

Գիտութեան +

Ընդհանուր խաղաղութիւն կարելի է այն ատեն
միայն երբ բոլոր մարդիկ կը հնաղանդին Քրիստոսի
թագաւորութեանը : — Քրիստոսի պատերազմական
զէնքերը հոգեւոր են , բայց մարմնաւոր զէնքեր
գործածել երբեմն հարկ կ'ըլլայ Սատանային պաշ-
տօնեաներուն դէմ դնելու համար : Տես Ղուկ . ԻԲ .
36 :

ԻԱ. ԴԱՍ, ՄԱՅԻՍ 25

Հոգւոյն Սրբոյ տրուելուն խոստումը

Յովէլ Բ. 28—32

ԲԵՐԵՎԵՐ ՅՈՎԷԼ 28—32 ՀԱՅԱՆԵՐ :

Ուկեղին համար . « Բայց Հոգւոյն Սրբոյ ձեր վրայ
եկած ատենը զօրութիւն պիտի առնեք : » Գործ .
Ա . 8 :

1. Յովէլ մարդարէին վրայ ի՞նչ դիմենք : Գլ . Ա . 1 :
2. Վերջին օրերուն համար ի՞նչ խոստում եղած
է : Հմր . 28 :

3. Սուրբ Հոգւոյն հեղումը ո՞րչափ տարածեալ
պիտի ըլլար :

4. Տղայք եւ աղջկունք անոր աղղեցութեամբն
ի՞նչ պիտի ընէին :

5. Եերմրը եւ երիտասարդներն ի՞նչ պիտի տեսա-
նէին :

6. Ուրիշ ի՞նչ կարդի մարդիկ ալ պիտի չմոռ-
ցուէին : Հմր . 29 :

7. Քրիստոնէութեան հաւասարեցուցիչ զօրութեան
վրայ ի՞նչ ըսուած է : Ա Կոր . ԺԲ . 13 : Գաղ . Գ . 28 :

8. Յովելեայ այս մարդարէութիւնը Ե՞րբ կատար-
ուեցաւ : Գործ . Բ . 17, 18 :

9. Ուրիշ ի՞նչ նշան պիտի տեսնուէր : Հմր . 30 :

10. Ի՞նչ պիտի պատահէր արեգական եւ լուսնի :
Հմր . 31 :

11. Այս նշաններն ի՞նչ կը նշանակեն :

12. Ուրիշ ո՞վ մարդարէացաւ նոյն նշանները , եւ
ի՞նչ դէպքի համար : Մատթ . ԻՒ . 29, 34 :

13. Ե՞րբ պիտի ըլլար Տէրոջը մեծ ու ահեղ օրը :
Մաղ . Դ . 5, 6 : Մատթ . ԺԱ . 13, 14 :

14. Մարդ ի՞նչ միջոցներով կրնայ փրկութիւն
ստանալ : Հմր . 32 :

15. Ո՞ւր միայն կրնայ գտնուիլ փրկութիւնը :

16. Հին ժամանակները մասնակից չեղա՞ւ ժողո-
վուրդն Աստուծոյ Հոգւոյն : Թու . ԺԱ . 17, 25 :
Նէեմ . Թ . 20 : Սաղմ . ԾԱ . 11 :

17. Հին կտակարանին ժամանակն ի՞նչ նպատակի
համար գլխաւորապէս կը արուէր Հոգին Սուրբ : Ա
թագ . Ժ . 6 :

18. Նոր կտակարանին մէջ ի՞նչ նոր անուն տղր-
ուած է Սուրբ Հոգւոյն : Յովէ . ԺԴ . 16, 17, 26 :

19. Նոր տնտեսութեան մէջ ի՞նչ նոր պաշտօն
ունի Հոգին Սուրբ : Յովէ . ԺԶ . 7—14 :

20. Քրիստոս իր Հոգւովը մենէ ամէն մէկուն ալ
այցելութիւն կ'ընէ : Յայտ . Գ . 20 :

21. Ի՞նչ բան չընելու հոգ տանելու ենք : Եփես .
Դ . 30 :

Այս գասին պատմութիւնը կրնա՞ն համա-
ռոտիւ կրկնել :

ԾԱՅՆԵՐՆԵՐԻ ՆԵՐ :

(1) Յովելեայ վրայ աւելի բան մը զիտցուած չէ :

(11) Աղէտք , ինչպէս՝ պատերազմ , սով եւ սրա-
ծութիւն :

(12) Երուսաղեմի աւերման համար :

(17) Հին անտեսութեան մէջ մարդարէութիւն ընկու չնորհքը նոյնպէս շատ քիչերու կը տրուէր . հիմա Հոգին Սուրբ ամենուն այցելութիւն կ'ընէ , կը համոզէ մարդը թէ մեղաւոր է , Քրիստոսի կ'առաջնորդէ դանի , եւ տրտմութեան մէջ կը միխթարէ :

Դիրք-Եւն:

Սուրբ Հոգին մերժող անձը կը մնայ խաւարի եւ տիրութեան մէջ . — Հոգին Սուրբ ընդունող անձը կը ստանայ երկնային լոյս եւ աստուածային զօրութիւն : — Սուրբ Հոգւոյն միջոցաւ միայն կրնանք քերուիլ Քրիստոսի եւ փրկուիլ : Յովի . Զ . 44 .

իբ . ԴԱՍ , ՅՈՒՆԻՍ 1

Տիւրոսի դէմ մարդարէութիւն

Եղեկ . ԵԶ . 7—14

Բէրնուց ուրէ 7, 13, 14 համարէլը :

Ուկեղն համար . « Երկինք ու երկիր պիտի անցնին , բայց իմ խօսքերս բնաւ պիտի չանցնին : » Մատթ . ԵՒ . 35 :

1. Եղեկիէլ ուր եւ ե՞րբ մարդարէացաւ : Գլ . Ա . 4—3 :

2. Ո՞ր քաղքին դէմ մարդարէացաւ Եղեկիէլ : Գլ . Եվ . 2 :

3. Ի սկզբան ի՞նչ բանի պիտի գործածուէր :

Եւ Երուսաղեմի մէջտեղ : Դ Թագ . Ե . 4, 12 :

4. Ո՞ւր էր եւ ի՞նչ տեսակ քաղաք էր Տիւրոս : Գլ . Եվ . 3 :

5. Ի՞նչ էր անոր առուտուրը : Գլ . Եվ . 20—25 :

6. Ի՞նչ էր անոր հարստութիւնը : Գլ . Ել . 4 , 5, 43 :

7. Ի՞նչ էր անոր հպարտութիւնը : Գլ . Ել . 2, 3 , 17 :

8. Ուրիշ ի՞նչ մասնաւոր մեղքի համար կ'ամբաստանուի : Գլ . Ել . 18 :

9. Ի՞նչ հարուածներ եկած էին այն ատեն Երուսաղեմի վրայ : Դ Թագ . Են . 8—10 :

10. Ի՞նչ նախատինք թափեց Տիւրոս Երուսաղեմի վրայ անոր թշուառութեանը համար : Հմր . 2 :

11. Ինչո՞ւ համար Տիւրոս այսպէս ուրախացաւ Երուսաղեմի անկման վրայ :

12. Ուստի Աստուած ի՞նչ սպառնացաւ Տիւրոսի : Հմր . 3 :

13. Ո՞ր հզօր թագաւորը պիտի գա՞ր անոր դէմ : Հմր . 7 :

14. Զ՞ո՞վ պիտի սպաննէր այս թագաւորը : Հմր . 8 :

15. Քաղաքը նուաճելու համար ի՞նչ միջոցներ պիտի գործածէր : Հմր . 8, 9 :

16. Արշաւողին ձիերուն թուոյն համար ի՞նչ ըսուած է : Հմր . 10, 11 :

17. Ի՞նչ աւերմունք պիտի ընէր : Հմր . 12 :

18. Ի՞նչ ուրախութիւններ պիտի գադրէին : Հմր . 13 :

19. Քաղքին տեղն ի՞նչ բանի պիտի գործածուէր : Հմր . 14 :

20. Տիւրոսի անկումն ի՞նչ ազգեցութիւն պիտի
ընէր ուրիշ ազգերու եւ երկիրներու վրայ, Հմր. 45—48:

21. Ինչո՞ւ համար այնպէս պիտի խռովէին: Գլ. Իէ. 32—34:

22. Ի՞նչ հատուցում ընել որոշեց Աստուած նաւ-
բռուգողոնսոսորայ այն ծառայութեան համար զոր ը-
րաւ զՏիւրոս կործանելով: Գլ. Իթ. 48—20:

23. Տիւրոս քաղաք ըլլալէ իսկ եւ իսկ դադրե-
ցա՞ւ: Գործ. ԺԲ. 20. Իթ. 3:

24. Ուրիմն ի՞նչպէս հասկնալու ենք մարգարէու-
թիւնը:

25. Կարելի՞ն է որ Աստուծոյ խօսքը չկատարուի:
Մատթ. ԻՒ. 35:

Այս դասին պատմութիւնը կրնա՞ն համա-
ռութիւն կրնալ:

Ծանօթանիւններ

(4) Տիւրոս Փիւնիկեցւոց քաղաք էր Միջերկրա-
կան ծովին եղերքը:

(8) Այլեւայլ տեսակ խարդախութեանց համար
զորս անխիղճ վաճառականներ կ'ընէին:

(11) Թերեւս Տիւրոս զայրացած էր Հրէից, վասն
զի Յովսիա ջնջեց կուպաշտութիւնը որ այնպէս
սիրելի էր Տիւրացւոց, բայց հաւանական է մանա-
ւանդ թէ Տիւրացիք ուրախացան, վասն զի անոնց
մեծամեծ սոսիներէն մին վերցաւ մէջտեղէն:

(13) Նարուգողոնսոսոր 13 տարուան պաշարումէ
ետքը միայն կրցաւ առնել զՏիւրոս:

(14) Ոմանք կը կարծեն թէ «աղջիկներ» բառը
կը նշանակէ փոքր հարկատու քաղաքներ, բայց հա-
ւանականագոյն է մանաւանդ թէ այն բառով կ'ի-
մացուին քաղքին կանայք որ արտերուն մէջ կը
դործէին, եւ որոց վրայ զօրքն այնպէս յանկարծ
հասաւ որ չկրցան փախչիլ քաղաքը:

(22) Հաւանական է թէ պաշարման ատենը Տիւ-
րոսի ժողովուրդն իր հարստութեան մեծ մասը փա-
խուցած էր ծովով ուրիշ ապահով տեղ, այնպէս որ
Նաբռուգողոնսոսորայ զօրքը քաղաքն առնելէն ետքը
շատ քիչ աւար դատաւ հոն:

(23) Տիւրոս յետոյ նորէն շինուեցաւ կղզւոյ մը
վրայ ցամաքին մօտ եւ եղաւ այնպէս հղօր, որ Ա-
ղեքսանոր մեծ եօթն ամիս պաշարելով հաղիւ ա-
ռաւ քաղաքը 332ին նախ քան զՔրիստոս:

(24) Տիւրոս երբէք չստացաւ նորէն այն փառքը
զոր ունէր Նաբռուգողոնսորէ նուաճուելէն առաջ,
եւ հիմա Տիւրոս փոքրիկ գիւղ է ձկնորսաց, «ա-
պառաժ» մը որուն վրայ ձկնորսք իրենց ուռկան-
ները կը փոեն:

Դէտուշ-Եւններ

Սուրբ բաները ծաղրել մեծ մեղքերէն մէկն
է: — Հոգւոյն Արքոյ գէմ հայհոյելն այս տեսակին
կը վերաբերի: Մատթ. Գ. 28—30: — Ամբարիչտ
մարդիկ թերեւս ապահով կը կարծեն զիրենք երբ
կը ծաղրեն Աստուծոյ եկեղեցին եւ ժողովուրդը,
բայց Աստուած ի վախճանի խստիւ համար պիտի
պահանջէ անոնցմէ: — Մարգարէութեան ամբողջ

կատարումը կրնայ երկար ատեն յապաղել , բայց
տարակոյս չկայ թէ ժամանակին պիտի պատահի :

ԽԳ. ԴԱՍԱՀԱՅԻ ՏՎԱԿԱՆ Ե ԾՈՐԱՆԱՅԻՆԻԱ
ՀԱՅԻ ԱՆԱՋԱՎՈՐ ԲՈՒԺԱՅԻ ԱՐԵՎԱԿԻ



ԽԳ. ԴԱՍԱ ՅՈՒՆԻՍ 8

Չորս ոսկրներուն հովիտը

Եզեկ . Լէ . 4—10

ԱԵՐՆԵՐ ԱՐՔԵ 7—10 համարներ :

Ա-Է-Ն-Ե-Ն համար . «Հոգին է կենդանի ընողը , մար-
մինը շահ մը չըներ . ան խօսքերը որ ես ձեղի կը
խօսիմ՝ հոգի ու կեանք են : » Յովի . 9 . 64 :

1. Տէրը ո՞ւր տարաւ զեղեկիէլ տեսլեան մէջ ,
և Եղեկիէլ ի՞նչ տեսաւ : Հմր . 1 :

2. Այս ոսկրներուն թիւը եւ վիճակն ի՞նչ էր :
Հմր . 2 :

3. Տէրն ի՞նչ ըսաւ Եղեկիէլի , եւ Եղեկիէլ ի՞նչ
պատասխաւ տուաւ : Հմր . 3 :

4. Ի՞նչ ընել հրամայուեցաւ անոր : Հմր . 4 :

5. Ինչո՞ւ համար սա պատասխանը չտուաւ , «Չոր
ոսկրներուն խօսք հասկցնել անկարելի է : »

6. Ի՞նչ պիտի ըսէր ոսկրներուն : Հմր . 5 , 6 :

7. Ի՞նչ արդիւնք ունեցաւ Եղեկիէլի մարդարէա-
նալը : Հմր . 7 , 8 :

8. Երիշ ի՞նչ պատուէր ընդունեցաւ Եղեկիէլ :
Հմր . 9 :

9. Ասոր հետեւանքն ի՞նչ եղաւ : Հմր . 10 :

10. Այս ոսկրներն ի՞նչ կը նշանակին : Հմր . 11 :

11. Ի՞նչ յարութիւն խոստացուած էր Խարայելաց-
ոց : Հմր . 12 :

12. Ի՞նչ պիտի սորվէր անատեն ժողովուրդը :
Հմր . 13 :

13. Նաեւ ի՞նչ նորոգութիւն խոստացուած է :
Հմր . 14 :

14. Ի՞նչ վիճակի մէջ էին անատեն Հրեայք : Գլ .
Ա . 3 :

15. Ի՞նչ նորոգութիւն կ'ակնարկուի հոս : Հմր .
22—25 :

16. Մարդուս հոգեւոր վիճակն ի՞նչ է ի բնէ : Բ
Կոր . Ե . 14 : Եփես . Բ . 1 :

17. Այսպէս հոգեւորապէս մեռեալ մը որո՞ւ զօ-
րութեամբ կրնայ կենդանանալ : Եփես . Բ . 4—7 :

18. Ի՞նչ հրաշքով Քրիստոս ցուցուց հոգեւոր մահ-
ուանէ յարուցանելու զօրութիւնը : Յովի . ԺԱ . 41
—44 :

19. Եղեկիէլի գործածած միջոցներուն նման ի՞նչ
միջոց գործածեց նաեւ Քրիստոս : Յովի . ԺԱ . 43 :

20. Ի՞նչ խրատու հետեւելու ենք : Բ Տիմ . Դ . 2 :

21. Եթէ կենդանի թշնամիներու հանդիպինք ,
ի՞նչ զէնքով կուռելու ենք անոնց դէմ : Եփես . Զ .
17 : Յայտ . Բ . 16 :

22. Եթէ ամէնքը մեռած են մեղօք , ի՞նչ միջոցով
կրնան յարութիւն առնել : Երեմ . ԽԳ . 29 : Յովի .
Զ . 63 :

23. Եթէ եկեղեցին կարօտ է մաքրուելու , ի՞նչ
միջոցով կրնայ մաքրուիլ : Յովի . Ժէ . 17 : Եփես .
Ե . 26 :

24. Այս դասը մեղի ի՞նչ երեւելի պարտականու-
թիւն կը սորվեցնէ :

Այս գասին մէջ ըստածները կրնա՞ն համա-
ռօտիւ կրկնել։
Մասնաւութեան

(6) Անոր քարոզութիւնն ուրիշ բան չէր եթէ ոչ
կեանք խոստանալ մեռելոց։

(8) Կենդանութեան շունչ չունեցող մարմնն մը
չոր ոսկրներու պէս անօգուտ է։

(15) Երուսաղէմ դառնալը, բայց այս քարոզու-
թիւնը Դաւթի որդւոյն Քրիստոսի հոգեւոր թագա-
ւորութիւնն ալ կ'ակնարկէ։

Ամենէն չար մնջաւորը ըուրոզվին անյօյս զիմա-
կի մէջ չէ։ — Քրիստոնեայ մը կամ եկեղեցի մը
կրնայ միս ունենալ, բայց եւ անպէս զուրկ ըլլալ
կենդանութեան շունչէ։ — Աստուծոյ խօսքը քան
ուրիշ ամէն զէնք զօրաւոր է։ — Ամէն քարոզու-
թիւն բղխելու է քարոզչին հաստատուն հաւատ-
քէն, եւ լեցուն ըլլալու է երկնից յուսովը եւ
խոստամբը։

Իր. ԴԱՍ, 80ԽՆԽՍ 15

Աստուծոյ Հոգւոյն պէտքը

Զաք. Դ. 1—14

Բէրնաց առք 4—7 համարները։

Ուկեղին համար. «Զօրութեամբ չէ, եւ ուժով չէ,
հապա իմ Հոգւովս, կ'ըսէ զօրաց Տէրը» Հմր. 6։

1. Ա՞շէր Զաքարիա, եւ ե՞րբ մարդարէացաւ, Գլ.
Ա. 1։

2. Ի՞նչ գործի օգնեց Զաքարիա։ Եղր. Ե. 1, 2։

3. Քնոյ մէջ ո՞վ երեցաւ անոր։ Հմր. 1։

4. Ի՞նչ ցուցուց անոր։ Հմր. 2։

5. Բուն աշտանակն ի՞նչ բանի մաս էր։ Ել. ԻԵ.
31, 37։

6. Եօթը աշտանակները Յայտնութեան մէջ ի՞նչ
կը ցուցնեն։ Յայտ. Ա. 20։

7. Զաքարիա ուրիշ ի՞նչ բան տեսաւ։ Հմր. 3։

8. Այս ձիթենեաց վրայ ի՞նչ հարցուց։ Հմր. 11,
12։

9. Հրեշտակն ի՞նչ պատասխան տուաւ։ Հմր.
13, 14։

10. Յայտնութեան մէջ աշտանակներն ի՞նչպէս
մեկնուած են։ Յայտ. ՖԱ. 3, 4։

11. Հրեշտակն ի՞նչպէս մեկնեց Զաքարիայի տե-
սիլքը։ Հմր. 5, 6։

12. Զօրաբարէլ ի՞նչ մեծ գործի ձեռք զարկաւ։
Եղր. Դ. 3։

13. Այս գործն ի՞նչպէս արգելուեցաւ : Եղբ . Դ . 23 , 24 :
14. Այս արգելքն ի՞նչ պիտի ըլլար Զօրաբարելի առջեւ : Հմր . 7 :
15. Ինչո՞ւ համար : Մատթ . 1 Ա . 24 :
16. Զօրաբարէլ այն տունը շինելու մէջ ի՞նչ յազողութիւն պիտի զանէր : Հմր . 8 , 9 :
17. Փոքր բաներուն օրն ի՞նչպէս նկատելու ենք : Հմր . 10 :
18. Գործը կատարուած տեսնելով ո՞վ պիտի ուրախանար : Հմր . 10 :
19. Տէրողը եօթը աչքերն ի՞նչ կը ցուցնեն :
20. Երկու ձիթենիները զո՞վ կը ցուցնեն :
24. Ի՞նչ օծում վնատելու ենք : Ա . Յով . Բ . 20 , 27 :
- Այս դասին մէջ ըսուածները կրնա՞ն համառոտիւ կրկնել :

Ծանօթական +

(4) Այս աշտանակը տաճարին աշտանակէն կը տարբերէր այսու որ այս աշտանակն իր իւղն ինք յառաջ կը բերէր , եւ այս բանը նշան էր Աստուծոյ շնորհաց անսպառութեանը : Այս բանին մէջ կը տեսնենք Քրիստոնէական տնտեսութեան գեր ի վերոյ ըլլալը քան դէրէականը :

(10) Զօրաբարէլ Զաքարիայի տեսլիան մէջ պիտի տեսնէր խոստում մը թէ Աստուծոյ Ճոդին պիտի օդնէր անոր մէկ դի ընելու ամէն արգելը , եւ դլուխ հանել տաճարը նորէն շինելու մեծ գործը :

(19) Եօթը թիւը կատարելութիւն կը ցուցնէ .

ուստի եօթը աչքերը կը նշանակէն կատարեալ եւ ամենատես զօրութիւն :

(20) Հաւանականապէս Քրիստոս եւ Հոդին Սուրբ , որ աստուածային վկաներ են երկրիս վրայ , եւ եկեղեցւոյն համար ամէն շնորհաց եւ զօրութեան աղբիւր : Տես Յով . ԺԵ . 26 : Ա . Յով . Ե . 6 : Յայտ . Ա . 3 : Գ . 14 :

Դէրական +

Վհատելու չենք արգելքներէ որ լեռներու պէս կ'երեւին մեր ճամբուն վրայ : — Քրիստոնէին բուն զօրութիւնը տեսանելի չէ աշխարհի : — Երբ մեր կանթեղը մօտ կը բռնենք երկու ձիթենիներուն , Աստուծոյ շնորհաց առատ իւղը շարունակ կը տրուի մեղի :



ԻԵ . ԴԱՍ , ՑՈՒՆԻՍ 22

Կուիրումն առ Աստուծուած

Մաղ . Գ . 8—18

Բէ՛նուց սորք 16—18 համարները :

Ուկելին համար . «Փառաւորեցէք զԱստուծուած ձեր մարմիններուն ու հոգիներուն մէջը , որ Աստուծոյ են » Ա . Կոր . Զ . 20 :

4. Տասանորդ վճարելու վերաբերեալ ի՞նչ օրէնք ունէին Հըեայք : Դեւ . ԻԵ . 30—33 :

2. Որո՞ւ տրուելու էր այս տասանորդը : Թու . ԺԸ . 21—24 :
3. Դեւտացիք ալ պարտակա՞ն էին տասանորդ վճարել : Թու . ԺԸ . 26—29 :
4. Այս տասանո՞րդը միայն կը պահանջուէր Հրեա ներէն : Բ Օր . ԺԸ . 10—12, 17, 18 :
5. Ուրիշ ի՞նչ տասանորդ կը յիշուի : Բ Օր . ԺԸ . 28, 29, ԻԸ . 12 :
6. Բաց այս կրօնական տասանորդներէն ի՞նչ քաղաքական տասանորդ կը յիշուի : Ա Թագ . Ը . 15, 17 :
7. Խորայելացիներէն պահանջուած բոլոր տասանորդներն ասո՞նք են միայն : Թու . ԺԸ . 2—11 :
8. Տասանորդները եւ նուէրներն ինչպի՞ս բաներ ըլլալու էին : Դեւ . ԻԸ . 21—25 :
9. Ժողովուրդն ի՞նչ ապատամբութիւն բրաւ , եւ ի՞նչպէս արդարացուց զինք : Հմր . 13 :
10. Ի՞նչ անհաւատարմութիւն ցուցուցած էր : Հմր . 14 :
11. Ի՞նչ համարած էր հպարտութիւնը եւ ամբարձութիւնը : Հմր . 15 :
12. Ի՞նչ տեսակ յափշտակութեան համար կ'ամբաստանէ մարդարէն Հրեաները : Հմր . 8 :
13. Ասուուծոյ զէմ զործուած ի՞նչ խարդախութեան համար կը յանդիմանէ զանոնք : Գլ . Ա . 7, 8 :
14. Այս յանցանաց համար ի՞նչ կը կրէին : Հմր . 9 : Գլ . Ա . 14 :
15. Ժողովուրդն ի՞նչ ընել կը յորդորուի , եւ ի՞նչ բարիք կը խոստացուի անոր : Հմր . 10 :
16. Կրենց հունձքն ի՞նչ հարուածներէ ազատ պիտի ըլլար : Հմր . 11 :

17. Ուրիշ ազգերն ի՞նչպէս պիտի նկատէին զանոնք : Հմր . 12 :
18. Ասկէ առաջ ալ ժողովուրդը Աստուծոյ անսուարլալուն փորձը տեսա՞ծ էր : Բ Մնաց . ԼՈ . 10 :
19. Ի՞նչ լրին անսոնք որ մարդարէին խրատը մտիկ ըրած էին , եւ այնպիսիք ի՞նչպէս յիշուեցան : Հմր . 16 :
20. Այս յիշատակի գիրքն ինչո՞ւ համար գրուեցաւ : Հմր . 17, 18 :
21. Քրիստոնեայք տասանորդի եւ նուէրներու այնչափ ծանր բեռ ունին որչափ ունէին Հրեայք : Երր . Թ . 10—14, Մատֆ . ԺԱ . 30 :
22. Քրիստոնէից բարեսիրութեան օրէնքն ի՞նչ է : Կուկ . Զ . 38 : Ա Կոր . ԺԶ . 1, 2 :
23. Առատութեամբ տուողներն ի՞նչպէս պիտի վարձատրուին : Առակ . ԺԱ . 23 : Գործ . Ի . 35 :
24. Ի՞նչ նպատակի դործածելու ենք մեր ինչքը , մեր մարմինները եւ ինչ որ ունինք : Ա Կոր . Զ . 20 :
- Այս դասին մեջ ըստածները կընա՞ն համառօտիւ կըկնել :**

Ծանօթութեան +

(1, 4—7) Տասանորդ մը տրուելու էր Դեւտացոց , ուրիշ տասանորդ մը գործածուելու էր տօներու համար : Ամէն երրորդ տարին տասանորդ մը ուտուելու էր աղքատաց եւ Դեւտացոց հետ : Թէ արդեօք այս վերջին տասանորդը երրորդ տասանորդ էր թէ նոյն խակ երկրորդը՝ ստոյդ չէ : Ա-

սոնցմէ զատ էին թագաւորին տրուելու տասանորդը եւ նուերները : Ասոնց ամէնքը մէկտեղ առնելով կը տեսնենք որ Հրէից եկամուտին մէկ երրորդը, կամ զրեթէ կէսը կ'երթար կրօնական եւ կառավարական ծախուց :

(22) Այս օրինաց համեմատ Քրիստոնեաներէն շատերն իրենց եկամուտին կէսը կամ եւս աւելին տալու են բարեսիրական նպատակներու :

ԴԵՊԱՂ-ԱՆԵԱՆ

Ճշմարիտ Քրիստոնեան բերկութեամբ կուտայ, եւ կուտայ ըստ չափոյ կարողութեան իւրոյ առանց բռնադատուելու տալ : — Եթէ կը տեսնես անձ մը որ տալու կը խորչի, կրնաս ստոյգ ըլլալ թէ այնպիսին շատ անկատար կ'երպով նուիրած է զինք Աստուծոյ : — Տալը կրօնական պաշտաման գործ է : — Տուող եկեղեցին զօրաւոր եկեղեցի է, եւ տալով եւս աւելի կը զօրանայ : — Եկեղեցի մը որ միշտ դուրսէն օգնութիւն կը խնդրէ եւ երբէք չի ջանար անձամբ հողալ իւր պէտքը, երթալով կը տկարանայ : Առակ. ԺԱ. 24 :

ԽԶ. ԴԱՍ, ՅՈՒՆԻՍ 29

ՆԱՆԴԵՍ

1. Յորայ յաջողութեան եւ ձախորդութեան վրայ ի՞նչ կը պատմուի, եւ ի՞նչ կը սորվինք այն պատմութենէն : Յոր Ա. 4—22 : Բ. 4—43 : Լ. 44—30 : ԵՄՊ. ԺԲ. 5—14 : (Դաս ԺԴ.)

2. Յորայ նորէն յաջողութիւն դժնելուն վրայ ի՞նչ կը պատմուի, եւ Յորայ փորձառութենէն ի՞նչ կը սորվինք : Յոր ԽԲ. 4—17 : (Դաս ԺԸ.)

3. Հրեայ աղջկան, Աղասսայի, միջոցաւ Աստուած ի՞նչպէս աղատեց իր ժողովուրդը կոտորածէ : Գիրք Եսթերայ : (Դաս ԺԶ.)

4. Քրիստոսի խօնարիութիւնը եւ հեղութիւնն ի՞նչպէս նկարագրուած է : Ես . ԽԲ. 4—10 : (Դաս ԺԷ.)

5. Քրիստոսի չարչարանաց վրայ ի՞նչ ըստուած է, եւ այն չարչարանքն ի՞նչ յարաբերութիւն ունի մեր փրկութեան հետ : Ես . ԾԳ. 4—12 : (Դաս ԺԸ.)

6. Ի՞նչ հրաւէր տրուած է ամենուն : Ես . ԾԵ. 4—13 : (Դաս ԺԹ.)

7. Քրիստոսի թագաւորութեան տարածման եւ բարեացը վրայ ի՞նչ կրնաս ըսել : Սիք. Դ. 4—8 : (Դաս ԽԱ.)

8. Վերջին օրերը Հոգւոյն Սրբոյ հեղման վրայ ի՞նչ ըստուած է, եւ ե՞րբ կատարուեցաւ այն մարդարէութիւնը : Յովել. Բ. 28—32 : (Դաս ԽԱ.)

9. Տիւրոսի փառքն ի՞նչ էր, Աստուած ինչո՞ւ համար բարկացած էր անոր, ի՞նչ կորուստ մարգարէացուած էր անոր դէմ, եւ ի՞նչպէս կատարուեցաւ այն մարգարէութիւնը : Եղեկ. ԽԶ. 2—24 : Խէ. 4—36 : ԽԲ. 4—19 : (Դաս ԽԲ.)

10. Զոր ոսկրներու ձորին տեսիլքը պատմէ, եւ ըսէ թէ ի՞նչ խրատ առնելու ենք անկէ : Եղեկ. Խէ. 4—14 : (Դաս ԽԳ.)

11. Ի՞նչ էր Զաքարիայի տեսիլքը, ի՞նչպէս կը մեկնես զայն, եւ ի՞նչ սորվելու ենք անկէ : Զաք : Գ. 4—14 : (Դաս ԽԻ.)

12. Հրէից տասանորդի օրէնքն ի՞նչ էր, այն օրինաց պահպանութիւնն ի՞նչ բարիք կը բերէր, ի՞նչ անէծք յառաջ կու զար մանոր զանցառութենէն, ի՞նչ է քրիստոնէական բարեսիրութեան օրէնքը, և անոր պահպանութեան օգուտներն ի՞նչ են: Մաղ. Գ. 8—18: (Դաս ԻԵ:)



ԻԵ. ԴԱՍ. ՅՈՒՆԻՍ 6

Աստուծոյ Հետ խաղաղութիւն

Հոռվմ. Ե. 4—10

ԲԵՐԵԿԵՑ ԱՐՔ 6—10 համարները:

Ունչուն համար. «Հաստատ միտքը կատարեալ խաղաղութեան մէջ կը պահես, ինչու որ քեզի կը յուսայի» Ես. ԻԶ. 3:

1. Հոռվմայեցոց թուղթը ո՞վ զրեց, ո՞ր քաղքէն դրուեցաւ, եւ որո՞ւ ձեռօք զրկուեցաւ: ԳԼ. Ա. 1, 7: ԺԶ. 4, 2:

2. Մինչ մեր խորհուրդը մարմնաւորապէս է, Աստուծոյ դէմ ի՞նչ ենք: ԳԼ. Ը. 7:

3. Մինչ այսպէս թշնամի էլնք Աստուծոյ, Քրիստոս ի՞նչ ըրաւ մեղի համար, եւ ինչո՞ւ համար: Հմբ. 10:

4. Քրիստոսի մահը մեզ ի՞նչպէս կը հաշտեցնէ Աստուծոյ հետ: Բ. Կոր. Ե. 18, 19: Կող. Ա. 21, 22:

5. Ի՞նչպէս ըլլալու է մեր բարքը որպէս զի խա-

ղաղութիւն անենանք Աստուծոյ հետ: Հմբ. 1:

6. Արդարութեան բնական պտուղն ի՞նչ է: Ես. 1.Բ. 17: Յակ. Գ. 18:

7. Ի՞նչ միջոցով կրնանք ստանալ այս արդարութիւնը: ԳԼ. Գ. 3, 20—25:

8. Որո՞ւ ձեռօք կրնանք ստանալ այս խաղաղութիւնն Աստուծոյ հետ: Հմբ. 2:

9. Ի՞նչ բանով պարծելու ենք:

10. Աստուծոյ փառաց յոյսէն ետքն ուրիշ ի՞նչ բանով կը պարծի Քրիստոնեան: Հմբ. 3:

11. Ի՞նչպէս ընդունելու ենք նեղութիւնները: Մատթ. Ե. 11, 12: Բ. Կոր. ԺԲ. 10: Երր. ԺԲ. 11:

12. Ինչո՞ւ համար: Հմբ. 3—5:

13. Նեղութիւնն ի՞նչ համբերութիւն կը գործէ: Յակ. Ա. 3, 4:

14. Համբերութեամբ տանելն ի՞նչպէս բնականապէս փորձառութիւն կը գործէ:

15. Կրնայ ըլլալ տեսակ մը համբերութիւն որ յոյսը կեղծանէ:

16. Ի՞նչ տեսակ փորձառութիւնը յոս յառաջ կը բերէ:

17. Ի՞նչ տեսակ յոս կու տայ մեղի, եւ ինչո՞ւ համար: Հմբ. 3:

18. Եթէ նախ Աստուծած սիրած չըլլար զմեղ, կը ընայինք յուսալու պատճառ ունենալ:

19. Ի՞նչ ապացոյց ունինք թէ Աստուծած կը սիրէ զմեղ: Հմբ. 6:

20. Այսպիսի մէր մը ի՞նչպէս կը տարբերի հասարակ սէրէ: Հմբ. 7, 8:

21. Ի՞նչ ապացոյց վնասելու ենք թէ ունինք արդեօք խաղաղութիւն Աստուծոյ հետ: ԳԼ. Ը. 16: Ա Յով. Ե. 10:

22. Ի՞նչ ապահովութիւն կը վայելէ այն անձը որ
խաղաղութիւն ունի Աստուծոյ հետ։ Ես . իջ . 3, 4:

Այս դասին մեջ ըստւածները կը նախ համա-
ռօտիւ կրկնել։


Ծանօթական +

(1) Կենքը կորնթոսի նաւահանգիստն էր . ուր
անտարակոյս գրուեցաւ այս թուղթը . Պօղոսի առ-
պենջականը (Հիւրնակալ), Գայիոս, (Գլ. ԺԶ. 23) թե-
րեւս նոյն անձն էր որ կը յիշուի Ա. կորնթ . Ա. 14.
Հաւանական է թէ Բիբէ տարաւ թուղթը Հռոմ .
Բաղդատէ նաև Գլ. ԺԶ. 23 համարը Բ Տիմ . Դ. 20
համարին հետ . Այս թուղթին թուականը կը հաս-
կըցուի Գլ. ԺԵ. 23—25 համարները բաղդատե-
լով Գործ . ԺԹ. 24 համարին հետ . Այս եղաւ Պօ-
ղոսի երրորդ առաքելական ճամբորդութեան ատե-
նը, եւ հաւանականապէս իրքեւ յամի Տեառն 58 :

(4) Երբ ի բաց կը թողունք մեր ասրոտամբութիւնն
Աստուծոյ դէմ եւ կը հնազանդինք անոր, Քրիստո-
սով կ'ընդունուինք :

Դիտուն +

Անյաջող փորձերն անհաւատ եւ անյօյս կ'ընեն
մարդը : — Աստուծոյ բարեկամը բոլոր մարդոց ալ
բարեկամ է : — Իր թշնամին սիրել աստուածային
առաքինութիւն է : — Աստուծոյ խոստումներուն
անսուտ ըլլալը շարունակ փորձելը կը զօրացնէ մար-
դուս յոյսը յաւիտնական կինաց :



ԽԸ. ԴԱՍ, ՅՈՒԼԻՍ 13

Հաւատացելոց ապահովութիւնը

Հռովդ . Ը. 28—39

ԲԵՐՆԵԳ ԱՐԱ 35—39 համարները :

Ուկելն համար : «Թէ որ Աստուած մեր կողմն է՝
ո՞վ պիտի ըլլայ մեզի հակառակ : » Հմր . 31 :

4. Ի՞նչ ըստւած է անոնց համար որ զԱստուած
կը սիրեն : Հմր . 28 :

2. Հոս յիշուած «ամէն բաները» ի՞նչ են, եւ
ի՞նչպէս ի բարին գործակից կ'ըլլան անոնց որ Աս-
տուծմէ կանչուած են :

3. Աստուծոյ նախասահմանութեամբը կանչուած
ըլլալն ի՞նչ է :

4. Ի՞նչպէս յառաջ կ'երթայ Աստուած զմարդիկ
վրկելու մէջ : Հմր . 29, 30 :

5. Աստուած կը ճանչնայ ուրիշ մարդիկ այնպէս՝
ի՞նչպէս կը ճանչնայ հաւատացեալները : Մատթ .
Է. 23, ԻԵ. 12 :

6. Աստուած ի՞նչ բանի նախասահմանած է հա-
ւատացեալները : Եփես. Ա. 5:

7. Քրիստոս հոս ի՞նչ կը կոչուի :

8. Աստուած ի՞նչ միջոցներով կը կանչէ զմարդիկ :

9. Ի՞նչպէս կ'արդարացնէ եւ կը փառաւորէ զա-
նոնք :

10. Այս փառաւորութիւնն ա՞յս աշխարհիս մէջ է
թէ հանդերձեալ աշխարհին մէջ : Յովհ. ԺԵ. 22,
Եփես. Բ. 6, 7:

11. Այս ամենէն ի՞նչ կը հետեւցնէ Պօղոս : Հմր. 31:
12. Ի՞նչ ապացոյց կայ թէ Աստուած ձրի պիտի
տայ մեղի ամէն բան : Հմր. 32:
13. Ինչո՞ւ համար Աստուածոյ ընարեախներուն դէմ
մեղագրութիւն չըլլար : Հմր. 33, 34:
14. Որո՞նք են Աստուածոյ ընարեախները, ե՞րբ ընտա-
րուած են, եւ ինչո՞ւ համար : Հմր. 28, Եփես. Ա. 4:
Բ. Տիմ. Ա. 9:
15. Հիմա Քրիստոս ո՞ւր է, եւ ի՞նչ է հոն անոր
պաշտօնը: Մարկ. Ժ. 19: Երր. Ե. 23:
16. Քրիստոսէ ուրիշ միջնորդ կա՞յ: Ա. Տիմ. Բ. 5:
17. Ինչո՞ւ համար ուրիշ միջնորդ հարկաւոր չէ:
18. Որեւիցէ նեղութիւն ի՞նչ բանէ չի կրնար բաժ-
նել հաւատացեալը : Հմր. 35:
19. Առաքեալները հալածում կրեցի՞ն, Հմր. 36:
20. Բայց եւ այնպէս ի՞նչ կ'ըսէ Պօղոս : Հմր. 37:
21. Ի՞նչ բանի վրայ համոզուած էր : Հմր. 38, 39:
22. Ո՞րչափ անձանց սէրը միշուած է այս դասին
մէջ:
23. Ի՞նչպէս կրնանք ձեռք բերել Քրիստոսի սէրը :

Այս դասին համառօս իմաստն ի՞նչ է:

Մանուշական

(14) Յայտնի է թէ Աստուած այնպէս սահմանած
է ումանց ծննդեան եւ դաստիարակութեան վերա-
բերեալ պարագաները որ կը ճանչնան դѣրիստոս.
մինչ ուրիշներն, առանց իրենց յանցանաց, չեն
լսեր երբէք Քրիստոսի վրայ, եւ կը զրկուին վըր-
կութիւնէ: Դէպէք չի կրնար ուրացուիլ, իսկ պատ-

ճառն Աստուածոյ ծածուկ խորհուրդներուն մէկն է :
ԳԼ. Թ. 19—24.

(18, 24) Պօղոս նախ կը թուէ կենաց այեւայլ
նեղութիւնները եւ վիշտերը որ չեն կրնար բաժ-
նել ճշմարիտ հաւատացեալը Քրիստոսի սէրէն, եւ
երկրորդ՝ այլնւայլ զօրութիւնները վերը, վարը եւ
երկրիս վրայ, որ նոյնպէս անկարող են բաժնել
հաւատացեալը Քրիստոսէ:

Դէրաշութեան

Սէրը քան զմարդ զօրաւոր է: — Քրիստոս սի-
րով կը թաղաւորէ ոչ թէ վախցնելով: — Վախու
կը կապէ ծանր եւ խիստ շղթայիւ: սէրը կը քաշէ
քաղցրութեամբ: — Հօր եւ Որդւոյ սէրը դէպի
հաւատացեալը, եւ հաւատացելոյն սէրը դէպ ա-
նոնց, իրարու կը խառնուին եւ այնպիսի միտթիւն
մը կը կազմն զոր բան մը չի կրնար քակել:

ԻԹ. Դ.Ա.Ս., ՑՈՒԼԻՍ 20

Քրիստոնէական սէրը

Ա.Կոր. ԺԿ. 4—13

Բէքնուց սորչէ 4—8 համարները :

Ոսէելն համար: «Հիմա կը մնայ հաւատք, յոյս,
սէր՝ աս երեքը, ու ասոնց մեծադոյնը սէրն է»
Հմր. 13:

1. Կողմնթացւոց առաջին թուղթը ո՞վ գրեց, ո՞ւր զրուեցաւ այն թուղթը, եւ ո՞ր ժամանակ։ Գլ. Ա. 1. ԺԶ. 8, 49.
2. Այս թուղթին ԺԱ. զԼխոյն մէջ Պօղոս ի՞նչ բանի վրայ կը խօսի։
3. Այն պարզեւներէն աւելի լաւ բան մը կա՞ր։ Գլ. ԺԲ. 31.
4. Լեզուներ խօսելու պարզեւը սիրոյ հետ բաղդատուելով ի՞նչ է։ Հմր. 4.
5. Բայց մարդ մը որ կը մարդարէանայ եւ զօրաւոր հաւատք ունի՝ իրօք Քրիստոնեայ չէ։ Հմր. 2.
6. Տակաւին ի՞նչ բան պէտք է։
7. Այս տեսակ մարդու մը հաւատքն ի՞նչ տեսակ հաւատք կ'ըլլար։ Յակ. Բ. 49, 20.
8. Այսպիսի հաւատք մը ի՞նչպէս կրնար լեռները վերցնել։
9. Ի՞նչ պիտի կոչէիք այն մարդը որ կու տայ իր ստացուածքը Տէրո՞ջը դործին։
10. Ի՞նչպէս պիտի նկատէիք այն մարդը որ Քրիստոսի համար մեռնելու պատրաստ է։
11. Այսպիսի մարդոց ուրիշ ի՞նչ հարկաւոր է։ Հմր. 3.
12. Սիրոյ վրայ ի՞նչ ըսուած է։ Հմր. 4—7.
13. Սէրը հոս իրեւ անձ ցուցուած է։ այս ի՞նչ կը նշանակէ։
14. Ի՞նչ գէշ յատկութիւններ կը դատապարտուին հոս։
15. Գիտութեան բնական արդիւնքն ի՞նչ է։ Գլ. Ը. 4.
16. Սիրոյ ի՞նչ աղէկ յատկութիւններ կ'ընծայուին։

17. Քրիստոնէին պա՞րտքն է արդարեւ ամէն բանի համբերել եւ ամէն բանի հաւատալ։
 18. Ի՞նչ կողմանէ սէրը գերազանց է ուրիշ բոլոր պարզեւներէն։ Հմր. 8.
 19. Խնչո՞ւ համար այլեւայլ պարզեւներ պակասաւոր են։ Հմր. 9.
 20. Մէր ներկայ վիճակը գալու վիճակին հետ բաղդատուելով ի՞նչ է։ Հմր. 11, 12.
 21. Կատարելութիւնը ե՞րբ պիտի ստացուի։ Հմր. 10, 12.
 22. Ո՞ր երեք բաները յաւիտենական են, եւ ո՞րն է մեծադոյնը։ Հմր. 13.
 23. Սէրը որուն վրայ հոս կը խօսուի՝ մեր առ Աստուած թէ առ մարդիկ յարաբերութիւնը կ'ակնարկէ։
 24. Մէր թշնամիները եւ չար մարդիկ այնպէս սրտանց սիրելո՞ւ ենք ի՞նչպէս կը սիրենք մեր բարեկամները եւ բարի մարդիկ։
 25. Կրնա՞ս սիրել մարդ մը որուն վարքէն կը գարշի։
 26. Բոլոր մարդիկ սիրելով որո՞ւ նման կ'ըլլաս։
- Այս դասին մէջ յիշուածները կրնա՞ս համառութիւններ։
- Ծանօթութիւններ։
- (1) Այս թուղթը զրուեցաւ յամի Տեառն 57 կամ 58։ Հաւանականապէս Գլ. ԺԶ. 17 համարին մէջ յիշուած եղբայրները տարին այս թուղթը կորնթոս։
- (8) Զար մարդիկ յուսով եւ շարունակ աշխա-

տեղով կրնան երբեմն լեռներ վերցունել տեղէն :
Բայց պէտք չէ հասկնալ այնպէս որպէս թէ Պօղոս
կը հաստատէ թէ մարդ մը կրնայ բոլոր այս պար-
գեւներն ունենալ առանց նաեւ Քրիստոնէական
սէր ունենալու, այլ Պօղոս առաքեալ ըսել կ'ուզէ
թէ, եթէ կարենայիք երեւակայել թէ կայ մէկը որ
այն պարգեւներն ունի, բայց սէր չունի, անօ-
դուտ պիտի ըլլային այն պարգեւները :

Դէտուշ-Շէմա+

Ուր սէր չկայ, հոն միութիւն չի կրնար ըլլալ :—
Երկու անձինք որ իրենց սիրտերուն մէջ սէր ու-
նին առ Քրիստոս՝ կրնան համաճայնիլ իրարու հետ
եւ սիրել զիրար : — Բարի մարդ մը չար մարդու
հետ չի կրնար միաբանիլ, թէպէտ կը սիրէ զանի :
— Եթէ կ'ուզես սիրուիլ, նախ դուն սիրէ :



Լ. ԴԱՍ, ՅՈՒԼԻՍ 27

Մահուան վրայ յաղթութիւն

Ա. Կոր. ԺԵ. 50—58

Բէքնուց սուլք 54—57 համարները :

Ուկեղն համար . և Յիսուս ըստե անոր, Ես եմ յա-
րութիւնը եւ կեանքը . ան որ ինձի կը հաւատայ ,
թէեւ մեռնի պիտի ապրի: » Յովի. ԺԱ. 25:

4. Ի՞նչ ապացոյց ունինք թէ կայ յարութիւն :
Հմր. 42: Ա. Թես. Դ. 13:
2. Ի՞նչ մարմիններ յարութիւն առին Քրիստոսի
խաչելութեան ատենը, Մատթ. Խէ. 52, 53:
3. Ի՞նչ յարաբերութիւն ունի Քրիստոս անոնց
հետ որ մեռելներէն յարութիւն կ'առնեն : Հմր. 20:
4. Բոլոր մարդիկ յարութիւն պիտի առնեն : Դան .
ԺԲ. 2: Յովի. Ե. 28, 29: Գործ. ԽԴ. 15: Յայտ.
Ե. 13:
5. Այս վարդապետութեան դէմ ի՞նչ առարկու-
թիւն եղած է : Հմր. 35:
6. Պօղոս ի՞նչ օրինակով կը բացատրէ յարու-
թիւնը : Հմր. 36, 37:
7. Ի՞նչ բան կը սերմանուի, եւ ի՞նչ բան յարու-
թիւն կ'առնէ : Հմր. 42—44:
8. Մահուանէ մինչեւ յարութիւն հոգին ո՞ւր է :
Դուկ. ԺԶ. 22, 23: ԽԳ. 43: Բ Կոր. Ե. 8:
9. Խնչո՞ւ համար փոփոխութիւն հարկաւոր է :
Հմր. 30:
10. Պօղոս ի՞նչ կը կոչէ զայս : Հմր. 51:
11. Տակաւին կենդանի եղողներուն ի՞նչ պիտի
պատահի : Հմր. 31, 52:
12. Ի՞նչ եղանակաւ, եւ ե՞րբ պիտի ըլլայ այս
փոփոխութիւնը : Հմր. 32: Ա. Թես. Դ. 15:
13. Սուրբերն ի՞նչ պիտի հագնին : Հմր. 53:
14. Ուրիշ ի՞նչ բան ըստած է թէ պիտի հագնին
սուրբերը : Յայտ . ԺԹ. 8: ..
15. Անատեն ի՞նչ պիտի ըլլայ մահը : Հմր. 54:
16. Մահուան հետ ուրիշ ի՞նչ աղէտք պիտի անց-
նի : Յայտ . ԽԱ. 4:

17. Մահուան խայթոցն ի՞նչ է : Հմր . 56 :
18. Բուն իսկ մեղքն է թէ մեղքին հետեւանքն է մահուն խայթոցը : Երբ . Ժ . 26, 27 :
19. Մեղքին զօրութիւնն ի՞նչ է : Հմր . 56: Հռովմ . Դ . 15: Ե . 13 :
20. Օրէնքը յանցանք ունի՞ : Հռովմ . Ե . 7—12 :
21. Օրէնքին բուն պաշտօնն ի՞նչ էր : Գաղ . Գ . 24 :
22. Այս յաղթութիւնը որո՞ւ ձեռքով կը ստացուի : Հմր . 57 : Երբ . Բ . 14 :
23. Ի՞նչպէս կրնանք այս յաղթութիւնը մեզի յատկացնել : Յովի . Ժ.Ա . 25 : Ա Յովի . Ե . 5 :
24. Քրիստոսվ մահուան յաղթովը մեռնիլ բաղձալո՞ւ է : Փիլիպ . Ա . 23, 24 :
25. Այս վարդապետութիւնն ի՞նչպէս զօրացնելու է մեր հաւատքը : Հմր . 58 :
26. Ի՞նչպէս զրգուելու է Քրիստոնէին ջանքը , եւ ի՞նչ վատահութեամբ :
27. Այս վարդապետութիւնը ճշմարիտ հաւատացեց համար ի՞նչ միխթարութիւն կը պարունակէ : Ա Թես . Դ . 12 :

Այս դասին մէջ ըսուածները կրնա՞ն համառ ուստիւ կրկնել :

Ծանօթութիւն +

(2) Երբ Քրիստոս խաչուեցաւ , թուեցաւ թէ մահը յաղթեց , բայց սուրբերուն յարութիւնն ընդաղու ցուցուց մահուան վրայ Քրիստոսի կատարեալ յաղթութիւնը , որ եղաւ երբ ինքն Քրիստոս մեռներէն յարութիւն առաւ :

(3, 6, 7) Յարութեան վարդապետութեան դէմ առարկութիւն ընողները կը սխալին կարծելով թէ Ֆիշդ նոյն մարմինը պիտի յառնէ որ թաղուեցաւ , բայց թաղուած մարմինն իրբեւ սերմ է որմէ նոր մարմին մը պիտի ելլէ Աստուծոյ զօրութեամբը :


(8) Որովհետեւ մահը քուն կոչուած է , ումանք կարծեցին թէ հոգին անզգայ վիճակի մէջ պիտի մնայ մինչեւ յարութիւնը , բայց այս վկայութիւնները կը ցուցնեն թէ մահուանէ ետքը հոգին իսկոյն պիտի տեսնէ եւ զգայ հանդերձեալ կենաց բաները :

(18) Սրբոց համար կայ խայթոց մը նոյն իսկ մեղքին մէջ . չար մարդը կը սիրէ մեղքը , թէպէտ կը վախնայ անոր հետեւանքէն :

(24) Քրիստոնեան կրնայ բաղձալ մեռնիլ Քրիստոսի հետ ըլլալու համար , բայց պիտի բաղձայ նաեւ աշխատիլ Քրիստոսի համար աշխարհիս մէջ մինչեւ այն ժամանակը զոր Աստուած ընտրած է զանի իրեն կոչելու :

Գլուխութիւն +

Մահը դուռ է . անկէ չարերը կը մտնեն տանջանաց եւ յուսահատութեան վիճակ մը . բայց արդարներն անկէ կը մտնեն իրենց երկնային ժառանգութիւնը : — Զարերուն բոլոր ուրախութիւնը կը դառնանայ մահուան երկիւղիւ , բայց արդարներուն նոյն իսկ արտանութիւնը հանդերձեալ կենաց փառաւոր կենաց յոյսերովը կը քաղցրանայ :



ԱԱ. ԴԱՍ, ՕԳՈԽՏՈՒ 3

Հաշտութեան պաշտօնը

Բ Կոր. Ե. 14—21

ԲԵՐՆԱՌԱՅԻ ԱՐԴՅՈՒՆ 18—21 համարները :

Ուկեղին համար . «Կ'աղաչենք ձեղի Քրիստոսի կողմանէ , հաշտուեցէք Աստուծոյ հետայ Հմր . 20 :

1. Կորմթացւոց Բ . Թուղթը Ե՞րբ եւ որմէ՞ զըրուեցաւ : Գործ . Ի . 1 . Գլ . Է . 5 . Ը . 4 : Թ . 2 :

2. Պօղոս ի՞նչ նպատակ ունենալով աչքին առջեւ կ'աշխատէր : Հմր . 9 :

3. Ինչո՞ւ համար : Հմր . 10 :

4. Ի՞նչ բան էր որմէ Պօղոսի պէս բարի մարդ մը կը զգուշանար : Ա . Կոր . Թ . 27 :

5. Ի՞նչ բանով կը համոզէր զմարդիկ : Հմր . 11 :

6. Ի՞նչ է որ յայտնի ըլլալու է Աստուծոյ եւ մարդոց խղճին : Ա . Կոր . Դ . 2 :

7. Ինչո՞ւ համար կը բաղձար Պօղոս անկեղծութեամբ իր անձն ընծայել մարդոց խղճին : Հմր . 12 . 13 :

8. Ի՞նչ բան կը ստիպէր զանի , եւ ինչո՞ւ համար : Հմր . 14 :

9. Եթէ մեռած ենք , որո՞ւ մահուամբ կը նանք կեանք ստանալ :

10. Ճշմարիտ հաւատացեալն ի՞նչ բանի մեռած է : Հռովմ . Զ . 11 :

11. Որո՞ւ համար պիտի ապրին անոնք որ Քրիս-

տոսով կենդանի եղած են : Հմր . 15 : Հռովմ . ԺԴ . 7 . 8 :

12. Ի՞նչպէս կ'ըսէ Պօղոս թէ այնուեւանւ մարդ մը պիտի չճանչնայ : Հմր . 16 :

13. Ինչո՞ւ համար այլեւս պիտի չճանչնար գՔրիստոս մարմնով : Գործ . Ա . 9 :

14. Ի՞նչ կը հասկնար Պօղոս ըսելով , «Ասէ ետեւ մենք մէկ մը մարմնով չենք զիտեր» : Հմր . 17 . Կող . Գ . 10 , 11 :

15. Ի՞նչ են «հիները » որ կ'անցնին , երբ մէկը Քրիստոսի մէջ է : Կող . Գ . 8 , 9 :

16. Նոր ստեղծուածի մը համար ամէն բան ուստի՞ է : Հմր . 18 :

17. Ո՞վ կատարեց հաշտութեան գործը , եւ որո՞ւ ձեռքով : Հմր . 19 :

18. Հաշտութիւնը Քրիստոսի ձեռքով ի՞նչ կերպով կատարուեցաւ : Հմր . 21 : Եփես . Բ . 15 , 16 :

19. Հաշտութեան պաշտօնը որո՞ւ յանձնուած է : Հմր . 18 , 19 :

20. Պօղոս իրեւ Քրիստոսի դեսպան ի՞նչ խրատ կու տայ : Հմր . 20 :

21. Մարդ մը ի՞նչպէս հաշտուելու է Աստուծոյ հետ :

22. Այժմու եկեղեցւոյ ո՞ր պաշտօնեաները հաշտութեան պաշտօնեայ են եւ զեսպանք Քրիստոսի :

23. Բոլոր Քրիստոնեայք կերպով մը նոյն պաշտօնը ունի՞ն :

Այս դասին մէջ ըսուածները կրնա՞ն համա-
ռօտիւ կրկնել:

Ծառաբանելու +

(1) Այս թուղթն անտարակոյս դրուած էր Մա-
կեդոնիոյ գաւառէն , թերեւս Փիլիպպէ քաղքէն ,
քանի մը ամիս յետոյ քան առաջին թուղթը , այս-
ինքն յամի Տեառն 57 կամ 58 աշնան :

(13, 14) Որովհետեւ Քրիստոս այլեւս չէր կրնար
ճանչցուիլ մարմնով , վասն զի մեռելներէ յարութիւն
առած եւ վերացած էր ի փառս , նոյնպէս այն որ
մեռած է մեղաց եւ յարութիւն առած Քրիստոսով
ի հոգեւոր կեանս , իր Քրիստոնեայ ընկերակիցնե-
րէն իր հոգեւոր յատկութիւններովը կրնայ ճանչ-
ցուիլ մանաւանդ քան իր մարմնաւոր յատկութիւն-
ներովը :

(17) Աստուած կը հաշտեցնէ զաշխարհ իրեն հետ
Քրիստոսով իր գեսպաններուն եւ Հոգւոյն Սրբոյ մի-
ջոցաւ :

(19) Գլխաւորապէս՝ քարոզիչներուն , բայց նաև
բոլոր Քրիստոնէից :

Դիտաբանելու +

Պանծալի արտօնութիւնն է զոր ամէն Քրիստոնեայ
կը վայելէ , թէեւ ամնչան մէկը ըլլայ , հաշտութեան
պաշտօնեայ համարուելով : — Երբ մարդիկ այս պաշ-
տօնն ի գործ կը դնեն , համոզուած ըլլալու են եր-
բեմն «Տէրոջը երկիւղէն , » երբեմն «անոր սէրէն ։»
— Հաշտութիւնն ուրիշ քան չէ եթէ ոչ բաշարձակ

հպատակութիւն մեղաւորին առ Քրիստոս : — Աստ-
ուած չի կրնար խարուիլ , եւ հաշտութեան լոկ յւը-
բաւական չէ , ուր բուն էութիւնը չկայ :



ԼԲ. ԴԱՍ , ՕԳՈԽՏՈՍ 10

Հոգւոյն պտուղը

Գաղ . Ե . 22—26 , Զ . 4—9

Բէրնուց սուբէ 22—26 համարները :

Ուէւշն համար . «Մի խարուիք , Աստուած ծաղր
չըլլար : Վասն զի ինչ որ մէկ մարդ մը կը սերմանէ՝
նոյնը պիտի հնձէ ։» Գլ . Զ . 7 :

1. Գաղատիա ո՞ւր է : Ո՞վ գրեց այս թուղթը :
Ե՞րբ գրուեցաւ եւ ուստի՞ :

2. Ի՞նչ ընել յորդորեց Պօղոս Գաղատացիները :
Գլ . Ե . 16 :

3. «Հոգւով քալել» ի՞նչ կը նշանակէ : Հմր . 23 :
Հողմ . Ը . 4 , 5 :

4. Հոգւոյն պտուղներն ի՞նչ են : Հմր . 22 , 23 :

5. Ինչո՞ւ համար է որ այսպիսիներուն դէմ օ-
րէնք չկայ : Ա. Տիմ . Ա . 9 :

6. Եթէ մարդ մը Քրիստոսի մէջ է , ի՞նչ բան
խաչը հանած է , եւ ի՞նչ կը հասկցուի այս խօսքով :
Հմր . 24 :

7. Հոգւով քալով մը ի՞նչ բանէ զգուշանալու է :
Հմր . 26 :

8. Ի՞նչպէս վարուելու ենք Քրիստոնեայ եղբօր
մը հետ որ յանցանքով մը կը բռնուի : Գլ. Զ. 4:
9. Ի՞նչո՞ւ համար Քրիստոնեայք սիրով դատելու
են իրենց եղբայրները : Մատթ . Է . 4 , 2 :
10. Եթէ մեղուցեալ եղբայր մը չուզեր ապաշխա-
րել , տակաւին ընդունուելո՞ւ է : Ա.Կոր. Ե . 14—13:
11. Քրիստոնեայք ի՞նչպէս օգնելու են իրարու :
Հմր . 2 : Հռովդ . ԺԵ . 4 :
12. Քրիստոսի օրէնքն ի՞նչ է : Յովհ . ԺԳ . 34:
13. Խերաքանչիւր ոք ի՞նչ յարդ ունենալու է իր
անձին վրայ : Հռովդ . ԺԲ . 3:
14. Ի՞նք իրեն մեծ յարդ ընծայելով մարդ ի՞նչ վես
կ'ընէ իւր անձին : Հմր . 3 :
15. Ի՞նչպէս կրնայ մարդ իր անձին վրայ պարծիւ
Հմր . 4 :
16. Ուրիշին վրայ պարծանք ունենալ ի՞նչ կը նը-
շանակէ , եւ այս բանին մէջ ի՞նչ վես կրնայ ըլ-
լալ : Փիլ . Բ . 3 :
17. Խերաքանչիւր ոք ի՞նչ ընելու պատրաստ ըլլա-
լու է : Հմր . 5 :
18. Անոնք որ կ'ուսանին , ուսուցանողներուն ի՞նչ
ընելու են : Հմր . 6 : Հռովդ . ԺԵ . 27 : Ա.Կոր. Թ . 14:
19. Ինչպէս մարդնաւոր , նոյնպէս հոգեւոր աշ-
խարհի մէջ հաստատուն օրէնք ո՞րն է : Հմր . 7 , 8:
20. Մարդ ի՞նչպէս կրնայ զԱստաւած ծաղրել :
21. Այս օրէնքին աղդեցութենէն դուրս ըլլալ կա-
րելի՞ն է :
22. Այս օրէնքին մէջ ի՞նչ քաջալերութիւն կայ
հաւատացելոյն : Հմր . 9 :

Այս դասին պատմութիւնը կրնա՞ն համա-
ռօտիւ կրկնել :

Խառնութեան :


(1) Գաղատիա գաւառ էր որոյ գլխաւոր քաղաքն
է ցարդ Անկիւրիա : Ոմանք կ'ըսեն թէ այս թուղթը
դրուեցաւ Եփեսոսէն յամի Տն . 54 . այլք կը պնդեն
թէ զրուեցաւ Կորնթոսէ յամի Տն . 57 կամ 58 :

(16) Մէկը կրնայ պարծիլ ուրիշի մը վրայ , կամ
կրնայ ուրախանալ որ ուրիշի մը քով բարի համբաւ
տնի , եւ կամ անկէ ծառայութիւն կ'ընդունի :
Տես Ղուկ . ԺԲ . 14 : Մարդուս ճշմարիտ ուրախու-
թիւնը պիտի ըլլայ իր բարի ըլլալուն եւ բարի գոր-
ծելուն վրայ :

(20) Աստուծոյ օրէնքներուն մէ կը չնչին համա-
ռելով եւ կամ եղծանել ջանալով :

Դէքո՞սութեան :

Աստուծոյ հաճութիւնը վնասուելէն ետքը՝ մարդ
իր լուսաւորեալ խղճին հաճութիւնը վնասուելու է :
— Այսպիսի հաճութիւն մը ամենամեծ երջանկու-
թիւն կու տայ : — Ուր որ սիրոյ օրէնքը կը թագա-
ւորէ , հոն կայ երկնային խաղաղութիւն եւ ուրա-
խութիւն : — Այն մարդը որ ի՞նք զի՞նք կը խարէ ,
իր մեծագոյն թշնամին է :



Լ.Գ. · ԴԱՍ, ՕԳՈՍՏՈՍ 17

Քրիստոնէական սպառաղինութիւնը

Եփես. Զ. 10—20

ԲԵՐԵՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆ 14—17 համարները :

Ունէլով համար . «Վ. բանիդ հագէք Աստուծոյ սպառաղինութիւնը, որ կարող ըլլաք Սատանային հնարքներուն դէմ դնելու» Հմր . 11.

1. Եփեսացւոց թուղթն ո՞ւր գրուեցաւ, եւ ուրո՞ւ ձեռքով զրկուեցաւ: Հմր . 20—22: Գործ . ԽԸ. 20:

2. Հաւատացեալն ի՞նչ զօրութիւն ունենալու է միշտ: Հմր . 10:

3. Ի՞նչ բան մեր վրայ հագնիլ կը խրատուինք, եւ ինչո՞ւ համար: Հմր . 11, 13:

4. Ի՞նչ բանի դէմ կը կռուինք: Հմր . 12:

5. «Մարմին եւ արիւն» բառերով ի՞նչ կը հասկցուի:

6. «Աս խաւար աշխարհիս իշխանութիւնները ու պետութիւնները» խօսքով ի՞նչ կը հասկցուի: Յով . 30: Գլ. Ա. 21: Բ. 2:

7. «Երկնաւորներուն մէջը եղող չար ոգիները» ի՞նչ են: Բ կոր . ՖԱ. 13—15:

8. Աստուծոյ սպառաղինութեան մէջ դօտին ի՞նչ է: Հմր . 14:

9. Քրիստոս ի՞նչ տեսակ դօտի պիտի ունենար: Ես . ՖԱ. 5:

10. Ի՞նչ կերպով ճշմարտութիւնը կ'ընէ հոգւոյն այն բանը զոր դօտին կ'ընէ մարմնոյն:

11. Աստուծոյ սպառաղինութեան մէջ ի՞նչ բան զրահ է: Հմր . 14:

12. Քրիստոսի զրահը եւ սպառարտն ի՞նչ էին: Ես . ԾԹ . 17:

13. Արդարութիւնն ի՞նչ մտքով հոգւոյն զրահն է:

14. Ատքերուն ի՞նչ բան հազցունելու է: Հմր . 15:

15. Ինչո՞ւ համար Աւետարանը յարմար զէնք է տոքերու: Ես . ԾԹ . 7:

16. Ի՞նչ բան վահան է, եւ ի՞նչպէս դործածուելու է: Հմր . 16:

17. Աստուծոյ սպառաղինութեան մէջ ի՞նչ բան սպառարտ եւ սուր է: Հմր . 17:

18. Ի՞նչպէս կրնաս ցուցնել թէ փրկութիւնը հոգեւոր սպառարտ է, եւ Աստուծոյ խօսքը՝ հոգեւոր սուր: Ա. Թես . Ե . 8: Եբր . Գ . 12:

19. Ուրիշ ի՞նչ ընելու կը խրատուինք: Հմր . 18:

20. Ազօթքն Աստուծոյ սպառաղինութեան հետ ի՞նչ յարաբերութիւն ունի:

21. Պօղոս ի՞նչ ազօթք կը խնդրէ իրեն համար, եւ ինչո՞ւ համար: Հմր . 19, 20:

22. Այսպիսի սպառաղինութեամբ եւ Հոգւոյն զօրութեամբ կռուելով ի՞նչ կ'ըլլանք: Հոգվժ . Ը . 37:

Այս դասին պատմութիւնը կրնա՞ն համաւ
ռօտիւ կրկնել:

Ծանօթութեան:


(5) Կը հասկցուի ֆիզիզական կամ նիւթական զօրութիւն, ինչպէս թագաւորաց զօրքերը որ մարմաւոր գէնքերով կը կռուին:

(6, 7) Կը հասկցուին այլեւայլ եղանակները որովք սատանան եւ անոր պաշտօնեաները կը յայտնեն իրենց զօրութիւնն աշխարհիս վրայ, եկեղեցւոյ մէջ անգամ կը սպազին լուսոյ հրեշտակներու կերպարանքով:

(20) Ազօթքը երբեմն կը կոչուի «Քրիստոնէին կենաց շունչը»: Կրնար կոչուիլ նաեւ Քրիստոնէին հոգեւոր կերպակուրը եւ ըմպելին:

Դիտողութեան:

Քրիստոնեան զինուոր է: — Երկնից ճամբուն մէջ ոչ ոք, թէեւ հարուստ եւ հզօր, կրնայ ձիավարել, իւրաքանչիւր ոք պարափ քաղել. ոչ ոք իր տեղը կրնայ ուրիշ մը դնել կռուելու, ամէն մարդ ինք անձամբ պիտի կռուի փրկութեան պատերազմը: — Աստուծոյ սպառազինութիւնը հագնելով վազել եւ կռուելով յաղթել Քրիստոնէին ուրախութիւնը և պարծանիքն է: Տես Խ. Խ. 31:



Լ.Դ. ԴԱՍ, ՕԳՈՒՏՈՍ 24

Քրիստոնի միտքը

Փիլիպ. Բ. 4—13

Բէրնուց սորքէ 5—11 համարները:

Ոսկեղջն համար. «Ձեզմէ ամէն մէկը նոյն միտքը թող ունենայ, որ Քրիստոս Յիսուսի մէջն էր» Հմր. 5:

1. Փիլիպակեցւոց թուղթն ո՞ւր եւ ե՞րբ գրուեցաւ, եւ որո՞ւ ձեռքով դրկուեցաւ: Գլ. Ա. 13, 14: Գործ. Խ. 16, 30: Հմր. 25:

2. Ի՞նչ խրառով կը սկսի Պօղոս այս գլուխը: Հմր. 1, 2:

3. Տարակոյս կը ցուցնէ՝ թէ միսիթարութիւն կամ սփոփանք սիրոյ կամ հոգւոյ հաղորդութիւն կայ Քրիստոնով:

4. Խնչո՞ւ համար ուրեմն այն ձեռով կը խօսի:

5. Ուրեմն Փիլիպակեցիք ի՞նչպէս կրնային ուրախ եւ գոհ ընել զՊօղոս: Հմր. 2:

6. Ի՞նչ բանէ զգուշանալու էին, եւ իւրաքանչիւր ոք ի՞նչպէս համարելու էր ուրիշները: Հմր. 3:

7. Այս խրառն ի՞նչպէս մեկնելու ենք: Հոռմ. ԺԲ. 10: Ա. Պետ. Ե. 5:

8. Կռուէն շահ մը կայ, կամ խոնարհութենէ կոռուստ մը:

9. Ուրիշներուն շահն ի՞նչպէս նկատելու ենք: Հմր. 4: Ա. Կոր. Ժ. 24:

40. Աւրիշներուն օգնելով մարդ իրեն վնաս մը կընէ :
41. Ի՞նչ միտք ունենալու ենք : Հմր . 5 : Տես եւ Հմր . 2 :
42. Քրիստոս ի՞նչ էր մարդեղութենէն առաջ : Հմր . 6 :
43. Մարդեղութենն ի՞նչ էր : Յով . Ա . 14 :
44. Քրիստոս մարդանալէն ետքն ի՞նչ էր, եւ ի՞նչ բանի հնազանդ եղաւ : Հմր . 7, 8 :
45. Քրիստոս երեւութե՞ով միայն մարդ եղաւ, թէ կատարեալ մարդ հոգւով եւ մարմնով, ինչպէս էր Ադամ իր անմեղութեան ատենք, Մատթ . ԺԳ . 53 : Դուկ . Բ . 52 : Եբր . Դ . 14, 15 :
46. Ի՞նչ էր ուրեմն Քրիստոսի միտքը զոր ունենալ կը խրատուինք :
47. Հայրն Աստուած ի՞նչպէս բարձրացուց զՔրիստոս : Հմր . 9 :
48. Բոլոր արարածք վերջապէս ի՞նչ հպատակութեն պիտի մատուցանեն Քրիստոսի : Հմր . 10 :
49. Ամէնքը վերջապէս ի՞նչ պիտի դաւանին : Հմր . 11 :
50. Այս օրը հասա՞ծ է : Եբր . Բ . 8, 9 :
51. Ե՞րբ պիտի ըլլայ այս : Հոռով . ԺԳ . 40—12 :
52. Պողոս ի՞նչ լնել կը յորդորէ զՓլիսլպեցիս : Հմր . 12 :
53. Ի՞նչ բան կը քաջալերէ զՔրիստոնեայս այսպէս ընելու : Հմր . 13 : Եբր . Դ . 16 :

Այս դասին մէջ ըսուածները կրնա՞ն համաւոտիւ կրկնել :

Յաւելութեան +


(4) Այս թուղթն անտարակոյս գրուեցաւ Հոռոմէն, հաւանականապէս յամի Տն . 63, եւ զրկուեցաւ եպափրսպիտառոսի ձեռամբ :

(6, 7) Եթէ անուու պահէին այս օրէնքը, շատ դիւրին պիտի ըլլայ: Թէ գժուարին ըլլայ եւ թէ դիւրին պարտինք բոլոր մարդոց մեր վրայ ցուցնել Քրիստոսի ողին :

(15) Քրիստոսի հոգին անստեղծ էր: Այս եւ ուստի կողմանէ Քրիստոս կը տարբերէր ուրիշ մարդոցնէ, բայց իր անձին եւ իր մարդկային կենաց բոլոր պարագաներուն եւ որպիսութեանց կողմանէ բոլորովին եւ կատարելապէս մարդ էր: Այս կողմանէ միայն Քրիստոս կարեկից էր բոլոր մարդոց, եւ «ամէն կերպով փորձը առած մեզի նման առանց մեզքի»:

Դէպութեան +

Աւրիշներուն օգնելով մարդ իրեն կ'օգնէ: — Բարձրանալը խոնարհութեամբ կու գայ: — Ասաւած Քրիստոսով կ'իջնէ մեզի: Մենք Քրիստոսի ձեռքը միայն բռնելու ենք, Քրիստոս կը վերցնէ մեզ տատուածային մաքրութեան եւ փառաց մթնոլորտը: — Եթէ կամաւ չենք հնազանդիր հիմա Քրիստոսի, պիտի ստիպուինք վերջապէս հնազանդիլ անոր մեր մահուան յուսահատ տագնապին մէջ:



ԼԵ · ԴԱՍ · ՕԳՈՍՏՈՒ 31

Գործնական կրօնք

Կող · Գ · 16—25

ԲԵՐԵՆՆԵՐ ԱՄՐԻ 16—20 ՀԱՅԱԳՆԵՐԸ :

- Ունչպէն հայաբ · «Ի՞նչ որ կ'ընէք՝ սրտանց ըրէք,
արպէս թէ Տէրողը ու չէ թէ մարդոց» Հմր. 23:
1. Ե՞րբ եւ ո՞ւր զրուեցաւ կողոսացւոց թուղթը,
եւ որո՞ւ ձեռամբ զրկուեցաւ: Գլ. Դ. 3, 7:
 2. Կողոսացւոց քաղաքն ու՞ր էր: Գլ. Բ. 1: Դ.
43, 15:
 3. Ամէն բաներուն վրայ ի՞նչ հագնելու ենք:
Հմր. 14:
 4. Ի՞նչ մտքով սէրը կատարելութեան կապն է:
 5. Սրտին մէջ ի՞նչ բան թաղաւորելու է: Հմր. 15:
 6. Մեր մէջ ի՞նչ բան բնակելու է, եւ մնաք ի-
րարու ի՞նչ ընելու ենք, եւ ի՞նչ բանով: Հմր. 16:
 7. Ի՞նչպէս երգելու ենք:
 8. Ի՞նչ են Սաղմոսք եւ օրհնութիւնք, եւ ի՞նչ
են հոգեւոր երգելոր:
 9. Ամէն բան ի՞նչպէս ընելու ենք: Հմր. 17:
 10. Այս պատուէրը կենաց բոլոր մանր գործերը
կը պարունակէ»:
 11. Ի՞նչ հնագանդութիւն կը պատուիրուի կա-
նանց: Հմր. 18:
 12. Ինչո՞ւ համար: Եփես. Ե. 23:
 13. Ամուսնացեալ մարդոց պարտքն ի՞նչ է դէպ

- իրենց կիները: Հմր. 19: Եփես. Ե. 28, 29:
14. Եթէ այր մը իւր կինը կը սիրէ, միթէ կ'ուղէ»
զանի գերի ընել:
 15. Եթէ կին մը կը սիրէ իւր այրը եւ անոր սի-
րելի է, այնպիսւոյն դժուարը կու գա՞յ հնագան-
դիլ անոր:
 16. Ամուսնացելոց ի՞նչ բան հարկաւոր է ուրեմն
երջանիկ ըլլալու համար:
 17. Եթէ այր մը կը ծնծէ եւ կը չարչարէ իւր կի-
նը, կինը պարտակա՞ն է տակաւին հնագանդիլ ա-
նոր:
 18. Ի՞նչ է որդւոց պարտքը, եւ ինչո՞ւ համար:
Հմր. 20: Եփես. Զ. 1—3:
 19. Ծնողը ի՞նչ ընելու են իրենց զաւկներուն
համար: Հմր. 21: Եփես. Զ. 4: Բ. 0ր. Զ. 6, 7:
Առակ. ԻԲ. 6:
 20. Ծառայից պարտականութիւնն ի՞նչ է: Հմր. 22:
 21. Առ ականէ (աչքի առջեւ) ծառայել ի՞նչ է, եւ
ինչո՞ւ համար խոտելի է:
 22. Ո՞վ կը վարձատի հաւատարիմ ծառան, եւ
ի՞նչ վարձքով: Հմր. 24:
 23. Անհաւատարիմ ծառային ի՞նչ հատուցում պի-
տի ըլլայ: Հմր. 25:
 24. Տերանց պարտքն ի՞նչ է: Գլ. Դ. 1: Եփես.
Զ. 9:
 25. Եթէ տեարք այս կանոնը պահեն, ծառայից
դժուարին պիտի ըլլա՞յ հնագանդիլ անոնց:
 26. Եթէ տէր մը չարչար կը վարուի իր ծառա-
ներուն հետ, ծառայք ի՞նչ ընելու են:
 27. Վարուց ո՞ր կանոնն է որ ոչ միայն ծառայից,
այլեւ բոլոր մարդոց կը վերաբերի: Հմր. 23:

Այս դասին մէջ ըսուածները կլնա՞ն համաւ
ռօտիւ կրկնել :

Ծանօթութեան +

(1) Հաւանականապէս Հռոմ, յամի Տն. 62, և
զրկուեցաւ Տիւքիկոսի ձեռամբ :

(2) Փոքուն Ասիոյ մէջ, մօտ ի Լաւողիկէ :

(8) «Սաղմոսք եւ օրհնութիւնք» հաւանականա-
պէս կը նշանակեն Հրէից պաշտաման երգերը եւ
փառաբանութիւնները, մինչ «Հոգեւոր երգերով»
կը հասկցուին այն երգերը որ Քրիստոնէական պաշ-
տաման համար նոր շինուած էին :

(11, 13) Այս պարտականութիւնները կը վերա-
բերէին թէ արանց եւ թէ կանանց, թէ եւ երկու-
քին մէկը հեթանոս ըլլար եւ միւսը Քրիստոնէայ :

(17) Մեծ հոգ տարուելու է որ աղջկունք անար-
ժան մարդոց չտրուին : Կին մը իր էրկանը շատ ա-
նիրաւութեանց համբերելու է, եւ անոր հնազան-
դելէ դաղբելու չէ, մինչեւ որ քանի մը խելացի
Քրիստոնէայ եղբայրներու խորհրդով ազատ համար-
ուի հնազանդելու պարտականութենէն :

Դիտութեան +

Երգելը մասն է աստուածային պաշտաման եւ
միջոց Քրիստոսի խօսքը տարածելու : — Գլուխ մը
այնպէս հարկաւոր է ընտանիքի մը ինչպէս հարկա-
ւոր է տէրութեան : — Այլը եւ հայրն ընտանեաց
դլուխն է, եւ երբ իր գլխաւորութիւնը կը վարէ
սիրով, ամենուն համար օրհնութիւնն է : — Հնազանդ

տղայք իրենց ծնողքը պատուելով՝ զիրենք կը պա-
տուեն : — Տիրոջ քաղցրութիւնը հաւատարմութիւն
կը ծնանի ծառայից մէջ, եւ ծառայից հաւատար-
մութիւնը քաղցրութիւն յառաջ կը բերէ տերանց
վրայ :

ԼԶ. ԴԱՍ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 7

ՏԵՐՈՅԸ ԳԱԼՈՒՍՄԸ

Ա. ԹԿԱ. Դ. 42—17

ԲԵՐՆԱԿ ԱՊՐԻԼ 42—17 ՀԱՅԱՐՆԵՐ :

Ուիշունն համար . «Եւ անանկ յաւիտեան ՏԵՐՈՅԸ
հետ պիտի ըլլանք» : Հմր . 16 :

1. Ե՞րբ եւ ո՞ւր գրուեցաւ Թեսաղոնիկեցւոց ա-
ռաջին թուղթը : Գլ. Ա. 4: Գործ . Ժ. 5: Բ Կոր .
Ա. 49 :

2. Թեսաղոնիկէ ո՞ւր էր, հիմա ի՞նչ կը կոչուի,
եւ ի՞նչ տեսակ քաղաք է :

3. Պօղոս ի՞նչ կ'ուզէր որ զիսնային Թեսաղոնի-
կէի եղբայրները : Հմր . 12 :

4. Ննջել հոս ի՞նչ բանի տեղ գրուած է : Գործ .
է . 59: Ա. Կոր . Ժ. 6:

5. Հաւատացելոյ մը մահն ի՞նչ տեսակ քուն կը
կոչուի : Ա. Կոր . Ժ. 6. 48 :

6. Այս քունը մարմնոյ միայն կը վերաբերի թէ
նաեւ հոգւոյ :

7. Ի՞նչ յոյս ունենալու ենք անոնց համար որ

- Քրիստոսով կը ննջեն, եւ ինչո՞ւ համար: Հմր. 43:
8. Ո՞վ պիտի բերէ զանոնք այն ատեն:
 9. Ուստի՞ պիտի բերէ զանոնք Աստուած Քրիստոսի հետ:
 10. Որո՞ւ ընել պիտի տայ Աստուած այս գործը:
 - Մատթ. ԻԴ. 34. Ղուկ. ԺԶ. 22:
 11. Հրեշտակներէն այսպիսի ծառայութիւն մը ընդունել պատիւ չէ:
 12. Պօղոս ի՞նչ կ'ըսէ անոնց համար որ կենդանի պիտի ըլլան Քրիստոսի գալստեան ատենը, Հմր. 14:
 13. Ինչո՞ւ համար կ'ըսէ Պօղոս թէ անստեն կենդանի մնացողները քան զմեռածներն աւելի շահառոր պիտի չգանուին:
 14. Մեռեները եւ կենդանիներն ի՞նչ կարդաւ պիտի վերանան երկինք, Հմր. 13, 16:
 15. «Մենք որ ողջ մնացած ենք» խօսքով միթէ Պօղոս ըսե՞լ կ'ուղէ թէ Քրիստոսի գալստար մօս էր անստեն: Բ. Թես. Բ. 1—3:
 16. Ինչո՞ւ համար ուրեմն այն խօսքը կ'ըսէ:
 17. Երկրորդ գալստեան ժամանակին համար Քրիստոս ի՞նչ ըստ: Մատթ. ԻԴ. 36:
 18. Կրնա՞յ մէկը որոշել այն ժամանակը:
 19. Ի՞նչպէս պիտի գիտնանք անոր գալստեան ժամանակը: Մատթ. ԻԴ. 42—44:
 20. Անոր գալստեան եղանակն ի՞նչպէս պիտի ըլլայ: Հմր. 45: Մատթ. ԻԴ. 30, 31: Գործ. Ա. 11:
 21. Անստեն ի՞նչ պիտի պատահի: Մատթ. ԻԵ. 34—34, 41, 46:
 22. Ի՞նչ պիտի պատահի հաւատացելոց: Հմր. 16:
 23. Այս վարդապետութենէն ի՞նչ օգուտ քաղելու ենք: Հմր. 17:

24. Ի՞նչ է անոնց մնձագոյն մխիթարութիւնը որ զՔրիստոս կը սիրեն: Ա. Յովհ. Գ. 2:

Այս գասին պատմութիւնը կրնա՞ն համաւոտիւ կըկնել:

Մանուկութեան:

(1) Կորնթոսի մէջ յամի Տն. 52: Այս առաջին թուղթն է զոր գրեց Պօղոս:

(2) Սէլանիկ:

(3) Պօղոս կ'ուղէր մխիթարել զանոնք որ կը վախնային թէ իրենց մնուեալ բարեկամենը պիտի մոոցուեին Քրիստոսի գալստեան ատենը, կամ թէ քան ողջ մնացողներն ատորին վիճակի մէջ պիտի ըլլային:

(4) Պօղոս կ'ուղէ ցուցնել անոնց վիճակը որ Քրիստոսի գալստեան ատենը գեռ ողջ պիտի գըտնուեին. «Անք» բառն իրը օրինակ կը գործածէ:

(5) Որովհետեւ Պօղոսի նպատակը հոս պարզապէս յիշել է Քրիստոսի գալստեան ժամանակին մխիթարական գէպքերը, կը թողու նկարագրել վիրջին դատաստանին հաւոր տեսարանը:

Դէմուռութեան:

Քրիստոսի գալուստն ի կատարածի աշխարհիս կրնայ շատ հեռու ըլլալ, բայց անոր գալուստը մենէ ամէն մէկուն առանձին՝ չի կրնար շատ հեռու ըլլալ: — Այն օրը որ հաշիւ պիտի պահանջուի, «չ ոք կրնայ մոոցուիլ կամ զանց առնուիլ: — Զարերը

Հեն կրնար յուսալ ազատիլ պատմէ , եւ արդարները
չեն կրնար դրկուիլ արդար հատուցում ընդունելէ :
—Քրիստոսի հետ ըլլալ ճշմարիտ հաւատացելոյն
համար արքայութիւն է :

ԼԵ · ԴԱՍ · ՍԵՊՏԵՄԲԵՐ 14

Քրիստոնեան աշխարհի մէջ

Ա. Տիմ. Զ. 6—16

ԲԵՐՆԱԿ ԱՐԴէ 9—12 համարներ :

Ուուշլին համար . « Անոնք աշխարհէ չեն , ինչպէս
որ ես աշխարհէ չեմ» Յոզէ . Ժէ . 16 :

1. Տիմոթէոսի , անոր ծննդեան քաղքին , ծնողա-
ցը , կրթութեանը եւ Պօղոսի աշակերտելուն եղա-
նակին վրայ ի՞նչ կրնաս ըսել : Գործ . Ժ. 4—3 :
Բ. Տիմ. Ա. 5, 6 :

2. Ի՞նչ բանի համար ըսուած է հոս թէ մեծ շա-
հավաճառութիւն է : Հմր . 6 :

3. Խնչո՞ւ համար աստուածակաշտութիւնը գոհու-
նակութիւն յառաջ կը բերէ : Երր . Ժ. 5 :

4. Ի՞նչ շահ կայ աստուածակաշտութեան մէջ :
Քլ . Դ. 8 :

5. Ի՞նչ բաներով բաւականանալու հնք : Հմր . 8 :

6. Խնչո՞ւ համար : Հմր . 7 :

7. Ի՞նչ էր Ագուրին աղօթքը : Առակ . Լ . 8 :

8. Ի՞նչ է հարուստներուն վտանգը , եւ ի՞նչ՝ աղ-
քատութեան վտանգը : Առակ . Լ . 9 :

9. Ի՞նչ բանի բաղձալ կը աղբեցնէ մեղի Քրիս-
տոս : Մատթ . Զ . 11 :

10. Ի՞նչ չարիք կու գայ այն մարդուն որ հարցս-
տանալ կ'ուզէ : Հմր . 9 :

11. Խնչո՞ւ համար : Հմր . 10 :

12. Հարուստ մարդու մը փրկուիլ դիւրի՞ն է :
Մատթ . ԺԹ . 23 , 24 :

13. Հարուստ մարդն ի՞նչ բանի վստահանալու
միտեալ է : Սաղմ . ԾԲ . 7 : Մարկ . Ժ . 24 :

14. Հարուստը ի՞նչ բանի վրայ դնելու է իր յոյար :
Հմր . 17 :

15. Հարուստ մը ի՞նչպէս գործածելու է իր ստա-
կը : Հմր . 18 :

16. Այսպէս գործածելով իր ստակը , իր անձին
ի՞նչ կը պատրաստէ : Հմր . 19 : Մատթ . ԺԹ . 21 :
Ղուկ . ԺԲ . 33 , 34 : ԺԶ . 9 :

17. Ի՞նչ առաքինութեանց ետեւէն երթալ կը պա-
տուիրէ Պօղոս Տիմոթէոսի : Հմր . 11 :

18. Ի՞նչ պատերազմ պատերազմելու էր , եւ ի՞նչ
բան բռնելու էր : Հմր . 12 :

19. Ի՞նչ դաւանութիւն դաւանած էր Տիմոթէոս :
Երր . Ժ . 23 :

20. Ի՞նչ բան պահել կը պատուիրէ Պօղոս Տիմո-
թէոսի , եւ որո՞ւ առջեւ եւ մինչեւ ե՞րբ : Հմր .
13 , 14 :

21. Ի՞նչ պատուէր կ'ակնարկուի հոս :

22. Ի՞նչ ըսել կ'ուզէ Պօղոս սա խօսքով , « Ան
պատուէրը անարատ պահես մինչեւ մեր Տէրոջը Ցի-
սուս Քրիստոսի յայսնութիւնը » :

23. Քրիստոս հոս ի՞նչ կոչուած է : Հմր . 15 :
10

24. Ի՞նչ աստուածային յատկութիւններ ունի Քրիստոս, եւ ի՞նչ պատիւ կը վայլէ անոր : Հմր. 46 :

25. Այս խրամները կը վերաբերի՞ն նաեւ մեղի այնչափ՝ որչափ կը վերաբերէին Տիմոթէոսի :

Այս դասին պատմութիւնը կրնա՞ն համառ ուօտիւ կրկնել :

Ծանօթութիւն +

(1) Ա. Գլխոյն Յ համարին նայելով ոմանք կը կարծեն թէ այս առաջին թուղթն առ Տիմոթէոս գրուեցաւ Մակեդոնիայէն : Հին աւանդութիւն մը կայ թէ այն թուղթը Լաւոդիկիայէն գրուեցաւ, բայց հաւանականագոյն է թէ գրուեցաւ Հոռմէն յամի Տն . իբր 62 : Տիմոթէոս անատեն հաւանականապէս Եփեսոս էր : Գլ. Ա. 3 :

(19) Այս դաւանութիւնն էր թերեւս այն ընդհանուր դաւանութիւնը որով դաւանած էր զՔրիստոս հեթանոսաց առջեւ, կամ թերեւս կը նշանակէ մասնաւորապէս անոր համբերութիւնը որով տարաւ բանտարկութեան յանուն Քրիստոսի :

(21) Թերեւս կ'ակնարկուին այս թուղթին մէջ տրուած բոլոր պատուէրները :

(22) Ըսել կ'ուղէ, մինչեւ այն յայանութիւնը որ պիտի ըլլար Տիմոթէոսի, երբ հանդերձեալ աշխարհը բացուէր առաջին անգամ անոր առջեւ, կամ մինչեւ որ Քրիստոս մահուան ատենը երեւնար անոր :

Դէմուշ-Ռէն +

Մարդ շատ ստացուածք ունենալով երջանիկ չըլլար, այլ իր ստացուածքն աղէկ գործածելով : — Հարստութիւնը կրնայ այնպէս գործածուիլ որ փրկութեան միջոց ըլլայ, բայց աւելի դիւրին է որ հոգւոյն կարստեան պատճառ ըլլայ : — Ոչ թէ տալն ինքնին փրկութիւն է, այլ կը նշանակէ միայն թէ տուողը բոլորովին նուիրած է Աստուծոյ իր հոգին, մարմինը եւ ինչքը :

Լ. Դ. Դ. Ս. Ս. ՍԵՊՏԵՄԲԵՐ 21

Քրիստոնեայ քաղաքացին

Տիտ. Գ. 4—9

Բէնուց առլիք 4—5 հայտնելը :

Ուկեղէն համար . « Ան որ Կայսրինն է՝ Կայսրին տուէք, եւ ան որ Աստուծոյն է՝ Աստուծոյ տուէք » Մատթ. ԽԲ. 21 :

1. Տիտոսի եւ այս թուղթին պատմութեան վրայ ի՞նչ կրնաս ըսել : Գաղ. Բ. 4—3 : Գլ. Ա. 5, Հմր. 12 :

2. Տիտոս ինչպիսի՞ մարդոց հետ պիտի վարուէր սրեւէի մէջ : Գլ. Ա. 12 :

3. Ի՞նչպէս քարոզել Արետացւոց կը պատուիրէ Պօլոս Տիտոսի : Գլ. Ա. 13 :

4. Կշխանութեան աէր մարդոց հնազանդելու մասին Տիտոս ի՞նչ պիտի սորվեցնէր Կրետացւոց Հմր. 1 :

5. Օրինաց եւ կառավարչաց նպատակն ի՞նչ է :
- Ա. Պետ . Բ . 13, 14, Հոռվմ . ԺԳ . 3, 4 :
6. Թագաւորք եւ կառավարիչք ուստի՝ կ'առնուն իրենց իշխանութիւնը : Հոռվմ . ԺԳ . 4 :
7. Թագաւորի մը հակառակիլը որո՞ւ հակառակիլ է : Հոռվմ . ԺԳ . 2 :
8. Օրինաւոր հպատակի մը պարտականութիւնն ի՞նչ է ուրեմն : Հոռվմ . ԺԳ . 5—7 :
9. Քրիստոնեայք ուրիշ կրօնքէ եղող իշխաններու ալ այսպէս հնազանդելու պարտակա՞ն են : Մատթ . ԽԲ . 17—21 :
10. Երբ իշխանք փոխանակ պաշտպանելու արդարութիւնը իրեւ Աստուծմէ կարգեալ պաշտօնեանեաներ , կը սկսին անիրաւութեան եւ հարստահարութեան պաշտպան ըլլալ , ժողովուրդը առակաւին պարտակա՞ն է հնազանդել անոնց : Գործ . Դ . 18 , 19 : Ե . 28 , 29 :
11. Ուրիշ մարդոց հետ վարուելու մէջ ի՞նչ ընելու , եւ ի՞նչ բանէ զգուշանալու ենք : Հմր . 2 :
12. Ուրիշի մը վրայ չար խօսեն ի՞նչ է : Տես Եփես . Դ . 31 :
13. Պօղոս Քրիստոսի աշակերտներուն համար ի՞նչ կ'ըսէ թէ էին ժամանակաւ : Հմր . 3 :
14. Ի՞նչ բան յայտնուեցաւ անոնց համար : Հմր . 4 :
15. Ի՞նչ բանով փրկեց Աստուծած զանոնք , եւ ի՞նչ բանի համեմատ : Հմր . 5 :
16. Ի՞նչ բան առատօրէն թափուած է մեր վրայ : Հմր . 6 :
17. Ի՞նչ բանով արդարացած ենք , եւ ի՞նչ բանի ժառանդ եղած ենք : Հմր . 7 :

18. Ի՞նչ բան կ'ուղէր Պօղոս որ Տիառոս քարողէր ժողովրդեան որպէս զի հոգ տանէին : Հմր . 8, 14 :
19. Այսպիսի բարի գործքեր կը փրկե՞ն զմարդ : Հմր . 5 : Եփես . Բ . 8, 9 :
20. Ի՞նչ է ուրեմն բարի գործոց մասնաւոր օդուար : Յակ . Բ . 20—26 : Մատթ . Է . 20 : ԺԲ . 35—37 :
21. Պօղոս ի՞նչ բանէ զգուշանալ կը յորդորէ զՏիառոս : Հմր . 9 :
22. Բայց ժողովրդեան մէջ ի՞նչ բաներու պիտի հակառակէր : Գլ . Ա . 14 :
23. Տիառոս ի՞նչպէս կրնար ընել այս բանը առանց վիճաբանելու : Ա. Կոր . Ա . 20—24 :

Այս դասին պատմութիւնը կը նաև համառօտիւ կրկնել :

Ծանօթականութեան +

- (1) Զենք գլխեր թէ ուր ծնած էր Տիառոս : Հաւանական է թէ Յոյն էր , եւ , երբ այս թուղթը կը զրուէր , կ'աշխատէր Կրետէ : Ոմանք կը կարծեն թէ Պօղոս զրեց այս թուղթը Նիկոպոլիսէն , բայց հաւանական է մանաւանդ թէ այս թուղթը զրուեցաւ Հոռմէն Տիմոթէոսի Ա . Թուղթէն քիչ ետքը :
- (10) Ուր խզմի դէմ բան չկայ , մարդիկ օրինաւոր իշխանութեան ընդդիմանալէն առաջ երկար համբերելու են :
- (12) Մէկուն դէմ ատելութեամբ խօսիլը՝ չար խօսիլ է :

(23) Երբ ժողովուրդն անդամ մը կը համօղուի թէ
Քիչստու միայն կրնայ փրկել զանոնք , իսկոյն կը
թողու իր բոլոր յիմարական վէճերը եւ ազդահա-
մարները :

Դիմում-Նիշան

Աղէկ կառավարութիւն մը մարդուս համար երկ-
նային պարգևներուն լաւագոյնն է : — Գէշ կառա-
վարութիւն մը լաւագոյն է քան անիշխանութիւ-
նը : — Խմաստուն եւ առաքինի ժողովուրդ մը գէշ
կառավարութեան մը չի համբերեր : — Ուստի Աս-
տուծոյ խօսքը լաւ է քան զառւր, եւ վարդապետք
ու քարոզիչք լաւ են քան զիմնուրո՞ւ գէշ կառա-
վարութիւն մը բարուքելու : — Փաստերը շատ ան-
դամ աւելի կը հաստատեն զմարդիկ անհաւատու-
թեան մէջ :

ԼԹ. ԴԱՍ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 28

ՀԱՆԴԵՍ

1. Հոռվմայեցւոց թուղթին վրայ ի՞նչ կրնաս ը-
սել : Ի՞նչ է Աստուծոյ խաղաղութիւնը , եւ ի՞նչպէս
կրնանք ստանալ զայն : Ի՞նչ է Աստուծոյ զմնդ սի-
րելուն ապացոյցը , եւ ի՞նչ փաստ վնասուելու ենք
թէ մենք ալ մասնակի՞ց ենք այն սիրոյն : Հոռվմ.
Ե. 4—10 : (Դաս ԻՅ.)

2. Հաւատացելոյն ապահովութեան հիմն ի՞նչ է ,
եւ այն բանն ի՞նչպէս անոր հաւատք եւ քաջալե-

րութիւն կու տայ : Հոռվմ. Ը. 28—39 : (Դաս ԻԾ.)

3. Կորնթացւոց Ա. թղթոյն վրայ ի՞նչ կրնաս ը-
սել : Ի՞նչ են սիրոյ զօրութիւնը եւ յատկութիւն-
ները : Ա. Կոր. ԺԳ. 4—13 : (Դաս ԻԹ.)

4. Ի՞նչպէս կրնաս բացատրել յարութեան վար-
գապետութիւնը , եւ հաւատացեալք ի՞նչպէս մահ-
ուան վրայ յաղթութիւն պիտի ստանան Քրիստոսի
յարութեամբը . Ա. Կորնթ. ԺԵ. 4—58 : (Դաս Լ.)

5. Կորնթացւոց Բ. թղթոյն վրայ ի՞նչ կրնաս
ըսել : Ի՞նչ է հաշտութեան վարդապետութիւնը , եւ
ո՞վ են անոնք որոնց յանձնուած է աշխարհի վրայ
հաշտութեան պաշտօնը : Բ. Կորնթ. Ե. 9—24 : (Դաս
Լ.Ա.)

6. Գաղատացւոց թղթոյն վրայ ի՞նչ կրնաս ըսել :
Ի՞նչ են չողւով սրբով լեցուած մարդուն առաքի-
նութիւնները եւ բարի գործքերը : Գաղ. Ե. 22—26:
Զ. 4—10 : (Դաս ԼԲ.)

7. Եփեսացւոց թղթոյն վրայ ի՞նչ կրնաս ը-
սել : Ի՞նչ է Աստուծոյ սպառազինութիւնը , եւ
Քրիստոնեայք ի՞նչպէս կրնան ըստ արժանւոյն
կոռուիլ այն սպառազինութեամբ : Եփես. Զ. 14—19:
(Դաս ԼԳ.)

8. Փիլիպպեցւոց թղթոյն վրայ ի՞նչ կրնաս պատ-
մել : Ի՞նչ է Քրիստոսի միտքը , ի՞նչ ըրաւ Քրիստոս
այն միտքը յայտնելու համար աշխարհի , եւ մենք
ի՞նչպէս նմանելու ենք Քրիստոսի ոգւոյն : Փիլիպ.
Ե. 4—13 : (Դաս Լ.Դ.)

9. Կողոսացւոց քաղքին եւ թղթոյն վրայ ի՞նչ
կրնաս ըսել : Ի՞նչ են եղայրներուն պարտիքն առ
միմեանս , նոյնպէս արանց եւ կանանց , ծնողաց եւ

որդւոց, տէրանց եւ ծառայից պարաքերը : կող . գ . 14—25 . դ . 4 : (Դաս 1.Ե.)

10. Թեսաղոնիկէի եւ թեսաղոնիկեցւոց Ա . թղթոյն վրայ ի՞նչ կրնաս ըսել : Քրիստոսի երկրորդ դալըստեան ժամանակին եւ եղանակին վրայ ի՞նչ գիտենք , եւ այս վարդապետութիւնն ի՞նչ միսիթարութիւն ունի բոլոր հաւատացելոց համար : Ա . թես . դ . 12—17 : (Դաս 1.Զ.)

11. Տիմոթէոսի վրայ ի՞նչ կրնաս ըսել : Ի՞նչ է հարուսաներուն վտանգը . հարուստ մը ի՞նչպէս դործածելու է իր հարատութիւնը , եւ մարդ մը ի՞նչպէս կրնայ քիչ բանով երջանիկ ըլլալ : Ա . Տիմ . զ . 6—19 : (Դաս 1.Է.)

12. Տիտոսի վրայ ի՞նչ կրնաս ըսել : Քրիստոնեայք ի՞նչպէս վարուելու են իրենց իշխաններուն հետ , բոլոր մարդոց հետ եւ եկեղեցւոյ մէջ : Տիտ . դ . 4—9 : Հռովմ . ժդ . 4—7 : (Դաս 1.Ը.)



Խ . ԴԱՍ , ՀՈԿՏԵՄԲԵՐ 5

ՄԵՐ մեծ Փահանայապետը

Երր . դ . 14—16 : Ե . 1—6

Բէրնուց սորվէ 14—16 համարները :

Ուկեղէն համար . « Ինքը միշտ կենդանի է անոնց համար բարեխօս ըլլալու » ՊԼ . Ե . 25 :

1 . Երրայեցւոց թուղթը ո՞վ զրեց , ո՞ւր եւ ե՞րբ դրուեցաւ եւ որո՞ւ զրկուեցաւ , ՊԼ . ԺԳ . 23, 24 :

2. Խորայելի ո՞ր ցեղը նուիրեալ էր քահանայութեան պաշտօնին : Թու . դ . 9—13 :

3. Ի՞նչ մասնաւոր պաշտօն յանձնուած էր Ահարոնի եւ անոր որդւոցը : Թու . ԺԸ . 4—7 :

4. Ի՞նչ մասնաւոր եղանակաւ եւ ի՞նչ նպատակի համար օծուած էր քահանայապետը : Ղեւտ . Ը . 12 : Սաղմ . ՃԸ . 2 : ԳԼ . Ե . 1 :

5. Քահանայապետին համար ի՞նչ բնական մաքրութիւն եւ կատարելութիւն հարկաւոր էր : Ղեւտ . ԽԱ . 10—13 , 21 :

6. Ո՞ւր քահանայապետը միայն կրնար մտնել , ո՞րչափ անդամ , եւ ի՞նչ նպատակաւ : ԵԼ . 1 . 10 : Ղեւտ . ԺԸ . 2 : ԳԼ . Թ . 7 :

7. Ինչո՞ւ համար այսպիսի քահանայապետ մը զթած ըլլալու էր : ԳԼ . Ե . 2 :

8. Ինչո՞ւ համար ինչպէս ժողովրդեան նոյնպէս քահանայապետին համար հարկաւոր էր քաւութիւն : ԳԼ . Ե . 3 :

9. Ի՞նչպէս Ահարոն այսպիսի պաշտօնի մը պատիւը ստացաւ : ԳԼ . Ե . 4 :

10. ԶՔրիստոս ո՞վ կանչեց այս պատուոյն : ԳԼ . Ե . 5 :

11. Ի՞նչ կարգի պէս քահանայապետ էր Քրիստոս : ԳԼ . Ե . 6 : Սաղմ . ՃԸ . 4 :

12. Մելքիսեդեկի բաց ի քահանայութենէ ուրիշ ի՞նչ պաշտօն ունէր : ԳԼ . Ե . 4 , 2 :

13. Մելքիսեդեկի ազդաբանութեան վրայ ի՞նչ ըսուած է : ԳԼ . Ե . 3 :

14. Այս բաներուն կողմանէ Քրիստոս նմա՞ն էր Մելքիսեդեկի : ԵԱ . ԾԳ . 8 : Գործ . Ը . 33 : Յայտ . ԺԸ . 14 :

15. Ի՞նչպէս կը ցուցուի թէ Մելքիսեդեկի կարգը գերազանց է քան Ղեւտականը։ Գլ. Ե. 4—10։
 16. Ո՞ւր է մեծ քահանայապետը։ Գլ. Դ. 14։
 17. Ի՞նչ բան ամուր բռնելու ենք։
 18. Ի՞նչ է մեր դաւանութիւնը։
 19. Ի՞նչ կերպով մեղի նման եղաւ այս քահանա- յապետը։ Գլ. Դ. 15; Ես. ԾԳ. 3—6։
 20. Ի՞նչ մասնաւոր փորձութիւն ունեցաւ Քրիստոս Տապէ. Դ. 4—11։
 21. Քրիստոս ուրիշ փորձութիւններ ունեցա՞ւ։ Կուկ. ԻԲ. 28։
 22. Քրիստոս փորձութենէ յաղթուեցա՞ւ։ Բ Կոր. Ե. 24։ Գլ. Ե. 26։
 23. Կրնա՞յ ուրեմն մեղի օգնել փորձութեան դէմ դնելու։
 24. Ի՞նչ պատահեցաւ, երբ Քրիստոս խաչուեցաւ։ Մատթ. ԻԵ. 54։
 25. Տաճարին վարագուրին պատառումը լ՞ոնչ կը նշանակէր։ Գլ. Փ. 19, 20։
 26. Ուստի ի՞նչ ընել կը խրատուինք։ Գլ. Դ. 16։ Ճ. 24, 22։
 27. Զ՞ո՞վ բռնելու ենք իրբեւ մեր միմիայն եւ բա- ւական քահանայապետը, եւ ինչո՞ւ համար։ Գլ. Ե. 24, 25։

Այս դասին պատմութիւնը կրնա՞ն համա- ուօտիւ կրկնել։

Ծանօթութեան

(1) Մելքիչներուն մեծ մասը միաբան են թէ Պօղոս էր այս թղթոյն հեղինակը, եւ թէ թուղթը

գրուեցաւ Հռոմէն յամի Տն. իբր 63 Երուսաղեմի եկեղեցւոյն։ Փանի մը մասնաւոր պատճառներու համար Պօղոս զանց ըրաւ իր անունը դնել, ինչպէս ուրիշ անդամներ դնել սորվոր էր։

(13) Այսինքն, Մելքիսեդեկի ազգահամարը յիշ- ուած չէ, ոչ ալ անոր քահանայութեան սկիզբը եւ վերջը, մինչ Ղեւտացւոցը յիշուած է, այս պատ- ճառաւ կրնանք զՄելքիսեդեկ եւ անոր քահանա- յութիւնն իրբեւ անսկիզբ եւ անվերջ նկատել։

(20) Որովհետեւ Քրիստոս ամէն կողմանէ փոր- ձուեցաւ մեղի պէս, յայտնի է թէ զիտէ բոլոր փորձութիւնները որոնց նշաւակ ենք։

Դէպուանեան

Ըսել թէ մեր եւ Քրիստոսի մէջտեղ միջնորդ հարկաւոր է, ըսել է թէ Քրիստոս սուտ է երբ կը հրաւիրէ զմեղ ուղղակի եւ համարձակութեամբ ի- րեն դիմել։ — Քրիստոսի երթալու վարանիլ, կամ ուրիշ միջնորդներու դիմել՝ անպատճութիւն եւ ցաւ է անոր։ — Ինչո՞ւ համար ուրիշ միջնորդ ու- ղենք, մինչ ունինք ամենազութ եւ ամենազօր կենդանի քահանայապետ մը որ է Քրիստոս, մեր Քրկիչը։

ԽԱ. ԴԱՍ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 12

ՕՐԻՆԱԼԻՆԵՐԸ կը մելինուին

ԵՐՐ. Թ. 4—12

ԲԵՐՆԱԳ ԱՐԴ 8—12 համարները :

Ո՞ւի՞լէն համար . « Խնչու որ մէկ պատարագով մը մշտիղնաւորապէս կատարեց սրբուածները » ԳԼ. Ժ. 44:

1. Առաջին ուխտը ի՞նչ ունէր : Հմր. 1:
2. Խնչո՞ւ համար սուրբ տեղը «աշխարհային» կը կոչուի :
3. Վկայութեան խորանին առաջին մասն ի՞նչ կը կոչուէր , եւ ի՞նչ կը պահուէր հոն : Հմր. 2:
4. Աշտանակները եւ առաջաւորութեան հայն ի՞նչ բանի օրինակ էին : Յայտ. Ա. 20: Մատթ. Ե. 16: Փիլիպ. Բ. 15:
5. Երկրորդ վարագուրէն անդին ի՞նչ կար : Հմր. 3:
6. Սրբութեանց սրբութեան մէջ ի՞նչ կար : Հմր. 4:
7. Ոսկի բուրվառն ի՞նչ բանի նշան էր : Յայտ. Բ. 3,4:
8. Սափորով մանանան ի՞նչ բանի նշան էր : Յով. Զ. 48—51:

9. Ահարոնի գաւազանն ի՞նչ բանի օրինակ էր : Սաղմ. ձժ. 4,2:

10. Ահարոնի գաւազանին ծաղկելն ի՞նչ կը նշանակէր : Թու. Ժ. 5—10:

11. Ուխտի տախտակներուն վրայ ի՞նչ զրուած էր : ԵԼ. Խ. 20: Բ Օր. Ժ. 4,2.

12. Ուխտի տախտանակին վրայ ի՞նչ կար : Հմր. 5:
13. Քերովքէք ի՞նչ բանի նշանակ էին : ԵԼ. Խ. 22:
14. Քահանայք ո՞րչափ անգամ կը մանէին խորանին առաջին մասը , եւ ի՞նչ բանի համար : Հմր. 6:
15. Ո՞վ միայն կրնար մտնել Սրբութեանց սրբութիւնը , ո՞րչափ անգամ եւ ի՞նչ մասնաւոր պատրաստութեամբ : Հմր. 7:

16. Ասով ի՞նչ կը ցուցնէր Հոգին սուրբ : Հմր. 8:
17. Այս արարողութիւններն ինչո՞ւ համար էին , եւ ի՞նչ ընել անկարող էին : Հմր. 9:
18. Այս արարողութիւններն յորո՞ւմ կը կայանային եւ մինչեւ ե՞րբ պիտի տեւէին : Հմր. 10:
19. Վերջապէս ի՞նչ քահանայապետ եկաւ , եւ ի՞նչ տեսակ խորանի մէջ պաշտօն կատարեց : Հմր. 11, 24:
20. Որո՞ւ արեամբ մտաւ սուրբ տեղը , եւ հոն ի՞նչ ստացաւ : Հմր. 12:
21. Այս պատարագը ստէպ կրկնուելու պէտք ունի՞ : Հմր. 23—28:
22. Այս մէկ եւ ամենաբաւական պատարագով Քրիստոս ի՞նչ բան կատարեց : ԳԼ. Ժ. 14:

Այս դասին մէջ ըստածները կրնա՞ս համառօտիւ կրկնել :

Մասնաւոր նշան:

(2) Հրէից սրբարանը նիւթական էր , այլ Քրիստոնէից տաճարը հոգեւոր տաճար է :

(4) Խնչպէս որ աշտանակը հոգեւոր լուսոյ նշանակ էր , նոյնպէս առաջաւորութեան հացը նշանակ

Եթ հոգեւոր կերակրոյ զոր մարդիկ կը վայելեն եւ կաղեցւոյ մատակարարութեամբ։

(9) Գաւազանը նշանակ էր իշխանութեան, եւ հաւանականապէս կը ցուցնէր միծ քահանայապետին Քրիստոսի թագաւորութիւնը։

Դէպու-Շէնք

Քրիստոնեաներէն շատերը տակաւին կ'ուզեն որ փրկութիւնը կախում ունենայ զոհերէ եւ իմնկարութենէ, որ հին օրինաց պաշտաման մնացողներն են։ — Քրիստոսի տաճարն ամէն անդ է, եւ ամէն մարդ հրաւիրուած է համարձակութեամբ մօտենալ չնորհաց աթոռին բեկեալ եւ զղջացեալ սրտով միայն։ — Յիմարութիւն է լոյսէն եւ Քրիստոսի Աւետարանին ազատութենէն դառնալ հին Հրէական ծեսերու եւ արարողութեամց ծառայութեանը։



ԽԲ. ԳԱՍ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 49

Հաւատոյ յաղթանակը

ԵՐՐ. ԺԱ. 4—10

ԲԵՐՆՈՒՅ ԱՊՀ 4—6 ՀԱՏԱՐԵԼՐԸ։

Ոսէլզն համար. ՛՛Ինչու որ համբերեց՝ որպէս թէ Անտեսանելին կը տեսնէր։» Հմր. 27։

1. Ի՞նչ է հաւատքը։ Հմր. 4։

2. Ի՞նչ է յոյսը։ Հոռվմ. Ը. 24, 25։

3. Հաւատքը եւ յոյսը ի՞նչ յարաբերութիւն ունին իրարու հետ։

4. Առջիններն ի՞նչ ընդունեցին հաւատքով։ Հմր. 2։

5. Ո՞վ էին այս առջինները։ Հմր. 20—24, 31, 32։

6. Հաւատքով ի՞նչ կը հասկնանք։ Հմր. 3։

7. Արարչագործութեան պատմութեան հաւատալու համար տարրե՞ր հաւատք պէտք է քան ուրիշ որեւիցէ պատմութեան հաւատալու համար։

8. Ի՞նչո՞ւ համար։

9. Ի՞նչ կողմանէ Արելի զոհը քան զկայէնինը ընդունելի եղաւ։ Հմր. 4։

10. Արէլ ի՞նչպէս տակաւին կը խօսի։

11. Ենովքայ ի՞նչ պատահեցաւ անոր մեծ հաւատքին համար։ Հմր. 5։

12. Ուրիշներն ալ կրնա՞ն այսպիսի բան մը յուսալ իրենց հաւատքին համար։

13. Մարդ ի՞նչ բանի հաւատալու է որպէս զի ընդունելի կերպով մօտենայ Աստուծոյ։ Հմր. 6։

14. Եթէ մարդ մը որ այսպէս չի հաւատար՝ կ'աշոթէ, ի՞նչ կ'ըլլայ անոր աղօթքը։

15. Կոյ ի՞նչ ըրաւ հաւատքով։ Հմր. 7։

16. Ի՞նչ էր զլիաւոր բանը որուն կը հաւատար Կոյ։

17. Արրահամ ի՞նչ ըրաւ հաւատքով։ Հմր. 8, 9։

18. Արրահամ ի՞նչ բանի կը սպասէր։ Հմր. 10։

19. Ուրիշ ի՞նչ կերպով փորձուեցաւ Արրահամու հաւատքը։ Հմր. 17, 18։

20. Ի՞նչ բան կը հաւատար Արրահամ թէ կրնայ ընել Աստուծած։ Հմր. 19։ Հոռվմ. Գ. 20, 21։

21. Արրահամ իր հաւատքովը ի՞նչ եղաւ բոլոր

հաւատացելոց : Հռովմ . Դ . 41 , 42 :

22. Ի՞նչ զօրութիւն կու տայ հաւատքը : Մատթ . ԺԵ . 49 :

23. Ի՞նչ համբերութիւն կու տայ հաւատքը : Հմր . 27 :

24. Ի՞նչպէս կրնանք ստանալ այս հաւատքը : Մատթ . ԺԵ . 20 :

Այս դասին մէջ ըստածները կրնան համաշոտիւ կրկնել :

Մանօղութեան +

(8) Սրտաքին պատմութեան համար շատ վկայութիւններ կը փնտռենք . արարչագործութեան պատմութեան համար մէկ վկայութիւն միայն ունինք , եւ այս վկայութիւնն իրը ապացուցեալ կ'ենթադրէթէ արդէն կը հաւատանք Աստուծոյ զոյութեանը :

(12) Յարութեան յուսով մեռնիլ լաւադոյն է քան թէ փոխադրուիլ , վասն զի մեռնիլը մաքրուիլ է երկրաւոր ապականութենէ , եւ երկնաւոր մաքրութեան եւ փառաց համար պատրաստուիլ :

Դէղողութեան +

Հաւատքը ինչպէս հոգեւոր նոյնպէս մարմնաւոր իրաց մէջ յաջողելու համար հարկաւոր է : — Աշխարհային հաւատքը կը վերաբերի այն բաներուն որ կը տեսնուին եւ կը ճանչցուին . հոգեւոր հաւատքը կը վերաբերի այն բաներուն որ անտեսանելի աշխարհին կը պատկանին : — Հաւատքով հան-

դերձեալ աշխարհին մէջ յուսացուած բաները կ'ըլլան ներկայ իրեր , եւ այսպէս հաւատոյ միջոցաւ հաճութիւն մը երկիցս կը վայելուի :



ԽԳ . ԴԱՍ , ՀՈԿՏԵՄԲՐԻ 26

Հաւատք և գործը

Յակ . Բ . 44—26

ԲԵՇՆՈՒԹ ԱՐԳ 14—18 ՀԱՅԱՐԴՆԵՐԸ :

Ուկեղն համար . « Քանզի ինչպէս որ մարմինը առանց հողիի մեռած է , նոյնպէս այ հաւատքը առանց զործքերու մեռած է » : ՀՇ . 25 :

1. Յակոբայ թուղթը որո՞ւ ձեռքով , ո՞ւր եւ ե՞րբ զրուեցաւ , եւ որո՞ւ զրկուեցաւ : ԿԼ . Ա . 4 :

2. Հաւատք առանց զործոց ի՞նչ բանի օդակարէ : Հմր . 14 :

3. Առաքեալն ի՞նչպէս կը մեկնէ զայս : Հմր . 15 , 16 :

4. Հաւատոյ թէ զթութեան պակսութենէ է որ մարդ մը այսպէս կը վարուի աղքատաց հատ :

5. Օրինակը զոր կը բերէ հոս առաքեալը յարմա՞ր է :

6. Ի՞նչ տեսակ հաւատքը զուրկ է զործքէ : Հմր . 17 , 20 :

7. Կենդանի հաւատքը ի՞նչպէս կը յայտնուի : Հմր . 18 :

8. Դեւերն ի՞նչ տեսակ հաւատք ունին : Հմր . 19 :

9. Ե՞րբ զիտցան դեւք թէ Քրիստոս Աստուած
է եւ գողացին անոր զօրութենէն : Մատթ . լ . 28
—32 : Մարկ . Ա . 23 , 24 :
10. Կենդանի Աստուծմէ չար մարդիկ նոյնչափ
կը վախնա՞ն :
11. Երբ չարերը կ'ըսեն թէ կը հաւատան Աստու-
ծոյ , ի՞նչ ըսելու ենք անռնց հաւատքին համար :
12. Սբրահամ ի՞նչ բանով արդարացաւ : Հմր . 21 ,
24 :
13. Ի՞նչ բանով արդարացաւ կ'ըսէ Պօղոս Արքա-
համու համար : Հռովմ . Դ . 1—3 :
14. Ի՞նչ տեսակ հաւատք կը հասկնար Պօղոս :
Գաղ . Ե . 6 : Ա . Թես . Ա . 3 :
15. Ըստ Յակոբոսի ի՞նչ է հաւատոյ յարաբերու-
թիւնը գործքի հետ : Հմր . 22 :
16. Ուրեմն Պօղոս եւ Յակոբոս հակառակ են իւ-
րարու : Հմր . 23 : Հռովմ . Դ . 3 :
17. Բախար ի՞նչպէս արդարացաւ : Հմր . 25 :
18. Ի՞նչ օրինակ կը գործածէ Յակոբոս հաւատոյ
եւ գործոց յարաբերութիւնը ցուցնելու համար :
Հմր . 26 :
19. Ուր կենդանի հաւատք կայ , հոն ի՞նչ վիճուե-
լու ենք : Մատթ . Է . 17—20 :
20. Երբ մարդ մը կը դաւանի թէ Քրիստոնեայ է ,
բայց եւ այնպէս չի ցուցներ Քրիստոսի գործերը ,
չշմարտապէս Քրիստոնեայ է :
21. Ուրեմն ի՞նչ միջոցով կրնանք կենդանացնել
եւ զօրացնել մեր հաւատքը :

Այս դասին մէջ ըստածները կրնան համա-
ռութիւ կրկնել :


Ծանօթութեան +

(1) Այս Յակոբոս հաւանականապէս որդի էր Ալ-
փէսի (Մատթ . Ժ . 3) , եւ երբեմն կը կոչուէր
«Ճակոբոս արդար» : Հովիւ էր եկեղեցւոյն երու-
սալիմի (Գործ . ԺԲ . 17 : ԺԵ . 13) ուր զրեց ան-
տարակոյս այս թուղթը : Թուղթին թուականը
ստուգիւ չի գիտցուիր :

(5) Խնչպէս որ գութ ունիմ ըսելը բաւական չէ
առանց գործքով օգնելու , նոյնպէս , առանց ընե-
լու հաւատոյ վայլով գործքեր , հաւատք ունիմ ը-
սելը խարէութիւն է :

Դիտութեան +

Քրիստոնէութիւնը կրնայ կոչուիլ ծառ , որոյ
կեանքն է հաւատքը , եւ պառւղն է այն կեանքին
ապացոյցը եւ արդիւնքը . ուր պառւղ չկայ , յայտնի
է թէ հոն կեանք չկայ : Խնչպէս ծառին ձեւը կը
մնայ , նոյնպէս Քրիստոնէութեան արտաքին ձեւը
կը մնայ բայց քրիստոնէութիւնը մեռած է : — Սա-
տանան շատ հոգիներ կը կորսնցնէ համոզելով զա-
նոնց թէ Քրիստոնէութեան ձեւը բաւական է ա-
ռանց կենդանի հաւատոյ :



Կատարեալ օրինակ

Ա. Պետ . Բ . 19—23

ԲԵՐՆԱԳ ԱՊՀ 19—23 համարները :

Ունէնք համար . «Որ ինք մեղք մի չղործեց ,ու իր բերնին մէջ նենդութիւն մը չդանուեցաւ » Հմր . 22 :

1. Ե՞րբ եւ ո՞ւր զրուեցաւ Պետրոսի առաջին թուղթը , որո՞ւ զրկուեցաւ եւ որո՞ւ ձեռքով : Գլ . Ա . Ե . Ե . 42 , 43 :

2. Երենց տէրերուն հետ ի՞նչպէս վարուիլ կը յորդորէ Պետրոս ծառաները , թէնւ տէրերը խիստ մարդիկ ըլլային : Հմր . 48 :

3. Ի՞նչո՞ւ համար ծառայք այսպէս հնաղանդ ըլլալու էին իրենց տէրանց : Հմր . 49 :

4. «Ու Աստուած ունեցած խղճմտանքով՝ խօսքը միթէ կը ցուցնէ թէ տէրանց խիստ վարժունքը կրօնական հալածո՞ւմ էր :

5. Միթէ դատապարտելի՞ է այն ծառայն որ գէշ տէրը կը թողու :

6. Ի՞նչ տարբերութիւն կայ մեղաց համար չարչարուելուն եւ անմեղ ըլլալով չարչարուելուն մէջ տեղ : Հմր . 20 :

7. Ի՞նչ տարբերութիւն կայ վարձուց ակնկալութեամբ բարի գործելուն եւ առանց այնպիսի ակնկալութեան բարի գործելուն մէջտեղ : Դուկ . Զ . 33 — 35 :

8. Քրիստոսի չարչարանքը ո՞ր տեսակէն էր Հմր . 24 :

9. Այս մասին Քրիստոս մեղի ի՞նչ եղաւ :

10. Միթէ ասկէ մակաբերելո՞ւ ենք թէ Քրիստոնէն կեանքը դժբախտ կեանք է : Բ Կոր . Է . 4 :

11. Քրիստոսի առանց մեղաց ըլլալուն վրայ ի՞նչ ըստած է : Հմր . 22 :

12. Քրիստոս անիրաւութիւններն ի՞նչպէս կ'ընդունէր : Հմր . 23 :

13. Ի՞նչ օրինակ տուաւ մեղի Քրիստոս թէ ինչպէս համբերելու ենք անիրաւութեանց : Մատթ . Ե . 38—42 :

14. Քրիստոս որո՞ւ յանձնեց իր դատը : Հմր . 23 :

15. Զար մարդոց երբէք հակառակելու չե՞նք , այլ միշտ մեր դատը համբերութեամբ յանձննելո՞ւ ենք անոր որ արդարութեամբ կը դատէ :

16. Քրիստոս խաչին վրայ չարչարուելով ի՞նչ կատարեց : Հմր . 24 :

17. Որեւեցէ մարդու չարչարուիլն այն գործը կը կատարէ :

18. Ի՞նչպէս ուրեմն կրնանք նմանիլ Քրիստոսի , ինչպէս ուրիշ բաներու նոյնպէս անոր չարչարանացը մէջ : Մատթ . ԺԱ . 29 : Ա . Յով . Գ . 16 :

19. Այսպէս ամէն բանի մէջ զՔրիստոս մեղի օրինակ բանելով , ի՞նչ բան ընելու կը խրատուինք : Երբ . ԺՅ . 12 :

20. Ի՞նչ էինք , եւ որո՞ւ դարձանք , եթէ ճշմարիտ Քրիստոնեայ ենք : Հմր . 25 :

21. Ի՞նչ մոօք Քրիստոս մեր հողիներուն հովիւը եւ տեսուչն է :

22. Այսպիսի առաջնորդ եւ պաշտպան ունենալով,
այլ եւս ոէջոք է որ բանէ մը վախնանք :

Այս դասին մէջ ըսուածները կընա՞ս համա-
ռոաթիւ կըկնել :

Ծանօթական +

(1) Կրնայ կարծուիլ թէ այս թուղթը Բաբելոնի
մէջ գրուեցաւ, եւ Նիղալի ձեռքով դրկուեցաւ Ա-
սիոյ եկեղեցիներուն: Թուղթին թուականը չի կընար
որոշուիլ:

(4) Երբեմն, անտարակոյս, կրօնական հալածում
էր այն խստութիւնը, բայց ընդհանրապէս ծառայք
համբերութեամբ տանելու էին տառապանաց ծա-
ռայական վիճակին. ուր դրած է զանոնք Աստուած:

(5) Երբեմն. բայց չատ անգամ թողուլը կը մզէ
զանոնք մեծագոյն չարեաց, մինչ համբերութեամբ
տանին անիրաւութեանց օդտակար է ծառայից,
եւ պատիւ կը բերէ Քրիստոսի:

(15) Քրիստոնեայք միշտ պարտին «Խաղաղու-
թեան ետեւէ ըլլալ» (Հոռվմ. Ճ. 19): Շատ ան-
գամ խաղաղութիւնը լաւ եւս կը պահուի պատե-
րազմի պատրաստուելով, նաև անգութ մարդոց
յարձակումներուն դէմ գնելով:

Գլուխութեան +

Քրիստոսի ոգւովը տանելու ենք անիրաւութեան,
եւ պատրաստ ըլլալու ենք զոհել մեր կեանքը, ինչ-
պէս Քրիստոս զոհեց իրենը մարդոց օգտին համար:

— Եթէ մեր աչուբները միշտ կը դարձնենք Ցիստ-
սի իրրեւ մեր առաջնորդին, անհնար է որ խոտո-
րինք ճշմարտութեան եւ արդարութեան չաւղէն: —
Քրիստոսի հետեւելով կը հասնինք վառաց օթեւանը:



ԽԵ. ԴԱՍ, ՆՈՅԵՄԲԵՐ 9

Կատարեալ Փրկիշը

Ա. Յով. Ա. 1—10.

Բէշնուց սորվէ 5—8 համարները:

Ուկելին համար. « Ցիսուս Քրիստոսի արիւնը մեզ
ամէն մեղքէ կը պրէ: » Հմր. 7.

1. Երբ, ո՞ւր եւ որմէ՞ գրուեցաւ այս թուղթը:

2. Առաքեալը ի՞նչ տեսած, լսած եւ չօշափած
էր: Հմր. 4:

3. Կենաց Բան ո՞վ էր: Հմր. 2: Յով. Ա. 14.

4. Քրիստոս ինչո՞ւ համար Բան կոչուած է: Երբ.
Ա. 1, 2:

5. Ինչո՞ւ համար Յովհաննէս վկայեց ինչ որ տե-
սաւ եւ լսեց: Հմր. 3:

6. Ի՞նչ է հաղորդութիւնը, եւ ի՞նչ բանով ա-
զէկ կը պահուի:

7. Ուրիշ ի՞նչ պատճառ ունէր առաքեալն ասոնք
զրելու: Հմր. 4:

8. Ինչո՞ւ համար անոր գրելը ուրախութիւն պի-
տի տար անոնց:

9. Ի՞նչ պատղամ ընդունած էր Յովիաննէս Գրիգորովի : Հմր . 5 :
10. Լոյս եւ խաւար հոս ի՞նչ կը նշանակեն : Սադ . Լէ . 6 : Առակ . Դ . 48 , 49 :
11. Ի՞նչ կողմանէ արդարութիւնը լոյս կը կոչուի , եւ անօրէնութիւնը՝ խաւար :
12. Աստուծոյ հետ հաղորդութիւն ունենալ հնարաւո՞ր է այն մարդուն որ խաւարի մէջ կը շրջի : Հմր . 6 :
13. Ինչո՞ւ համար : Բ Կոր . 9 . 44 :
14. Ի՞նչ հաղորդութիւն ունինք եթէ լուսոյ մէջ կը քալինք , եւ ի՞նչ բանէ կը մաքրուինք : Հմր . 7 :
15. Կրնա՞նք հաղորդութիւն ունենալ Աստուծոյ հետ , եթէ մեր եղբօրը հետ հաղորդութիւն չունինք : Դլ . Դ . 20 :
16. Լուսոյ մէջ քալելը քան զմաքրուին առաջէ , թէ մաքրուիլը պատրաստութիւն է լուսոյ մէջ քալու :
17. Ի՞նչպէս կը խարուինք : Հմր . 8 :
18. Ինչո՞ւ համար : Ժողով . Է . 20 :
19. Մեր մեղքելը խոստովանելով ի՞նչ կը շահինք : Հմր . 9 :
20. Ի՞նչպէս ստախօս կ'ընինք զԱստուծ : Հմր . 10 :
21. Ինչո՞ւ համար :
22. Բարի եւ չար մարդուն նշանն ի՞նչ է : Յովի . Գ . 20 , 21 :


Այս դասին մէջ յիշուածները կրնա՞ն համառութիւններ :

Յահօվուան +

(1) Այս թուղթին ոճը եւ լեզուն այնպէս նման էն Յովիաննու Աւետարանին ոճին եւ լեզուին , որ յայտնի է թէ Յովիաննէս առաքեալ զրեց երկուքն ալ , հաւամսականապէս Եփեսոս , առաջին գարուն վախճանին մօտ :

Դիտուան +

Ինական մարդը կոյր է , եւ այս պատճառաւ չի կրնար որոշել հոգեւոր լոյսը հոգեւոր խաւարէն : — Քրիստոփի սիրոյն հետ միացեալ սիրտերու հաղորդութիւնը երկնից գլխաւոր ուրախութիւնն է երկիր բերուած : — Անմեղ մարդ մը երբէք չի վախճար իր վարուց քննութենէն : — Եթէ մարդ մը քննութենէ վախճալ կը ցուցինէ , նշան է թէ յանցաւոր է :



ԽԶ . ԴԱՍ , ՆՈՅԵՄԲԵՐ 16

Հօրը սէրը

Ա Յովի . Դ . 7—16

Բէրնուաց սուլէ 7—11 համարներ :

Ուկելէն համար . «Մենք զմանիկա կը սիրենք , ինչու որ առաջ անիկա մեզ սիրեց : » Հմր . 19 :

1. Աստուած ի՞նչ է : Հմր . 8 :
2. Սէրն ի՞նչ է :
3. Աստուած ուրիշ ի՞նչ անուամբ կը կոչուի : Երբ . ՓԲ . 29 :
4. Այս երկու խօսքերն ի՞նչպէս կրնաս միաբանել :
5. Եթէ Աստուած սէր է , ի՞նչպէս կրնանք զանի ճանչնալ : Հմր . 8 :
6. Զո՞վ սիրելով : Հմր . 7 :
7. Դիւրի՞ն է սիրել անձ մը զոր տեսած չենք :
8. Ի՞նչպէս կրնանք սիրել ուրեմն զԱստուած զոր երբէք տեսած չենք : Հմր . 12 :
9. Միթէ հնա՞ր է սիրել զԱստուած եւ մեր եղայրն ատել : Հմր . 20 :
10. Առ Աստուած սէր եւ առ մարդիկ սէր մի եւ նոյն բա՞ն են :
11. Ի՞նչ ապացուցիւ կրնանք զիտնալ թէ կը սիրենք զԱստուած , եւ թէ Աստուած կը բնակի ՚ի մեղ : Հմր . 13 : Դ . Գ . 24 :
12. Ի՞նչ բան խստովանելու ենք ուրեմն : Հմր . 15 :
13. Ի՞նչ բանի մէջ բնակելու ենք : Հմր . 16 :
14. Նախ ուր՞ը կը գտնենք սէր : Հմր . 10 :
15. Աստուած իւր սէրն առ մեղ ի՞նչպէս ցուցուց : Հմր . 9 :
16. Ի՞նչ կը վլայէ առաքեալը : Հմր . 14 :
17. Այս է միմիայն բանը որով Աստուծոյ սէրը կը յայտնուի մեղի :
18. Եթէ Ադամ մեղանչած չըլլար եւ փրկութեան սէտք չըլլար , Աստուած ուրիշ կերպով մը պիտի չյայտնէ՞ր իւր մեծ սէրն առ մարդիկ :
19. Եթէ Աստուած այսպէս սիրեց զմեղ , մենք

- ի՞նչ ընելու ենք : Հմր . 11 : Մատթ . ԺԸ . 33 :
20. Կատարեալ սէրն ի՞նչ բան կը մերժէ : Հմր . 18 :
21. Սէրը մեղ ո՞ր օրուան կը պատրաստէ : Հմր . 17 :
22. Եթէ նախ Քրիստոս սիրած չըլլար զմեղ , մենք երբէք պիտի սիրէի՞նք զանի : Հմր . 19 :

Այս դասին պատմութիւնը կրնան համաւոտիւ կրկնել :

Յանօնաւունիւն +

(2) Ըստ արժանւոյն հասկնալու համար թէ ինչ է սէրն , պէտք է զիտնալ սիրոց գործքերը որ լիովին բացարուած են Կողնթացւոց Ա . թղթոյն ԺԳ . գլուխոյն մէջ :

(4) Աստուած չի գագրիր սիրէլէ նոյն խալ չարեւը (Հոռլ . Ե . 8) , մինչեւ որ անոնք ի սպառ կը մերժեն ապաշխարութիւնը . անստեն Աստուած անոնց համար կ'ըլլայ «մաշող կրակ» : (Յայտ . Ե . 14 :)


(10) Երենց առարկային կողմանէ , նաեւ իրենց աստիճանին եւ սաստկութեան կողմանէ կը տարբերին իրարմէ , բայց ըստ էութեան երկու տեսակն ալ մէկ են :

(17, 18) Աստուծոյ սիրոյն մեծագոյն ապացոյցն առ է որ իւր Որդին մեղի համար տուաւ : Թէ քանի զայս մեծ սէր կը մարտ ցուցնել , չենք զիտեր :

Դէռաջնունիւն +

Երբ զԱստուած կը սիրենք , կը ստիպուինք անոր հետ համաձայն ըլլալ , եւ այսպէս բոլոր մարդիկ կը սիրենք , ինչպէս Աստուած կը սիրէ : — Որովհե-

տեւ Աստուած այսպէս սիրեց զմարդիկ , չարաչար կը մեղանչենք , եթէ չենք ուղեր սիրել զԱստուած : — Որովհետեւ Աստուծոյ սիրոյն լրութեանը մէջ ընդունուիլ կատարեալ երանութիւն է , ապա սիրոյ օգուտներէն դրկուիլը կատարեալ դժոխը է :



Խէ. ԴԱՍ , ՆՈՅԵՄԲԵՐ 23

Պատգամ առ Եկեղեցիս

Յայտ . Գ . 1—13

Բէրնուց առլէ 1—5 համարները :

Ուիշչն համար . «Ունեցածդ ամուր բռնէ որ մէկը չառնէ պապկի : » Հմր . 11 :

1. Ո՞վ գրեց այս գիրքը , եւ ի՞նչ բանի յայտնութիւն է այն : Գլ . Ա . 1 :

2. Ո՞քափ եւ ո՞ր եկեղեցիներուն պատգամ դրեց Յովիաննէս : Գլ . Ա . 4 , 11 :

3. Ո՞ւր էր Յովիաննէս երբ այս գիրքը դրեց , եւ ինչո՞ւ համար հոն էր : Գլ . Ա . 9 :

4. Սարդիկէի եկեղեցւոյն ի՞նչ պատգամ տալ հրամայուեցաւ Յովիաննու : Հմր . 1 :

5. Աստուծոյ եօթը հոգիներն ի՞նչ են : Գլ . Դ . 5 : Ե . 6 :

6. Ի՞նչ են եօթն աստեղք . Գլ . Ա . 20 :

7. Ի՞նչ տեսակ կեանք կը մնար տակաւին Սարդիկէի եկեղեցւոյն վրայ , եւ ինչ տեսակ մահ եկած էր անոր :

8. Ի՞նչ ընել խրատ տրուեցաւ այն եկեղեցւոյն : Հմր . 2 :

9. Ի՞նչ բան յիշել խրատ տրուեցաւ , ապա թէ ոչ ի՞նչ պիտի գար անոր վրայ : Հմր . 3 :

10. Ի՞նչ մտօք Քրիստոս իրեն գող պիտի գայ : Մարկ . ԺԳ . 36 :

11. Սարդիկէի մէջ քիչերուն համար ի՞նչ ըստ Հոգին : Հմր . 4 :

12. Ի՞նչ տեսակ աղտեղութիւն կ'ակնարկուի հոս , եւ ճերմակներ հագնին ի՞նչ կը նշանակէ : Գլ . Ե . 13, 14 :

13. Ո՞վ այսպէս պիտի հագուի , ո՞ւր պիտի դրուի անոր անունը , եւ ո՞վ պիտի դաւանի այն անունը : Հմր . 5 :

14. Ի՞նչ կը նշանակէ , «Ան որ ականջ ունի՝ թող լոէ» Հմր . 6 , 13 :

15. Ամէն մարդու համար ըստւա՞ծ է այս :

16. Ո՞վ կը խօսի Փիղագեղիմայի եկեղեցւոյն : Հմր . 7 : Գործ . Գ . 14 : Ա . Յով . Ե . 20 :

17. Ի՞նչ էր Դաւթի բանալին , եւ անով ի՞նչ պիտի ընէր Քրիստոս : Գլ . Ա . 18 : Եսայ . ԽԲ . 22 : Ղուկ . Ա . 32 :

18. Քրիստոս ի՞նչ դրած էր այս եկեղեցւոյն առջեւ : Հմր . 8 :

19. Բացուած գուռ ի՞նչ կը նշանակէ : Բ Կորնթ . Բ . 12 : Կոռ . Գ . 3 :

20. Ի՞նչ կը սպառնացուի Սատանայի ժողովրէն Եղողներուն որ զիրենք Հրեայ կանուաննեն : Հմր . 9 :

21. Այս եկեղեցւոյն ի՞նչ կը խոստացուի , եւ ինչո՞ւ համար : Հմր . 10 :

22. Ի՞նչ բան ամուր քռնել կը յորդորուի, եւ ինչ
չո՞ւ համար: Հմր. 11:
23. Ի՞նչպէս կրնայ մարդ մը երկնային պսակն
առնել ուրիշի մը դլիսէն:
24. «Շուտով կու զամ» խօսքն ի՞նչպէս հասկնաւ
լու ևնք:
25. Յաղթողին ի՞նչ կը խօստացուի: Հմր. 12:
26. Աստուծոյ տաճարին մէջ սիւն ըլլալն ի՞նչ կը
նշանակէ: Գալ. Բ. 9:
27. Մարդու մը վրայ Աստուծոյ եւ Քրիստոսի եւ
նոր Երուսաղեմին անունը գրել ի՞նչ կը նշանակէ:

**Այս դասին մէջ բառաձները կը նաև՝
համառօտիւ կը կնել:**

Մանօնութիւն:

(5) «Եօթը Հոգիները» կ'երեւի թէ կը ցուցնեն
Աստուծոյ ամենու բեքութիւնը:

(7) Քիչ մը առաքինութիւնը եւ թեթեւ հոգեւոր
կեանք որ տակաւին կը մնար:

(17) Բանալին հոս իշխանութեան մտօք դործած-
ուած է:

(20) Այս խօսքը կ'ակնարկէ թերեւս մասնաւոր
ժողովուրդ մը Փիղադեղիփոյ մէջ, կամ թերեւս
կ'ակնարկէ բոլոր Հրեից եկեղեցին, որ վերջապէս
պիտի հպատակէր Քրիստոսի իշխանութեանը:

(24) Քրիստոս որ եւիցէ մարդու հետ հաշիւ տես-
նելու պիտի չուշանայ:

(25) Կը նշանակէ թէ Քրիստոս այն մարդունն է,
եւ այն մարդը՝ Քրիստոսի:

Դէֆուլունէն:

Պատերազմելով եւ յաղթելով միայն կը ստացուի
պսակը, եւ անուու հսկողութեամբ միայն կը պահ-
ուի: — Երբ Քրիստոս կը գրէ իւր անունը մարդու
մը վրայ, անտաեն միայն յարդ կ'ունենայ անու-
նը: — Երբ մարդ մը կը գրէ իւր վրայ Քրիս-
տոսի անունը, կեզծաւոր է այնպիսին եւ աւելի
վեաս կ'ընէ քան Քրիստոսի յայտնի մէկ թշնամին:
— Եկեղեցիներ եւ առանձին Քրիստոնեայ մարդիկ
միջոց եւ պատեհութիւն վնասելու. են միշտ օգ-
տակար ըլլալու ուրիշներուն:



ԽԸ. ԴԱՍ, ՆՈՅԵՄԲԵՐ 30

Փառաւորեալ Փրկիչը

Յայտ. Ա. 40—20

Բէրնուց սորչէ 12—18 համարները:

Ուէկէն համար. «Ես եմ Ալֆա եւ Օմեցա, կ'ըսէ
Տէր (Աստուծ), որ է եւ որ էր եւ որ պիտի գայ՝
Ամենակալը» Հմր. 8:

1. Ո՞ւր էր Յովհաննէս Տէրունական, այսինքն
Կրակի օրը, եւ ի՞նչ լսեց: Հմր. 40:

2. Ի՞նչ օր էր Կիրակի օրը, եւ այս համարէն
ի՞նչ հասկնալու ենք այն օրուան պահպանութեանը
համար: Յովհ. Ա. 19,2: Գործ. Ա. 7: Ա. Կորնթ. ԺԶ. 2:

3. Ի՞նչ ընել հրամայուեցաւ Յովհաննու: Հմր.
44, 49:

4. Յովիաննէս դառնալով ի՞նչ տեսաւ : Հմր . 12 :
5. Ի՞նչ էին եօթն աշտանակները : Հմր . 20 :
6. Այն աշտանակներուն մէջ զո՞վ տեսաւ Յովիաննէս : Հմր . 13 :
7. Ի՞նչ էին այն անձին հանդերձը եւ երեւոյթը : Հմր . 13—16 :
8. Գօտեւորեալ պճղնաւոր ի՞նչ կը նշանակէր : Դուկ . ԺԲ . 35 :
9. Անոր ճերմակ մաղերն ի՞նչ կը նշանակէին : Դան . Ե . 9 : Յովի . Ը . 58 :
10. Անոր կրակի բոցի պէս աչքերն ի՞նչ կը նշանակէին :
11. Անոր ոտքերն ինչո՞ւ համար ոսկեպղնձի նման էին :
12. Շատ ջուրերու ձայնի պէս ձայնը ի՞նչ կը նշանակէր :
13. Աջ ձեռքին մէջ եօթն աստղ ունենալն ի՞նչ նշանակութիւն ունէր :
14. Անոր բերնէն ելած երկրերան սուրն ի՞նչ կը նշանակէր : Եփես . Զ . 17 :
15. Ի՞նչ բանի պիտի գործածէր այն սուրը : ԳԼ . Բ . 16 :
16. Անոր երեսին արեւու պէս փայլելն ի՞նչ կը նշանակէր :
17. Այս փառաւոր անձին տեսիլն ի՞նչ ազդեցութիւն ըրաւ Յովիաննու : Հմր . 17 :
18. Այս բանն ի՞նչպէս քաջալերեց դՅովիաննէս : Հմր . 17, 18 :
19. Ո՞վ էր ուրեմն այն անձը : Հմր . 8 :
20. Ի՞նչ են Ալֆան եւ Օմէդան :

21. Ո՞րը լաւագոյն է , այսպիսի անձ մը մեղի բարեկա՞մ ընել , թէ անոր առջեւը տարուիլ իրեւ մենէ թշնամանեալ դատաւորի առջեւ :

Այս դասին մէջ ըսուածները կրնա՞ս
համառօտիւ կրկնել :

Ծանօթութիւն

(2) Որովհետեւ շաբթուան առաջին օրը սուրբ պահուած էր 'ի պատիւ Քրիստոսի յարութեանը , յայտնի է թէ «կիրակի» այսինքն Տէրունական օր , հոս շաբթուան առաջին օրը կը նշանակէ , եւ մենք պարտական ենք այն օրը հոգեւոր կերպով անցունել , այսինքն 'ի պատիւ Քրիստոսի :

(9) Կը նշանակէին ոչ թէ ծերութեան տկարութիւն , այլ շատ տարիներու վորձառութեան պատիւ եւ իմաստութիւն :

(10) Կը նշանակէին անոր տեսութեան սրութիւնը :

(11) Կը նշանակէին թէ այն ամնձը շատ աշխատութեան կրնար դիմանալ :

(13) Կը նշանակէր թէ անոնց վրայ իշխանութիւն ունէր :

(20) Յունարէն այբուրենին առաջին եւ վերջին գիրելն են :

Դէպողութիւն

Եթէ մենք սորվելու փափաք ցուցնենք , Քրիստոս կը յայտնուի մեղի : — Ինչ որ Քրիստոս կը յայտնէ զրելու ենք բարի գործքերով մեր եւ ուրիշներուն օդախն համար : — Թէպէտ Քրիստոս համբարձաւ եւ

փառաւորուեցաւ չօրմէն, տակաւին երկրիս վրայ
և կեղեցիներուն մէջ կը պատի:



Խթ. ԴԱՍ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 7

Երկնաւոր Երգը

Յայտ. Ե. 4—14

ԲԵՐՆԱՌՅ ԱՊՔԵ 9—12 համաբները :

Ուկէղին համար. «Աս մորթուած Գառնուկը ար-
ժանի է զօրութիւն ու հարստութիւն եւ պատիւ
ու փառք ու օրհնութիւն առնելու» Հմր. 12:

1. Յովհաննէս ի՞նչ տեսաւ: Հմր. 4:
2. Աթոռին վրայ նստողն ո՞վ էր:
3. Գիրքը ի՞նչու համար կնքուած էր եօթը կնքով:
4. Զօրաւոր հրեշտակն ի՞նչ կանչեց: Հմր. 2:
5. Գառնուեցա՞ւ մէկը որ այն գիրքը բանար:
Հմր. 3:
6. Ինչո՞ւ համար չդանուեցաւ մէկը որ այն գիր-
քին նայէր:
7. Այս բանին վրայ Յովհաննէս ի՞նչ զգաց: Հմր. 4:
8. Երեցներէն մին ի՞նչպէս քաջալերեց զՅովհանն-
էս: Հմր. 3:
9. Յուդայի ցեղէն առիւծը եւ Դաւթի արմատը
ո՞վ էր, եւ ինչու համար այսպէս կոչուեցաւ: Ծննդ.
Խթ. 9, 10: Երբ. Ե. 14: Հռոմ. ԺԵ. 12:
10. Ետքը Յովհաննէս ի՞նչ տեսաւ աթոռին մէջ-
տեղ: Հմր. 6:

11. Ի՞նչ էին չորս կենդանիները, եւ ու՞ր էին:
ԳԼ. Դ. 6—8:
12. Ո՞վ էին երիցունք: ԳԼ. Դ. 4:
13. Երբ Գառնուկը զիրքն առաւ, կենդանիք եւ
երէցներն ի՞նչ ըրմն: Հմր. 7, 8:
14. Ի՞նչ երգեցին: Հմր. 9: ԳԼ. ԺԴ. 3:
15. Գրիստոս ի՞նչ իշխանութիւն առած է իր
սուրբերուն: Հմր. 10: Սատթ. ԺԹ. 28:
16. Ուրիշ ո՞վ յարեցաւ երգեցողաց դասին: Հմր. 11:
17. Ի՞նչ էր անոնց երգը: Հմր. 12:
18. Բոլոր արարածք ի՞նչ կըսէին: Հմր. 13: Սաղմ.
Ճել. 7—10: Ես. ԽԳ. 20:
19. Գրիստոսի կրօնքն ի՞նչ կերպով օրհնութիւն
կը բերէ անբան անասնոց: Առակ. ԺԲ. 10:
20. Ի՞նչ կերպով անասունք փառք կու տան Գրիս-
տոսի:
21. Կենդանիները եւ երիցունք ի՞նչ կերպով պա-
տասխանեցին այս փառարանութեան երգին: Հմր. 14:
22. Եթէ երկնաւորաց խումբերն այսպէս կը պատ-
ուեն զՔրիստոս, մենք ի՞նչպէս պատուելու ենք
զանի:
23. Եթէ այս երգը պիտի երգենք երկինքը, հոս
ի՞նչպէս սորվելու ենք երգել: Կող. Գ. 16:

Այս դասին մէջ ըստածները կրնա՞ս
համառօսիւ կըկնել:

Ծանօթեալի անգ

- (2) Անտարակոյս Հայրն Աստուած:
- (3) Եօթն թիւը կատարելութեան նշան էր. Եօթը

կնքով կնքուած ըլլալը կը նշանակէ կատարեալ
կերպով կնքուիլ:

(6) Վասն զի շատ փառաւոր էր:

(14,12) Կենդանիներուն եւ երեցներուն փրկելոց
երգին ձայնակից ըլլալէն (Հմր. 8,9) կ'երեւի թէ
անոնք մասնակից էին, կամ կերպով մը կը վերա-
բերէին մարդկային ազգին: Թերեւս երեցները կը
նշանակեն եկեղեցւոյ պաշտօնեաները: Տասուեր-
կուքը կը նշանակեն Խորայելի տասուերկու ցեղերը,
եւ միւս տասուերկուքը՝ երկոտասան առաքեալները:
Կենդանիները թերեւս կը ցուցնէին երկնային պար-
գեւները որոնց վրայ կը հանգչի եկեղեցին: Առիւծը
կը նշանակէ զօրութիւն, զուարակը կամ եզը կը
նշանակէ համբերութիւն, արծուին՝ արագութիւն
Աստուծոյ հրամանները կատարելու, եւ մարդը կը
ցուցնէ իմաստութիւն: Ետեւէն եւ առջեւէն աչքերը
կը նշանակեն արթնութիւն:

(20) Սիրով եւ ուրախութեամբ ընդունելով Քրիս-
տոսի թագաւորութեան օրհնութիւնները, թէպէտ
չեն դիաեր թէ ուստի կու գան այն օրհնութիւնք.
այսպէս կը յանդիմանեն զանոնք որ գիտեն բայց չեն
ուզեր ճանչնալ այն օրհնութեանց հեղինակը: Տես
Եսայ. Ա. 3, եւ Երեմ. Բ. 7:

Դէֆուլ-Ելի-Նոն

Երգելը, իբր լաւագոյն նշան միաբան փառաբա-
նութեան, պիտի ըլլայ երկինքը սուրբերուն զլխա-
ւոր զբաղումը: — Հարկաւ, փրկելոց հետ Փրկիչը
եւ փրկութիւնը զլխաւոր պատճառք են փառաբա-
նութեան: — Պաշտօն եւ երգ մատուցանելով երկ-

րի վրայ եւ երկինքը, կրնանք ըստ պատշաճի փա-
ռաւորել մեր աստուածային Փրկիչը: — Եթէ այս
ընմենք, քան զանասունս աւելի անբան կ'ըլլանք:



Ծ. ԳԱՍ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 14

Երկնային քաղաքը

Յայտ. ԻԱ. 24—27: ԻԲ. 4—5

Բէրնուց առվել 4—5 համարները:

Ոսկեպէն համար. «Խնչու որ ինքը կը սպասէր ան
հիմերով հաստատուած քաղաքին որուն ճարտարա-
պեազ ու արարիչը Աստուած է:» Եբր. ՃԱ. 10:
1. Յովհաննէս ի՞նչ կը տեսնէր որ վար կիշնէր
երկինքէն: ԳԼ. ԻԱ. 2:

2. Ի՞նչ էր քաղաքին մեծութիւնը եւ ձեւը: ԳԼ
ԻԱ. 16:

3. Ո՞րչափ հիմեր ունէր, եւ ի՞նչ անուններ
զրուած էին անոնց վրայ: ԳԼ. ԻԱ. 14:

4. Ո՞րչափ դուռներ ունէր, եւ ի՞նչ անուններ
զրուած էին անոնց վրայ: ԳԼ. ԻԱ. 12:

5. Ի՞նչ էր պատճառ որ քաղաքը բարձր պարիսպ-
ներ ունէր, եւ հրեշտակներ կը պահէին դուռները:
ԳԼ. ԻԱ. 27:

6. Դուռներն ի՞նչ բանէ չինուած էին, եւ քաղ-
աքին հրապարակն ի՞նչ նիւթէ էր: ԳԼ. ԻԱ. 24:

7. Մեծ մարդարիտ որո՞ւ համար ըստուած է: Մատթ.
ԺԴ. 46: Յով. Ժ. 9:

8. Պարիսպներուն, անոնց ձեւին եւ մեծութեան, մարդարատէ դուռներուն եւ ոսկիէ հրապարակին այլաբանական նշանակութիւնն ի՞նչ է :

9. Այն քաղքին մէջ ի՞նչ տաճար կայ : Գլ. ԻԱ. 22:

10. Ի՞նչ է այն քաղքին լոյսը : Գլ. ԻԱ. 23: ԻԲ. 5:

11. Անոր լուսոյն մէջ ո՞վ պիտի պատի : Գլ. ԻԱ. 24:

12. Երկրիս թագաւորներն ի՞նչ պիտի բերեն հոն : Գլ. ԻԱ. 24, 26:

13. Ինչո՞ւ համար դուռները երբէք չեն դոցուիր : Գլ. ԻԱ. 25:

14. Եթէ երկնից գուռները միշտ բաց են, կրնա՞յ մեղաւորն ըսել երբէք թէ արտաքսուած է երկինքն :

15. Հոն մտնելու պայմանն ի՞նչ է : Գլ. ԻԱ. 27:

16. Ի՞նչ գետ տեսաւ Յովհաննէս, եւ ուստի՞ կը վաղէր այն գետը : Գլ. ԻԲ. 1:

17. Այս գետին եղերքը ի՞նչ ծառ կը բուսնէր, ի՞նչ պտուղ կը բերէր այն ծառը, եւ ի՞նչ բանի կը դործածուէին անոր տերեւները : Գլ. ԻԲ. 2:

18. Ո՞վ պիտի ուտէր այն ծառին պտղէն : Գլ. Բ. 7:

19. Ի՞նչ բան պիտի չըլլայ հոն : Գլ. ԻԲ. 3:

20. Անէծք ի՞նչ կը նշանակէ հոս : Գլ. ԻԱ. 4: Ծննդ. Գ. 46—49:

21. Ի՞նչ արտօնութիւն պիտի ունենան Աստուծոյ ծառաները : Գլ. ԻԲ. 4:

22. Քրիստոսի հետեւողի մը կրնա՞յ աւելի մեծ երջանկութիւն ըլլալ քան զանուիլ հոն ուր միշտ կրնայ տեսնել իւր Փրկչին երես :

Այս դասին մէջ ըստածները կրնա՞ն համաւումիւն կրկնել :

Յանուառնելուն +

(3,4) Երկոտասան ցեղից Խարայելի եւ երկոտասան տուաքելոց անունները որ դուռներուն եւ հիմերուն վրայ գրուած էլն՝ կը ցուցնեն թէ սուրբ քաղաքը կը վերաբերի Հրէական եւ Քրիստոնէական եկեղեցւոյն միանդամայն :

(8) Խորանարդ ձեւը կը ցուցնէ կատարելութիւն, անոր ահազին մեծութիւնը (2,220 հազարամէդը, կամ 4,500 մզոն քառակուսի) կը ցուցնէ թէ բաւական տեղ կայ հոն ամենուն համար . մարգարտէ դուռները եւ ոսկեղին հրապարակը կը ցուցնեն անպատմելի պայծառութիւն :


(12) Ոչ թէ երկրաւոր փառք պիտի մանէր երկինքը այլ երկրաւոր թագաւորք ընդունելով զիրիստոս, պիտի յանձնէին անոր իրենց թագաւորական իշխանութիւնը եւ փառքը :

(17) Խնչպէս որ ծառի տերեւները ձրի կը ցրուին ամէն տեղ, այնպէս այն ծառին բուժիչ զօրութիւնը ձրի կը դրկուի երկրիս ծայրերը :

Գէտուառնելուն +

Պանդուխտը, իբրեւ երկրի վրայ անտէրունջ եւ թափառական, կը փափաքի երկնից, իբրեւ իւր մշտատեւ յաւիտենական տանը : — Խնչպէս երկրի վրայ, նոյնպէս երկինքը կայ ծառայութիւն : — Ամէն կեանք կը բխէ Աստուծմէ : — Քրիստոնեան որ

կենաց հացին ծառէն կերած է՝ միշտ պաղաբեր
պիտի ըլլայ:



ԾԱ. ԴԱ. ԴԵԿԵՄԲԵՐ 21

ՎԵՐԺԻՆ ԽՈՎՔԵՐԸ

Յայտ. ԻԲ. 10—21

ԲԵՐՆԱՌ ԱՐԴՔ 16—21 ՀԱՅԱԳԻՒՅԱՆ:

Ուիշեն համար . «ՄԵՐ ՏԵՐՈՂԸ Յիսուս Քրիստոսի
չնորհքը ձեր ամենուն հետ ըլլայ: Ամէն:» Հմր. 21:

1. Երբ Յովհաննէս այս բաները տեսաւ, ի՞նչ
ըրաւ: Հմր. 8:

2. Հրեշտակը ինչո՞ւ համար չթողուց անոր այն-
պէս ընել: Հմր. 9:

3. Ասէ ի՞նչ պիտի հասկնանք այն ծառայութեան
վրայ զոր սուրբերը կը մատուցանեն երկինքը,
Դուկ. Թ. 30, 34:

4. Հրեշտակը ի՞նչ հրաման տուաւ Յովհաննու և
ինչո՞ւ համար: Հմր. 10:

5. Ե՞րբ պիտի դայ Քրիստոս, և ի՞նչ պիտի բերէ
իրեն հետ: Հմր. 12:

6. Երբ Քրիստոս դայ, ի՞նչ պիտի ըլլայ ամբա-
րիշտներուն և արդարներուն վիճակը: Հմր. 14:

7. Միթէ ամբարիշտք պիտի մնան ամբարիշտ,
վասն զի Աստուած չուղե՞ր որ անոնք իրենց վի-
ճակը փոխեն, Եղեկ. 1.Պ. 14:

8. Ինչո՞ւ համար ուրեմն այլ եւս յոյս չկայ ամ-

րարշտաց դարձին հանդերձեալ կենաց մէջ: ԴԼ. Թ.
20, 24: Բ Տիմ. Գ. 43:

9. Ո՞վ պիտի մանէ սուրբ քաղաքը եւ իրաւունք
պիտի ունենայ կենաց ծառին վրայ: Հմր. 14:

10. Քաղքէն դուրս ո՞վ պիտի մնայ: Հմր. 15:

11. Ի՞նչ տեսակ մարդիկ հոս շուն կը կոչուին: Ես
ԵԶ. 10, 14: Դադ. Ե. 45: Բ Պետ. Բ. 22:

12. Ի՞նչ պիտի ըլլայ դուրս մնացողներուն վիճա-
կը: ԳԼ. ԻՈ. 8:

13. Ո՞վ զրկեց հրեշտակն առ Յովհաննէս: Հմր. 16:

14. Յիսուս ի՞նչ կ'անուանէ զինք: Հմր. 13, 16:

15. Ի՞նչ հրաւեր կը արուի հոս: Հմր. 17:

16. Հարս հոս որո՞ւ համար ըսուած է: Բ Կոր. ԺԱ.
2: ԳԼ. ԺԹ. 7, 8:

17. Այս հրաւերը լսողներն ի՞նչ ընկլու են:

18. Այս գիրքին վրայ բան աւելցնողներուն ի՞նչ
սպառնալիք կայ: Հմր. 18:

19. Այս գիրքին բան պակսեցնողներուն ի՞նչ պի-
տի ըլլայ: Հմր. 19:

20. Բոլոր Սուրբ զրոց վերաբերութիւն ունի՞ այս
սպառնալիքը: Բ ՕՐ. Պ. 2: ԺԲ. 32:

21. Սուրբ Գրոց մէջ չզսնուած վարդապետու-
թիւններ սորվեցնողները, կամ Սուրբ Գրոց մէջ
գտնուած աստուածային ճշմարտութիւններ ուրա-
ցողները կ'աւրե՞ն այս պատուէրը:

22. Քրիստոս ի՞նչ կ'ըսէ իր գալատեան համար, և
Յովհաննէս ինչ պատասխան կու տայ: Հմր. 20:

23. Ի՞նչ աղօթքով, կը վերջանայ Սուրբ գիրքը:
Հմր. 24:

24. Փրկուած է այն մարդը որոյ վրայ այս չնորհքը
կը հանդէի:

23. Այս շնորհքը որուք ունի՞ք թէ ոչ։ Կը սպասէ՞ք
Քրիստոսի դալստեան։

Այս գասին պատմութիւնը կրնա՞ն համա-
ռօտիւ կրկնել։

Յանաբերենեն+


(3) Կը տեսնենք որ հոս մէկը որ զինք Յովհաննու
եւ անոր եղբայրներուն ծառայակից կ'անուանէ կը
կոչուի նաեւ հրեշտակ։

(5) Հանդերձեալ կենաց վարձքը եւ պատիժները
շատ հեռու չեն ո եւ իցէ մարդէ։

(8) Եթէ մարդ մը չուզեր զզջալ եւ հաւատալ այս
կենաց մէջ, յոյս չկայ թէ պիտի զզջայ եւ հաւա-
տայ հանդերձելոյն մէջ։

(11) «Շուն» բառը երբեմն կ'առնուի հեթանոսաց
վրայ (Մատթ. ԺԵ. 26, 27), բայց որովհետեւ հոս
«կուապաշտները» զատ յիշուած են, հաւանական է
թէ շուն բառով կը հասկցուին հոս անոնք որ շան
պէս անձնասէր, կոռւասէր եւ պիղծ են։

Դէքո՞ղութեն+


Երկինքն զրկուած ըլլալը բաւական գժոխք է։
— Աստուծոյ խօսքը մեզի համար կնքուած չէ։ մենք
կարդալու եւ ուրիշներուն սորվեցնելու ենք զայն։
— Ապաշխարութիւնը ուշացնել, յուսալով թէ պա-
տեհութիւն պիտի արուի հանդերձեալ աշխարհին
մէջ ապաշխարելու, յետին աստիճան յիմարութիւն
է։ — Բոլոր լսողները պարտին նաեւ քարոզել։ —

Վատանգաւոր բան է ծռել Աստուծոյ խօսքը մոլար
վարդապետութիւն սորվեցնելով։

ԵԲ. ԴԱՍ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 28

ՀԱՆԴԷՍ

1. Երրայեցւոց թուղթին հեղինակին վրայ ի՞նչ
կրնաս ըսել։ Ո՞վ է մեր մեծ քահանայապետը, եւ
ի՞նչ ընելու կը քաջալերուինք։ Երբ. Դ. 14—16.
Ե. 4—6. (Դաս Խ. 1)

2. Հրէից վկայութեան խորանը ի՞նչ բաներու օ-
րինակ էր, եւ ի՞նչ էր այն բաներուն նշանակու-
թիւնը։ Երբ. Թ. 4—12. (Դաս Խ. 1)

3. Ի՞նչ է հաւատաքը, անոր ի՞նչ օրինակներ կան
չին կտակարանին մէջ, եւ ի՞նչ սորվելու ենք ա-
նոնցմէ։ Երբ. Փ. 4—40. (Դաս Խ. 1)

4. Յակոբայ թուղթը ո՞վ զրեց։ Ե՞րբ եւ ո՞ւր
գրուեցաւ այն թուղթը։ Հաւատք եւ գործք ի՞նչ
յարաբերութիւն ունին իրարու հետ։ Յակ. Բ. 14—
26. (Դաս Խ. 1)

5. Պետրոսի առաջին թղթոյն վրայ ի՞նչ կրնաս ը-
սել։ Ի՞նչ կողմանէ օրինակ ընելու ենք մեզի գիրիս-
տոս։ Ա. Պետ. Բ. 18—25. (Դաս Խ. 1)

6. Յովհաննու առաջին թուղթին համար ի՞նչ
կրնաս ըսել։ Աստուած ի՞նչ է, եւ ի՞նչ է անոր
հետ հազորդ ըլլալու պայմանը։ Ա. Յով. Ա. 4—10.
(Դաս Խ. 1)

7. Աստուած ի՞նչպէս յայտնեց իւր սէրն առ

մեզ, եւ մենք ի՞նչպէս ցուցնելու ենք մեր սէրն
առ Աստուած : Ա. Յովհ : Գ. 7—46 : (Դաս ԽԶ :)

8. Յայտնութեան դիրքը ողու ձեռքով եւ ե՞րբ
գրուեցաւ : Ո՞ր եկեղեցիներուն պատգամ զրկուե-
ցաւ, եւ Սարդիկէի ու Փիղագեղիկոյ եկեղեցիներուն
ի՞նչ սպառնալիք եւ պատուէր տրուեցան : Յայտ .
Ա. 4, 44 : Գ. 4—13 : (Դաս ԽԵ :)

9. Փառաւորեալ Փրկչին հանդերձը եւ երեւոյթն
ի՞նչ էր, եւ յիշուած այլեւայլ բաներն ինչ կը նշա-
նակեն : Յայտ . Ա. 40—20 : (Դաս ԽԲ :)

10. Ի՞նչ կրնաս ըսել չըրս կենդանիներուն եւ
քսան եւ չորս երիցանց վրայ եւ այն երգին վրայ
զոր անոնք եւ բոլոր փրկեալները կ'երգէին : Յայտ.
Ե. 4—44 : Ժ. Գ. 8 : (Դաս ԽԹ :)

11. Նկարագրէ սուրբ քաղաքը եւ անոնց վիճակը
որ հոն կը բնակին : Յայտ . ԻԱ. 4—27 : ԻԲ. 4—5 :
(Դաս Ծ.)

12. Ո՞վ պիտի մտնէ սուրբ քաղաքը, եւ ո՞վ պիտի
դուրս մնայ : Ի՞նչ հրաւէր կայ ամենուն, եւ ինչ
սպառնալիք անոնց որ այն գիրքէն բան մը կը պակ-
սեցնեն կամ անոր վրայ բան կ'աւելցնեն : Յայտ . ԻԲ.
40—24 : (Դաս ԾԱ.)

